ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՅՈՒՐՈ

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԶԵԿՈՒՅՑ 2021Թ.

ՀԱՅԱՍՏԱՆ

Հրապարակվել է 12 ապրիլի 2022թ.

ԱՄՓՈՓԻՉ ԱԿՆԱՐԿ

Ըստ Սահմանադրության Հայաստանը խորհրդարանական հանրապետություն է, որն ունի միապալատ օրենսդիր կառույց՝ Ազգային ժողով (խորհրդարան): Կառավարությունը ղեկավարում է խորհրդարանի կողմից ընտրված վարչապետը, իսկ նախագահը, որը նույնպես ընտրվում է խորհրդարանի կողմից, ունի առավելապես արարողակարգային դերակատարում: Վարչապետ Նիկոլ Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» դաշինքը հունիսի 20-ին կայացած արտահերթ ընտրություններում ստացավ քվեների 54 տոկոսը և գերակշիռ մեծամասնություն խորհրդարանում: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության հովանու ներքո իրականացված միջազգային ընտրական դիտորդական առաքելության հոկտեմբերի 27-ի վերջնական գնահատմամբ ընտրողներն ունեցել են ընտրության լայն հնարավորություն, ընդհանուր առմամբ ընտրությունները եղել են լավ կազմակերպված և մասնակիցները կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել: Ընտրությունները սակայն բնութագրվել են ինտենսիվ սուր բևեռացվածությամբ և սադրիչ հռետորաբանության լայն գործածմամբ: Դիտորդական առաքելությունը նշում էր, որ «բանավեճային միջավայրը ստվերվել է ընդհուպ մինչև ընտրությունների օրը շարունակվող ծայրաստիճան կոշտ, անհանդուրժող, սադրիչ և խտրական հռետորաբանությամբ»: Այլ թերացումների շարքում հիշատակվում են քարոզարշավի միջոցառումներին մասնակցություն ապահովելու հետ կապված ճնշումների դեպքերը, քվեներ գնելու վերաբերյալ հաղորդումները, իշխանական կուսակցության ու պետության միջև ոչ հստակ

սահմանագիծը, վարչական ռեսուրսի չարաշահման մասին հաղորդումները, քարոզարշավի ֆինանսավորման ոչ բավարար իրավակարգավորումները և ընտրական բողոքներ ներկայացնելու հետ կապված իրավունակության նեղ շրջանակը:

Ազգային ոստիկանությունը պատասխանատու է ներքին անվտանգության համար, մինչդեռ Ազգային անվտանգության ծառայությունը պատասխանատու է ազգային անվտանգության, հետախուզական գործունեության, սահմանային հսկողության համար: Հոկտեմբերի 23-ին ձևավորվեց Հակակոռուպցիոն կոմիտեն, որը փոխարինում է Հատուկ քննչական ծառայությանը և որպես անկախ մասնագիտացված մարմին իրականացնում է հանրային պաշտոնյաների ենթադրյալ կոռուպցիոն հանցագործությունների նախաքննությունը: Քննչական կոմիտեն պատասխանատու է ընդհանուր քաղաքացիական և ռազմական քրեական գործերով նախաքննությունների համար և ներառում է քննչական ծառայություններ: Ազգային անվտանգության ծառայության և Ոստիկանության ղեկավարներն ուղղակիորեն հաշվետու են երկրի վարչապետին և նշանակվում են նախագահի կողմից՝ վարչապետի առաջադրմամբ: Քննչական կոմիտեի ղեկավարին նշանակում է Կառավարությունը՝ վարչապետի առաջադրմամբ: Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարին նշանակում է Կառավարությունը՝ ընտրության գործընթացը կազմակերպող հատուկ մրցութային հանձնաժողովի ցուցակով եզրափակիչ փուլ անցած թեկնածուներից: Քաղաքացիական իշխանությունները պահպանել են արդյունավետ վերահսկողություն անվտանգության ուժերի նկատմամբ: Ըստ արժանահավատ հաղորդումների անվտանգության ուժերի կողմից եղել են որոշ չարաշահումներ:

2020թ. նոյեմբերի հրադադարով կանգնեցվեցին 44-օրյա ինտենսիվ ռազմական գործողությունները, որին ներգրավված էին Հայաստանը, Հայաստանի աջակցությունը վայելող անջատողականները և Ադրբեջանը: Տարվա ընթացքում երկու երկրների չսահմանազատված միջազգային սահմանների երկայնքով ու որոշ այլ վայրերում տեղ գտած բռնության առանձին միջադեպերի հետևանքով եղել են զոհեր և գերեվարումներ: Արժանահավատ հաղորդումներ են եղել, որ 2020թ. նոյեմբերի ռազմական գործողությունների ընթացքում և որոշ դեպքերում նաև դրանից հետո էթնիկ հայկական և ադրբեջանական ուժերը թույլ են տվել անօրինական սպանություններ, խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի

դրսևորումներ։ 2020թ. աշնանը և 2016թ. ամռանը տեղի ունեցած մարտական գործողությունների ընթացքում վայրագություններ թույլ տալու մասին Հայաստանի և Ադրբեջանի՝ մեկը մյուսին ուղղված մեղադրանքների հետ կապված Մարդու իրավունքների եվրոպական դատարան ներկայացրած բողոքներով դեռևս վճիռներ կայացված չէին։ 1995թ. ի վեր Լեռնային Ղարաբաղի վերջնական կարգավիճակի հարցը միջազգային միջնորդական ջանքերի առարկա էր՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության Մինսկի խմբի համանախագահների կողմից (Միացյալ Նահանգներ, Ֆրանսիա, Ռուսաստան)։

Մարդու իրավունքների հետ կապված առավել նշանակալի խնդիրներն ըստ արժանահավատ հաղորդումների ներառել են. խոշտանգումներ անվտանգության ուժերի անդամների կողմից. ծանր բանտային պայմաններ. նշանակալի խնդիրներ կապված դատական անկախության հետ, որոնք զուգակցվում են կամայական և ընտրովի կալանավորումներով. կամայական կամ ապօրինի միջամտություն անձնական կյանքին. լուրջ չարաշահումներ հակամարտության շրջանակում, այդ թվում՝ խոշտանգումներ և ֆիզիկական ոտնձգություններ. ազատ խոսքի ու մամուլի լուրջ սահմանափակումներ, այդ թվում՝ վիրավորանքի քրեականացում. մարդկանց թրաֆիքինգ. բռնությամբ կամ բռնության սպառնալիքներով ուղեկցվող հանցանքներ ընդդեմ լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, քվիր կամ ինտերսեքս անձանց. և երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի դրսևորումներ։

Կառավարությունը միայն սահմանափակ քայլեր է ձեռնարկել ներկա և նախկին պետական պաշտոնյաների և իրավապահ կառույցների պաշտոնյաների թույլ տված ենթադրյալ չարաշահումների քննության և նրանց պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ։ Ութ քաղաքացիական անձի և երկու ոստիկանի կյանք խլած 2008թ. հետընտրական բախումներում նախկին կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների հանցավորության հարցով դատավարությունը փլուզվեց այն բանից հետո, երբ Սահմանադրական դատարանն անվավեր ճանաչեց այն հոդվածը, որով հարուցված էր քրեական գործը։ Տարեվերջի դրությամբ խորհրդարանը դեռ չէր ընդունել օրենսդրություն մարդու իրավունքների ոտնահարումների հարցերով փաստահավաք հանձնաժողով ձևավորելու վերաբերյալ։ Կառավարությունը քայլեր է ձեռնարկել կոռուպցիոն հանցանքները քննելու ու պատասխանատվության ենթարկելու նոր մեխանիզմներ մշակելու ուղղությամբ։

ՄԱՍ 1. ՀԱՐԳԱՆՔ ԱՆՁԻ ԱՆՁԵՌՆՄԽԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

ա) Կամայական ձևով կյանքից զրկելը կամ այլ անօրինական կամ քաղաքական սպանություններ

Կառավարության կամ վերջինիս գործակալների կողմից կամայական կամ անօրինական սպանություն կատարելու վերաբերյալ որևէ հաղորդում չի եղել։ Շարունակվել են արժանահավատ հաղորդումներ լինել 2020թ. նոյեմբերին էթնիկ հայկական և ադրբեջանական ուժերի միջև ընթացող մարտական գործողությունների ժամանակ կատարված անօրինական սպանությունների մասին (տես՝ 1.է կետը ստորև և 2021թ. Մարդու իրավունքների զեկույցի Ադրբեջանին վերաբերող հատվածը)։

Իրավապաշտպան հասարակական կազմակերպությունները (ՀԿ-ները) շարունակել են մտահոգություններ հայտնել զինված ուժերում գրանցված ծառայության հետ կապ չունեցող մահվան դեպքերի ու իրավապահների կողմից այդ դեպքերով վստահարժան քննություններ չապահովելու վերաբերյալ։ Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ու զոհերի ընտանիքների գնահատմամբ զինված ուժերում գրանցված ոչ մարտական մահվան դեպքերն ի սկզբանե ինքնասպանության վարկածով քննելը քիչ հավանական էր դարձնում չարաշահումների բացահայտումն ու քննությունը։ Ըստ մարդու իրավունքների հարցերով զբաղվող իրավաբանների՝ բանակում գրանցված մահվան դեպքերի քննության ամենամեծ խոչընդոտն իրեղեն ապացույցների վերացնելն էր կամ չպահպանելը թե՛ զինվորական հրամանատարության կողմից (ծառայողական քննությունների դեպքում), թե՛ գործի քննությունն իրականացնող համապատասխան մարմինների կողմից։ Ըստ իրավապաշտպան ՀԿ-ների՝ զինված ուժերում գրանցված մահվան դեպքերի վերաբերյալ կառավարության կողմից թափանցիկ հաղորդումներ չապահովելու հանգամանքը (անկախ դեպքերի մարտական կամ ոչ մարտական լինելու հանգամանքից) հանգեցրել է այս ոլորտում պաշտոնական տեղեկատվության հանդեպ անվստահության։

Օգոստոսի 19-ին Պաշտպանության նախարարությունից հայտնեցին, որ Ադրբեջանի սահմանի հարևանությամբ գտնվող հարավարևելյան Սյունիքի մարզի մարտական

հենակետերից մեկում հայտնաբերվել են 3 ժամկետային զինծառայողների դիեր՝ հրազենային վնասվածքներով։ Այդ օրն ավելի ուշ Պաշտպանության նախարարությունից հաղորդում եղավ սպանություն գործելու կասկածանքով ձերբակալված մեկ զինծառայողի մասին։ Օգոստոսի 23-ին Քննչական կոմիտեն հայտարարեց դիրքի ավագի ձերբակալության մասին, որը կասկածվում էր «ապօրինաբար դիտավորությամբ զինծառայողներին կյանքից զրկելուն դրդելու և ծառայակցի նկատմամբ սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարելու» մեջ։ Ըստ քաղաքացիական հասարակության՝ սպանություններն ի ցույց են դնում, որ տարիներ շարունակ պաշտոնապես միջոցներ չեն ձեռնարկվել դիտորդ կառույցների հաղորդումներում մատնանշվող կարգապահական խնդիրների, անպատժելիության և բանակում տիրող կոռուպցիայի ուղղությամբ։ Ըստ պաշտոնական տեղեկատվության գործի նախաքննությունը շարունակվում էր, իսկ 2 կասկածյալը շարունակում էին մնալ կալանքի տակ։

Ըստ դիտորդների 2020թ. աշնան մարտական գործողություններից հետո զինծառայողների շրջանում նկատելիորեն ավելացել են ինքնասպանությունները։ Ըստ ՀԿ-ների՝ ինքնասպանությունների հիմնական գործոնը 2020թ. մարտական գործողությունների ընթացքում վերապրած տրավման էր։ Գլխավոր դատախազության հաղորդման համաձայն ինքնասպանությունների մեծ թիվ է գրանցվել զինծառայողների ընտանիքների անդամների և հակամարտությանը մասնակցած կամավորների շրջանում։ Տարվա ընթացքում կառավարությունը նախաձեռնել է հոգեբանական աջակցության անվճար ծրագրեր հազարավոր մարդկանց համար՝ հակամարտության մասնակիցներ, զինծառայողներ և ընտանիքի անդամներ։ Ըստ ՀԿ-ների՝ ցուցաբերված աջակցությունը ոչ միշտ է եղել բավարար կամ արդյունավետ։ Օրինակ՝ մի զինծառայող լրատվամիջոցներին հայտնել էր, որ երբ դիմել է հետ-տրավմատիկ սթրեսային խանգարման հարցով, զինվորական հոգեբանը նրան խորհուրդ է տվել, որ փորձի չմտածել հակամարտության մասին։

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի (ՀՔԱՎ) գրասենյակի հուլիսի 26-ի զեկույցի համաձայն զինված ուժերում շարունակվել են առողջական խնդիրներով պայմանավորված մահվան դեպքեր գրանցվել, սակայն պարզ չէ, թե ինչ գործոնների հետևանքով են առողջական խնդիրներ ի հայտ եկել և արդյոք այդ խնդիրները ձեռք են բերվել ծառայության ընթացքում, թե մինչ այդ են առկա եղել։ Ըստ ՀՔԱՎ գրասենյակի՝

մի դեպքում ժամկետային զինծառայողի մահը վրա է հասել շտապ ու համարժեք բուժօգնություն չցուցաբերելու պատճառով։

Մայիսի 11-ին վարչապետ Փաշինյանին ներկայացվեց ոչ մարտական պայմաններում մահացած զինծառայողների մահվան դեպքերի առթիվ հարուցված քրեական գործերի (որոշ գործեր ունեն տասը և ավել տարվա վաղեմություն) ուսումնասիրության նպատակով 2020թ. ձևավորված աշխատանքային խմբի եզրակացությունը։ Աշխատանքային խումբը, որի կազմում ընդգրկված են զինծառայողների հարազատների կողմից ընտրած 3 անկախ իրավաբան և Արդարադատության նախարարության և վարչապետի աշխատակազմի 3 ներկայացուցիչ, ավարտին էր հասցրել ընտրված 8 գործերից առաջինի՝ 2007թ. Տիգրան Օհանջանյանի սպանության գործի ուսումնասիրությունը։ Ըստ իրավաբաններից մեկի դիտարկումների՝ ուսումնասիրությամբ բացահայտվել է, որ Օհանջանյանի սպանությունը քողարկելու նպատակով լուրջ խախտումներ են եղել բոլոր իրավապահ կառույցների, ինչպես նաև զինված ուժերի վերադասության տարբեր աստիճանների ներկայիս ու նախկին շուրջ 50 աշխատակցի կողմից։ Ի տարբերություն գործով նախորդ ուսումնասիրությունների՝ այս անգամ խմբի համար գործի նյութերն ամբողջությամբ հասանելի են եղել։ Ըստ իրավաբանի՝ բացահայտումները փոխանցվել են Գլխավոր դատախազությանը ենթադրյալ քողարկման փաստով գործ հարուցելու, ինչպես նաև սպանության փաստով նոր քննություն իրականացնելու նպատակով։ Ըստ կառավարության՝ Տիգրան Օհանջանյանի գործը վերաբացվել է սեպտեմբերի 25-ին և տարեվերջի դրությամբ ընթացքի մեջ էր գտնվում, սակայն կասկածյալներից որևէ մեկի հանդեպ քրեական մեղադրանք առաջադրված չէր։

Տարվա ընթացքում իշխանությունները քայլեր չեն ձեռնարկել մարդու իրավունքների չարաշահումների, այդ թվում՝ ոչ մարտական պայմաններում գրանցված մահվան դեպքերի հարցով փաստահավաք հանձնաժողովի ստեղծման ուղղությամբ. հանձնաժողովը նախատեսվում էր ձևավորել 2020թ. (տես՝ Մաս 5)։

Քննությունն առաջընթաց չէր գրանցել 2018թ. Արմեն Աղաջանյանին մահվան գործով, որին գտել էին կախված վիճակում «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոնում», ուր նա տեղափոխվել էր «Նուբարաշեն» ՔԿՀ-ից հոգեբանական գնահատում անցնելու նպատակով։ Սակայն նրա ենթադրյալ խոշտանգումների

քննության փաստով առաջընթաց կար։ Աղաջանյանի ընտանիքի անդամները հավատացած էին, որ նրան սպանել էին, որպեսզի նա մատնացույց չաներ իրեն հիվանդանոց տեղափոխվելուց առաջ ծեծի ու խոշտանգումների ենթարկած ՔԿՀ աշխատակիցներին։ Աղաջանյանի ենթադրյալ ինքնասպանության գործը մարտի 3-ին երրորդ անգամ կասեցվեց։ Աղաջանյանի խոշտանգումների գործով անցնող ծեծի ենթարկողներից մեկին՝ մայոր Արմեն Հովհաննիսյանին ներկայացվել էր խոշտանգումներ թույլ տալու ու փաստաթղթեր կեղծելու մեղադրանք, սակայն ընդհանուր իրավասության դատարանը վերաորակավորեց նրա արարքը որպես պաշտոնեական լիազորությունների գերազանցում և 2018թ. համաներման հիմքով նրան ազատ արձակեց։ Մարտի 5-ին ընդհանուր իրավասության դատարանի որոշումը բողոքարկելու ձախողված փորձից հետո դատախազության ու Աղաջանյանի ընտանիքի դիմումի հիման վրա գործը ներկայացվեց Վճռաբեկ դատարան։ Հոկտեմբերի 15-ին Վճռաբեկ դատարանը վճռեց, որ ստորին ատյանի դատարանի կողմից խոշտանգման մեղադրանքի վերաորակավորումը հիմնավորված չէր և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) նախադեպի խախտում էր. գործը վերանայման նպատակով ուղարկվեց վերաքննիչ դատարան։

Մարտի 26-ին Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց, որ քրեական օրենսգրքի այն հոդվածը, որով 2008թ. նախագահական ընտրություններից հետո տեղի ունեցած ցույցերը ցրելու նպատակով զինված ուժերի ենթադրյալ ներգրավման և դրանց ընթացքում 8 քաղաքացիական անձի և 2 ոստիկանի մահվան համար քրեական հետապնդում էր իրականացվում նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանի և այլ նախկին պաշտոնյաների նկատմամբ, հակասում է սահմանադրության երկու հոդվածների և ճանաչվում է անվավեր։ Արդյունքում՝ ապրիլի 6-ին ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանը դադարեցրեց մեղադրյալների քրեական հետապնդումը սահմանադրական կարգը տապալելու հոդվածով, սակայն նշեց, որ Քոչարյանի և նրա աշխատակազմի նախկին ղեկավար Արմեն Գևորգյանի նկատմամբ քրեական հետապնդումը կաշառքի գործով կշարունակվի։ Դատավորն արդարացրեց հետընտրական ցույցերի ընթացքում սահմանադրական կարգը տապալելու մեջ մեղադրվող երկու մյուս մեղադրյալներին՝ պաշտպանության նախարարության պաշտոնաթող գեներալներ Յուրի Խաչատուրովին և Սեյրան Օհանյանին։ Դատարանը մերժեց գործը քրեական

օրենսգրքի այլ հոդվածի ներքո վերաորակավորելու մասին դատախազի միջնորդությունը։ Իրավական հանրույթում շատերը հարցականի տակ էին դնում այս պաշտոնյաներին կոնկրետ այդ հոդվածով մեղադրանք առաջադրելու մասին սկզբնապես ընդունված որոշումը։

Թեպետ գործի դատաքննությունը նախքան Սահմանադրական դատարանի որոշումն ընդունելն արդեն 3 տարի ընթացքի մեջ էր, սակայն ընդհանուր իրավասության դատարանն այդպես էլ գործն ըստ էության չքննեց, քանի որ պաշտպանական կողմը տեղում դոփելու մարտավարություն էր վարում՝ ներկայացնելով անհաշիվ միջնորդություններ ու բողոքներ։ Արդյունքում՝ 2020թ. սեպտեմբերին 2008թ. հետընտրական իրադարձությունների ժամանակ սպանված քաղաքացիների հարազատները հրաժարվեցին մասնակցել հետագա դատական նիստերին՝ մեղադրելով Գլխավոր դատախազությանը դատավարությունը ֆարսի վերածելու ու այն տեղից շարժելու համար արդյունավետ միջոցներ չձեռնարկելու մեջ։ Երբ Սահմանադրական դատարանի կողմից անվավեր ճանաչվեց այն հոդվածը, որով մեղադրանք էր առաջադրված Քոչարյանին, զոհերի հարազատներին ներկայացնող փաստաբանները նկատեցին, որ դատախազների ձախողումները «կոնկրետ խմբի շահերին» ծառայելու համար էր՝ նկատի ունենալով Քոչարյանին ու նրա մերձավորներին։ 2008թ. հետընտրական բռնությունների, այդ թվում բիրտ ուժ կիրառելու ու սպանության մեջ կասկածվող այլ անձանց գործով քննությունը շարունակվում էր։

բ) Անհետացումներ

Իշխանությունների կողմից կամ անունից անհետացումների մասին հաղորդումներ չեն եղել: Մայիսի 5-ին ընդունված նոր քրեական օրենսգրքով, որը գործողության մեջ է մտնելու 2022թ. հուլիսից, քրեականացվում է մարդկանց բռնի անհետացումը՝ մարդկանց ձերբակալումը, կալանավորումը կամ առևանգումը, որը սահմանված է որպես «պետության կամ քաղաքական կազմակերպության կողմից կամ նրանց թույլտվությամբ, աջակցությամբ կամ համաձայնությամբ՝ չընդունելով դա իբրև ազատազրկում կամ հրաժարվելով այդ մարդկանց ճակատագրի կամ գտնվելու վայրի մասին տեղեկություն տալուց՝ երկար ժամանակով նրանց օրենքով պաշտպանվելու հնարավորությունից զրկելու համար»։

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) մշակել է Լեռնային Ղարաբաղի հակամարտությամբ պայմանավորված անհայտ կորածների մասին տվյալները և աշխատել է կառավարության հետ՝ անհայտ կորածների ընդհանուր ցանկը մշակելու շուրջ։ Ըստ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի՝ 1990-ականներից հակամարտության հետևանքով անհայտ կորել են մոտ 5.000 հայ և ադրբեջանցի։ Ըստ ոստիկանության տվյալների 2019թ. դրությամբ 1990-ականների հակամարտության հետ կապված 867 հայ համարվում է անհայտ կորած։ Ըստ կառավարության՝ հոկտեմբերի 29-ի դրությամբ 2020թ. մարտական գործողություններից հետո անհայտ կորած է համարվում 321 հոգի։

գ) Խոշտանգումներ և այլ դաժան, անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ

Սահմանադրությունն ու օրենսդրությունն արգելում են նման գործելակերպերը։ Այնուհանդերձ, եղել են հաղորդումներ, որ անվտանգության ուժերի ներկայացուցիչներն արգելանքի տակ գտնվող անձանց շարունակել են ենթարկել խոշտանգումների կամ թույլ են տվել այլ ոտնձգություններ։ Ըստ իրավապաշտպանների, չնայած քրեական օրենսգիրքը սահմանում և քրեականացնում է խոշտանգումը, սակայն այն չի քրեականացնում այլ դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքը։ 2015թ. քրեական օրենսգրքով խոշտանգման նոր սահմանման հատկանիշներով դեկտեմբերի 28-ին արձանագրվեց խոշտանգում թույլ տված պաշտոնյայի դատապարտման առաջին դեպքը։ Երկու ոստիկան մեղավոր ճանաչվեցին 2019թ. խոշտանգումներ թույլ տալու մեջ և դատապարտվեցին 7 տարվա ազատազրկման։

Հատուկ քննչական ծառայության լուծարմամբ խոշտանգումների գործերի վերաբաշխում տեղի ունեցավ։ Այս գործերում ներգրավված փաստաբանները նշում էին, որ այդ գործերի վարույթը փոխանցվել է Ազգային անվտանգության ծառայությանը, Քննչական կոմիտեին և նորաստեղծ Հակակառուպցիոն կոմիտեին։ Քաղաքացիական հասարակությունը քննադատեց այս վերաբաշխումը՝ պահանջելով ստեղծել մասնագիտացված անկախ ստորաբաժանում խոշտանգումների գործերը քննելու համար։

Կային արժանահավատ հաղորդումներ այն մասին, որ էթնիկ հայկական և ադրբեջանական ուժերի կողմից եղել են ոտնձգություններ պահող անձանց նկատմամբ՝ կապված 2020թ. վերջին ամիսներին գրանցված հակամարտության հետ (տես՝ Մաս 1.Է և Մարդու իրավունքների մասին զեկույցի Ադրբեջանին վերաբերող գլուխը)։

Ըստ մարդու իրավունքների ակտիվիստների՝ բռնությունների հին ու նոր դեպքերի հետ կապված իրավապահներին պատասխանատվության չենթարկելու հանգամանքը նպաստել է, որպեսզի խնդիրը շարունակվի։ Դիտորդները պատկան մարմինների կողմից այս գործերով մեղավորներին չպատժելը բացատրում էին այն հանգամանքով, որ 2018թ. քաղաքական անցումից հետո Արդարադատության համակարգում բարձրագույն ղեկավարությունից բացի անձնակազմի այլ փոփոխությունների չեն եղել։ Մարդու իրավունքների հարցերով իրավաբանները մատնանշում էին բազմաթիվ գործեր, երբ ոտնձգություններ թույլ տված անձինք պաշտոնական առաջխաղացում են ունեցել, այդ թվում՝ 2018թ. հեղափոխությունից հետո։ Ըստ կառավարության՝ ոստիկանության կողմից 2018թ. մեծապես խաղաղ ցույցերի մասնակիցների նկատմամբ ոչ համարժեք ուժի կիրառման հարցով հարուցված քրեական գործերը կարճվել են, քանի որ իրավապահները չեն կարողացել բացահայտել մեղավորներին։ Նախկին փոխոստիկանապետ Լևոն Երանոսյանի՝ 2018թ. ցույցերի ժամանակ պաշտոնական լիազորություններն անցնելու գործով դատավարությունը շարունակվում էր։

Մայիսի 25-ին Եվրոպայի խորհրդի Խոշտանգումների կանխարգելման կոմիտեն (ԽԿԿ) զեկույց հրապարակեց 2019թ. դեկտեմբերին երկիր կատարած վերջին պարբերական այցի վերաբերյալ։ ԽԿԿ-ը զեկույցում նշվում էր, որ ոստիկանության պահման վայրերում գտնված անձանց գերակշիռ մեծամասնությունը պատվիրակության անդամների հարցերին ի պատասխան հայտնել են, որ իրենց պահման վայրում պատշաճ կերպով են վերաբերվել։

Հունիսի 3-ին Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիան հայտնեց, որ մայիսի 30-ին բնակարանային գողության մեջ կասկածվող Սամվել Հասանյանի և երկու այլ կասկածյալների ձերբակալության ընթացքում Վանաձորի ոստիկանության կողմից բռնություն է գործադրվել։ Ըստ հաղորդման կասկածյալների ծեծը շարունակվել է

ոստիկանության բաժանմունքում։ Հասանյանի փաստաբան Արայիկ Պապիկյանը՝ Մարդու իրավունքների ասոցիացիայից, ասել է, որ բռնության ցուցաբերմանը ներգրավված են եղել բազմաթիվ ոստիկաններ, որոշները՝ քաղաքացիական հագուստով։ Պապիկյանը հրապարակել է Հասանյանի լուսանկարները, որտեղ երևում են բազմաթիվ վնասվածքներ, կապտուկներ՝ դեմքի, ականջների, գլխի, թևերի և իրանի հատվածներում։ Գործով զբաղվող քննիչները պնդում էին, որ Հասանյանը վնասվածքներ է ստացել այն ժամանակ, երբ իջեցրել են մեքենայից և պառկեցրել գետնին։ Ըստ Պապիկյանի՝ Վանաձորի ընդհանուր իրավասության դատարանը բավարարել է Հասանյանին նախնական կալանքի տակ պահելու միջնորդությունը՝ հիմք ընդունելով միայն ոստիկանի ցուցմունքը կապված բնակարանային գողությանը նպաստելու հարցում Հասանյանի ենթադրյալ ներգրավվածության հետ։ Հատուկ քննչական ծառայությունը ենթադրյալ խոշտանգումների փաստով պաշտոնեական լիազորություններն անցնելու մեղադրանքով քննություն սկսեց, սակայն 2 ամսից գործը կարճվեց։ Ըստ կառավարության՝ նախաքննության ընթացքում ձեռք չէին բերվել բավարար ապացույցներ, որոնցով առանց ողջամիտ կասկածի կհաստատվեր այդ երեք անձանց նկատմամբ ոստիկանների կողմից բռնություն գործադրելու փաստը։ Ըստ Պապիկյանի՝ Հասանյանը հրաժարվել է հատուկ քննչական ծառայությունում ցուցմունք տալ բռնության վերաբերյալ՝ վախենալով, որ կարող է հաշվեհարդար լինել իր նկատմամբ այն քրեական գործի շրջանակում, որտեղ նա ներգրավված է որպես կասկածյալ։ Փաստաբանը նաև նշում էր, որ Վանաձորի Տարոնի ոստիկանական բաժնում չկար այդ օրվա դեպքերի ձայնագրությունը, ինչը նրա բնութագրմամբ խրոնիկ խնդիր է։

Տարվա ընթացքում շարունակվում էր խոշտանգումների գործով դատավարությունը Երևանի Նոր Նորքի ոստիկանության բաժանմունքի երեք ոստիկանների նկատմամբ, որոնք 2020թ. սեպտեմբերին բռնություն էին կիրառել ծանրամարտի չեմպիոն Արմեն Ղազարյանի և մեկ այլ քաղաքացու նկատմամբ։ Ղազարյանը պնդում էր, որ իրեն առևանգել են այն բանից հետո, երբ ինքը միջամտել է քաղաքացիական հագուստով ոստիկանների կողմից անձնական վեճից հետո քաղաքացու ձերբակալմանը։ Ղազարյանը նշել է, որ իրեն տարել են ոստիկանական բաժանմունք, որտեղ մի խումբ ոստիկաններ ծեծի են ենթարկել և նրա նկատմամբ ցուցաբերել ոչ մարդկային ու նվաստացուցիչ վերաբերմունք։ Այն բանից հետո, երբ Ղազարյանը հաղորդում է

ներկայացրել բռնության մասին Նոր Նորքի բաժանմունքի ոստիկանները, ըստ հաղորդումների, ճնշումներ են գործադրել, որպեսզի նա հաղորդումը ետ վերցնի՝ սպառնալով հակառակ դեպքում «գործ սարքել» նրա վրա։ 2020թ. սեպտեմբերին Հատուկ քննչական ծառայությունը խոշտանգման մեղադրանքով քրեական գործ հարուցեց և ձերբակալեց երեք ոստիկանի (խոշտանգման մեղադրանքով) ու ոստիկանության բաժնի պետին (ծառայողական քննության ընթացքին միջամտելու հետ կապված պաշտոնեական լիազորությունների չարաշահման մեղադրանքով)։ Բաժնի պետի նկատմամբ մեղադրանքները կարճվեցին, զղջման հիմքով, իսկ նախնական կալանքի տակ գտնվող երեք ոստիկանների դեմ հարուցված գործը՝ խոշտանգման մեղադրանքով, ուղարկվեց դատարան և տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր։

Շարունակվել են հաղորդումները ոստիկանական բաժանմունքներում տեղի ունեցող բռնությունների մասին, քանի որ դրանք, ի տարբերություն բանտերի կամ ձերբակալվածների պահման վայրերի, չեն վերահսկվում հասարակական դիտորդների կողմից։ Քրեական Արդարադատության մարմինները շարունակել են դատապարտումների համար հիմք ընդունել խոստովանություններն ու հարցաքննությամբ ձեռք բերված տեղեկությունները։ Ըստ իրավապաշտպան-փաստաբանների՝ ոստիկանության հարցաքննությունների ժամանակ չեն եղել բավարար ընթացակարգային երաշխիքներ վատ վերաբերմունք թույլ չտալու համար, օրինակ՝ ուժով կամ ընթացակարգային խախտմամբ ձեռք բերված իրեղեն ապացույցների անընդունելիությունը։ Թեպետ իրավապաշտպան-փաստաբանները պնդում էին, որ ոստիկանության բաժիններում տեսախցիկների տեղադրումն արդյունավետ երաշխիք չի եղել չարաշահումներ թույլ չտալու համար՝ մատնացույց անելով իրենց կողմից դիտարկվող խոշտանգումների մի քանի գործով տեսագրությունների բացակայությանը, պաշտոնյաները նշում էին, որ առկա երաշխիքները թույլ չեն տալիս առանձին ոստիկանական բաժիններին որևէ կերպ շահարկել կամ ջնջել կենտրոնացված կերպով պահվող տեսատվյալները։ Ըստ պաշտոնական տվյալների տեսաձայնագրման համակարգեր են տեղադրվել ոստիկանության 21 ստորաբաժանումների հարցաքննության սենյակներում և տեսադիտման 70 համակարգ է տեղակայվել 20 մարզային բաժանմունքների մուտքերի

ու ելքերի հատվածում, որոնք բոլորը միացված են ոստիկանության հիմնական ցանցին։

Առաջընթաց չկար 2019թ. մահացած Էդգար Ծատինյանի գործով. նա մահացել էր հիվանդանոցում, ուր տեղափոխվել էր Երևանի ոստիկանության Նոր Նորքի բաժին բերման ենթարկվելուց հետո։ Ծատինյանը մահացել էր թմրադեղերի գերդոզավորումից՝ կուլ տալով երեք գրամ մետամֆետամին, որն ըստ հաղորդումների ոստիկաններն ուզում էին օգտագործել նրա վրա «գործ սարքելու» համար, քանի որ նա հրաժարվում էր խոստովանել սպանություն կատարելը։ 2020թ. հուլիսին Ծատինյանի մահվան գործի քննությունը կարճվեց։ 2020թ. դեկտեմբերին Երևանի ընդհանուր իրավասության դատարանը մերժեց Ծատինյանի իրավահաջորդի փաստաբանի միջնորդությունը գործը վերաբացելու վերաբերյալ։ Դրանից հետո փաստաբանը, մատնացույց անելով քննության բազմաթիվ ընթացակարգային խախտումները, բողոք ներկայացրեց վերաքննիչ դատարան, որը մերժվեց ապրիլի 25-ին։

Հուլիսի 13-ին Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիայի փաստաբանները հայտնեցին, որ Հատուկ քննչական ծառայությունը դադարեցրել է քրեական հետապնդումը Ոստիկանության ուղեկցող գումարտակի հրամանատար Արմեն Ղազարյանի նկատմամբ, որը ենթադրաբար դերակատարում էր ունեցել որպես մեղադրյալ դատարանի շենքում գտնվող «Սասնա Ծռեր» զինված խմբի 4 անդամներին ծեծի ենթարկելու 2017թ. գործում։ Ծեծի արդյունքում խմբի անդամները կապտուկներ ու կտրված վնասվածքներ էին ստացել դեմքի, գլխի, որովայնի, մեջք և ոտքերի հատվածներում։ Փաստաբանները նշում էին, որ Հատուկ քննչական ծառայությունը քրեական հետապնդումը դադարեցրեց, քանի որ կային հակասական տվյալներ և իրենք անկարող էին «արտաքին գնահատական տալ ոստիկանների գործողությունների հանցակազմի վերաբերյալ», ինչն առերևույթ նշանակում է, որ Հատուկ քննչական ծառայությունը տուժողների ներկայացրածից զատ այլ ապացույցներ չկարողացավ ձեռք բերել։ Հելսինկյան ասոցիացիան խիստ դատապարտեց դատախազությանը, Հատուկ քննչական ծառայությանը և մյուս իրավապահ կառույցներին՝ պահանջելով վերջ տալ ոստիկանության կողմից բռնության ու խոշտանգումների դրսևորումներին և նման դեպքերը քողարկելու երկարամյա պրակտիկային։

ԽԿԿ-ի կողմից խնդիրներ նկատվեցին հիվանդանոց տեղափոխելու կամավոր համաձայնություն տալու հարցում՝ կապված մի շարք իրավունակ հիվանդների հետ, որոնք հնարավոր է կամավոր չէին ստորագրել թույլտվության ձևը: Արմաշի հոգեկան առողջության կենտրոնում ԽԿԿ-ին հայտնեցին, որ հիվանդանոցում ոչ կամավոր կերպով տեղավորելու թույլտվություն ստանալու համար դատարան դիմելը «գլխացավանք կլինի», դրա համար էլ, երբ ընտանիքի անդամները բուժման համար բերում են իրենց հարազատին, նրանցից պահանջում են տրամադրել բուժառուի կողմից ստորագրված՝ բուժում ստանալու կամավոր թույլտվություն: Բուժառուի կողմից կամավոր թույլտվությունը ստորագրելուց հետո այլևս հնարավորություն չկա դիմել դատարան և չեղարկել ոչ կամավոր տեղավորումը հիվանդանոցում: ԽԿԿ-ը նաև մատնանշել է, որ դրանից հետո բուժառուներին թույլ չի տրվում դուրս գալ՝ ֆիզիկական ակտիվության համար կամ հեռանալ հիվանդանոցից:

Զինված ուժերում ոչ կանոնակարգային հարաբերությունների մասշտաբների և դրանք խոշտանգում որակելու մասին զեկույցներ չեն եղել: Ըստ «Խաղաղության երկխոսություն» ՀԿ-ի 2020թ. զեկույցի ռազմական ոստիկանության գործառույթների ու լիազորությունների մասին հստակ իրավական սահմանման բացակայությունը, ինչպես նաև քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների բացակայությունը, հնարավոր էր դարձնում քրեական գործերով վկաների ու կասկածյալների հանդեպ խոշտանգումների ու վատ վերաբերմունքի այլ ձևերի կիրառումը ռազմական ոստիկանության կողմից: Եղել են դիպվածային հաղորդումներ ռազմական ոստիկանության կողմից զինծառայողների հանդեպ բռնության դրևորման մասին:

2020թ. սեպտեմբերին Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Գնել Գասպարյանն աննախադեպ վճիռ կայացրեց առ այն, որ Արթուր Հակոբյանի գործով քննիչները պատշաճ քննություն չեն իրականացրել Հակոբյանի հանդեպ խոշտանգումների վերաբերյալ: Դատավորը պարտավորեցրեց նշանակել տուժողի դատահոգեբանական փորձաքննություն՝ ըստ ՄԱԿ-ի «Խոշտանգումների և այլ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասով արդյունավետ քննության իրականացման և փաստաթղթավորման մասին ձեռնարկի», որն հայտնի է որպես Ստամբուլյան արձանագրություն: Այս վճռից ութ ամիս անց քննիչները ձեռնամուխ եղան պահանջված հոգեբանական փորձաքննության անցկացմանը, որը տարեվերջի

դրությամբ դեռ ընթացքի մեջ էր։ 2015թ. Հակոբյանը վաղաժամկետ արձակվել էր զինվորական ծառայությունից՝ մտավոր խնդիրների պատճառով։ Ըստ նրա ընտանիքի անդամների և փաստաբանի՝ մինչ զորակոչվելը նա հոգեկան առողջության խնդիրներ չի ունեցել, սակայն խոշտանգումների ու բռնությունների հետևանքով խորը հոգեբանական տրավմա է ապրել։ 2019թ. Վճռաբեկ դատարանն ընդունեց, որ խախտվել է Հակոբյանի խոշտանգումներից զերծ մնալու իրավունքը, սակայն մինչև ընդհանուր իրավասության դատարանի 2020թ. սեպտեմբերի վճիռը գործն առաջ չէր ընթանում շարունակվող բողոքների ու հակընդդեմ բողոքների պատճառով։

Անվտանգային ուժերում անպատժելիությունը նշանակալի խնդիր էր։ Խոշտանգումների դեմ պայքարելու համար տարվա ընթացքում կառավարությունը կազմակերպել է թիրախային ուսումնական դասընթացներ դատավորների, դատախազների, քննիչների, զինվորական հրամկազմի, ոստիկանության ու քրեակատարողական հիմնարկների աշխատողների համար։

Բանտերի ու կալանավայրերի պայմանները

Չնայած բանտերում գտնվողների թվի կրճատմանը, որը պայմանավորված էր վաղաժամկետ արձակման ընթացակարգերի փոփոխություններով, ինչպես նաև ՔՈՎԻԴ-19-ի կանխարգելման նպատակներով որոշ բանտարկյալների ազատ արձակմամբ, պայմանները որոշ քրեակատարողական հիմնարկներում ծանր էին ու բնութագրվում էին վատ սանիտարահիգիենիկ վիճակով, ոչ համարժեք բուժսպասարկմամբ և քրեական ենթամշակույթի աստիճանակարգային օղակների գերիշխող դիրքով։ Մայիսի 5-ին և հունիսի 30-ին համապատասխանաբար ընդունված քրեական և վարչական դատավարության նոր օրենսգրքերը որոշակի հանցանքների դեպքում ազատազրկման այլընտրանքներ են սահմանում. երկու օրենսգիրքն էլ ուժի մեջ են մտնելու 2022թ. հուլիսին։ Հոկտեմբերի 28-ին կառավարությունը հայտարարեց, որ 2022թ. հունվարի 1-ից Կոշի և Հրազդանի քրեակատարողական հիմնարկները կփակվեն՝ թույլ տալով կառավարությանը վերաբաշխել դրանց ուղղվող միջոցները։ Ըստ Արդարադատության նախարար Անդրեասյանի՝ հոկտեմբերի 1-ի դրությամբ քրեակատարողական հաստատություններում նախատեսված տեղերի թիվը 5.346 է, որոնցից զբաղված են ընդամենը 2.113-ը։

Ֆիզիկական պայմաններ. Ըստ Արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող Հասարակական դիտորդական խմբի (ՀԴԽ)՝ տարվա ընթացքում քրեակատարողական հիմնարկներում 2019թ.-ից ընթացող վերանորոգումները բանտարկյալների համար նշանակալի բարելավումների չեն հանգեցրել: Սակայն քրեակատարողական հիմնարկների դիտորդները պայմաններն այլևս չէին համարում կյանքի համար վտանգավոր՝ նշելով որ բանտարկյալների թվի կտրուկ նվազման արդյունքում վատթարագույն վիճակում գտնվող խցերն այլևս չեն գործածվում: «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, որը երկրի 12 ՔԿՀ-ներից մեկն է, պայմանները ծանր էին, չնայած խողովակները փոխելու արդյունքում վերացել էր շենքում տիրող կոյուղու գարշահոտը: Իրավապաշտպան դիտորդները և ՀԴԽ-ը նաև շարունակել են մտահոգություններ հնչեցնել «Արմավիր» ՔԿՀ-ի ֆիզիկական պայմանների մասին, որտեղ չկար օդափոխության և հովացման համակարգ և արդյունքում ամռան ամիսներին խցերում օդի ջերմաստիճանը հասնում էր 113^0 ըստ Ֆարենհայտի: Բարձր ջերմաստիճանն ազդում էր թե՛ բանտարկյալների, թե՛ աշխատակիցների վրա: Օգոստոսի 2-ին մարդու իրավունքների պաշտպանը (ՄԻՊ) հայտարարություն արեց Շիրակի և Արագածոտնի դատարանների՝ ազատությունից զրկվածներին ժամանակավոր պահելու խցերի անթույլատրելի պայմանների վերաբերյալ: Հայտարարության մեջ նշվում էին վատ սանիտարահիգիենիկ պայմանները, չառանձնացված ու տեղաշարժման խնդիրների ունեցողների համար չհարմարեցված սանհանգույցները, ջեռուցման ու լուսավորության բացակայությունը և կահույքի բացակայությունը որոշ խցերում: Ըստ ՄԻՊ-ի և այլ զեկույցների՝ նմանօրինակ խնդիրներ առկա են երկրի բոլոր դատարաններում:

Օգոստոսի 19-ին ՄԻՊ-ը հայտարարեց «Դատապարտյալների հիվանդանոցի» կորոնավիրուսային բաժանմունքում տիրող անմարդկային ու մարդու արժանապատվությունը նվաստացնող պայմանների մասին: Ըստ հայտարարության՝ հիվանդասենյակները հնամաշ են, գտնվում են սանիտարահիգիենիկ անընդունելի վիճակում, քայքայված են ու խոնավությունից վնասված:

Ըստ ՄԻՊ-ի և ՀԴԽ-ի քրեակատարողական հիմնարկներում բանտարկյալների մահվան հետ կապված անպատժելիությունը և դրանց կանխման համակարգային մոտեցումների բացակայությունը շարունակում էր մնալ խնդրահարույց: Տարվա

ընթացքում ՔԿՀ-ներում գրանցվել է մահվան 13 դեպք։ Այս դեպքերը գերազանցեցին 2020թ. հիվանդության պատճառով գրանցված մահվան դեպքերը, բայց նախորդ տարիների համեմատ ավելի քիչ էին։ Մահվան դեպքերից 9-ը պայմանավորված էին հիվանդությամբ, որից 4-ը՝ ՔՈՎԻԴ. գրանցվել էր 3 ինքնասպանության և 1 սպանության դեպք։ Սպանության գործով քննությունը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր։ 2020 և 2021թթ. ՔԿՀ-ներում գրանցված մահվան դեպքերից ոչ մեկը կառավարությունը և ՀԿ-ները չէին վերագրում առկա ֆիզիկական պայմաններին։

Դիտորդները շարունակում էին մատնանշել ՔԿՀ-ներում հոգեբանական ծառայությունների բարելավման անհրաժեշտությունը։ Ըստ ՀԴԽ-ի կար հաստիքային հոգեբանների սակավություն, մինչդեռ հարյուրավոր բանտարկյալների անհրաժեշտ էր հոգեբանական աջակցություն։ ՀԴԽ-ի 2020թ. ապրիլին հրապարակված ուսումնասիրության համաձայն մեկ հոգեբանին հասնող պացիենտների մեծ թիվը, հսկայածավալ թղթաբանությունը, աշխատանքային ոչ համարժեք պայմանները, ինչպես նաև ՔԿՀ-ների հոգեբանների դերի շուրջ տիրող հստակության բացակայությունը հանգեցրել են հոգեբանական ծառայությունների ձախողման ու սակավաթիվ մասնագետների ուժերի ջլատմանը։ 2020թ. ՄԻՊ-ը քննադատեց ինքնախեղում թույլ տված բանտարկյալներին պատժելու պրակտիկան՝ դրա փոխարեն առաջարկելով նրանց ցուցաբերել պատշաճ բժշկական ու հոգեբանական օգնություն։ Կառավարությունն իրականացրել է ծրագրեր հոգեբանական ծառայությունները բարելավելու ու անձնակազմն ավելացնելու ուղղությամբ, որն էլ ֆիզիկական պայմանների բարելավման և բանտարկյալների թվի կրճատման հետ մեկտեղ նպաստեց տարվա ընթացքում ինքնախեղումների թվի կրճատմանը։

Կառավարությունը վերահաստատեց ՔԿՀ-ներում կոռուպցիայի հանդեպ զրոյական հանդուրժողականության քաղաքականությունը և վճռականություն հայտնեց արմատախիլ անել բանտային կյանքում գերիշխող կազմակերպված քրեական աստիճանակարգային կառուցվածքը, որտեղ բանտային ոչ ֆորմալ աստիճանակարգի վերևում գտնվող ընտրյալ բանտարկյալները (կոչվում են «նայողներ») վերահսկողություն են ապահովում բանտարկյալների ու բանտային կյանքի նկատմամբ։ Ըստ կառավարության՝ հունվարի 1-ից հոկտեմբերի 1-ն իրավասու մարմինների կողմից ՔԿՀ-ներում քրեական ենթամշակույթի հետ կապված 19 քրեական գործով քննություն է իրականացվել, որից 4-ը մեղադրական

եզրակացությամբ ուղարկվել են դատարան, 1-ը՝ կասեցվել է, 4-ը՝ կարճվել են, իսկ մնացած 9-ով քննությունը դեռ շարունակվում էր։ Հոկտեմբերի 1-ի դրությամբ դատարանների վարույթում էր գտնվում ՔԿՀ-ների հետ կապված 6 գործ, որոնցով ներգրավված էին 25 մեղադրյալ, սակայն դեռևս որևէ դատապարտում չէր եղել։ Ըստ դիտորդների՝ դեռ հստակ չէր, թե կառավարության ջանքերը հանգեցրել էին աստիճանակարգային համակարգի փոփոխության, թե պարզապես հանգեցրել էին խնդիրն ընդհատակ տեղափոխելուն։

Դիտորդները որոշ առաջընթաց էին մատնանշում համակարգային կոռուպցիայի վերացման ճանապարհին և նշում էին, որ ՔԿՀ-ների վարչական անձնակազմը կոռուպցիոն սխեմաներում ներգրավված չի եղել, մասամբ պայմանավորված նաև ՔԿՀ-ների ղեկավար պաշտոնյաների հանդեպ քրեական հետապնդման մի շարք հնչեղ գործերով։ Որոշ դիտորդներ հայտնում էին, որ անազատության մեջ պահվողներն այլևս պարտադրված չէին դրամական միջոցներ տրամադրել նայողների կողմից տնօրինվող ընդհանուր կաթսային և կարծես վերացվել էր անազատության մեջ պահվողներին մոլախաղերի պարտադրելու պրակտիկան։ Որոշ դիտորդներ էլ նշում էին, որ անազատության մեջ գտնվողների հարազատները վճարում են ՔԿՀ-ից դուրս գտնվող անձանց՝ ՔԿՀ-ում առկա աստիճանակարգի միջոցով իրենց ընտանիքի անդամի անվտանգությունը ՔԿՀ-ում ապահովելու համար։

Փորձագետների գնահատմամբ՝ կոռուպցիան հավանաբար կպահպանվի, քանի դեռ առկա է քրեական ենթամշակույթը։ ԽԿԿ-ի մայիսի 25-ի զեկույցում նշված էր, որ պատվիրակության այցելած 6 ՔԿՀ-ներում արժանահավատ հաղորդումներ չեն եղել հիմնարկի անձնակազմի կողմից վերջին շրջանում ֆիզիկական բռնություններ թույլ տալու մասին։ Իր դիտարկումների արդյունքում ԽԿԿ-ը եզրակացրել էր, որ այցելած ՔԿՀ-ներում շարունակում էին խնդրահարույց մնալ անազատության մեջ պահվողների միջև գրանցվող բռնության, ահաբեկման և շորթման դրվագները և դա ակնհայտորեն պայմանավորված էր անազատության մեջ պահվողների ոչ ֆորմալ աստիճանակարգի ազդեցությամբ։

2020թ. օգոստոսի Հատուկ քննչական ծառայությունը ձերբակալեց «Նուբարաշեն» ՔԿՀ-ի նախկին պետ Սամվել Մկրտչյանին՝ 2020թ. փետրվարին բանտարկյալ Վահագն Աբգարյանի վրա գործած հարձակման հարցում իր ունեցած դերակատարման ու

դեպքը քողարկելու համար։ 2020թ.սեպտեմբերին Մկրտչյանն ազատ արձակվեց, քանի որ ընդհանուր իրավասության դատարանը չբավարարեց կալանքը որպես խափանման միջոց կիրառելու Հատուկ քննչական ծառայության միջնորդությունը։ 2020թ. փետրվարին Մկրտչյանին խարդախության ու իշխանությունը չարաշահելու մեղադրանք ներկայացվեց այլ բանտարկյալների կողմից Աբգարյանին (ըստ հաղորդումների նա քրեական աստիճանակարգի անդամ է) ծեծի ենթարկելու կապակցությամբ։ Ըստ ավելի վաղ ներկայացված հաղորդումների՝ արտերկրի «քրեական հեղինակությունների» կողմից հրահանգված հարձակման հանգամանքները թաքցնելու համար Մկրտչյանն աշխատողներին ցուցում է տվել արձանագրել, որ Աբգարյանը սայթաքել է սանհանգույցից դուրս գալու ժամանակ։ Գործով ձերբակալվել են նաև ՔԿՀ այլ աշխատակիցներ։ Ըստ կառավարության՝ ՔԿՀ-ի աշխատակիցներ Հովիկ Ալեքսանյանի և Զոհրաբ Պետրոսյանի դեմ քրեական գործը 2020թ. սեպտեմբերին կարճվել է, քանի որ վերջիններս զղջացել են իրենց արարքի համար, իսկ Սամվել Մկրտչյանի դեմ գործը կարճվել է նոյեմբերին՝ պայմանավորված «իրավիճակի փոփոխությամբ», որը սակայն չի մանրամասնվել։

Մայիսի 25-ի իր զեկույցում ԽԿԿ-ը նշել է ՔԿՀ-ներում բժշկական ծառայությունների մասով ընթացող բարեփոխումների և ՔԿՀ-ներում բժշկական սպասարկում իրականացնելու համար «Քրեակատարողական բժշկության կենտրոն» պետական ոչ-առևտրային կազմակերպության հիմնման մասին, սակայն մտահոգություն է հայտնել մասնագիտացված բուժօգնության ոչ հասանելի լինելու։ Դիտորդները նշում էին, որ պետպատվերով թույլատրվող վիրահատությունների ու այլ մասնագիտացված ծառայությունների քանակը սահմանափակ է։ ՔԿՀ-ների մեծ մասը չունեին հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված հարմարություններ։

Ըստ ՀԴԽ-ի և այլ իրավապաշտպան կազմակերպությունների՝ բանտերում ամենավատ պայմաններում շարունակել են գտնվել լեսբի, գեյ, բիսեքսուալ, տրանսգենդեր, քվիր և ինտերսեքս (ԼԳԲՏՔԻ+) անձինք։ Քրեակատարողական հիմնարկների ղեկավարությունը վերահաստատում և հանդուրժում էր ոտնձգություններով ուղեկցվող վերաբերմունքը և ԼԳԲՏՔԻ+ անձանց պահում առանձնացված խցերում, որտեղ պայմանները զգալիորեն ավելի վատ էին։ ՀԴԽ-ը փաստում էր, որ նույնասեռական կամ որպես նույնասեռական ընկալվող տղամարդիկ, կամ նրանց հետ կապ ունեցողները և այն բանտարկյալները, որոնք

դատապարտված են այնպիսի հանցանքների համար, ինչպիսիք են՝ բռնաբարությունը, ինչպես նաև նրանք, ովքեր հրաժարվում են ապրել «բանտի չգրված օրենքներով», պահվել են մյուս բանտարկյալներից առանձին և ստիպված են եղել կատարել նվաստացնող առաջադրանքներ, ինչպիսին է սանհանգույցների մաքրումը, մյուսների աղբը հավաքելն ու սեռական ծառայությունների մատուցումը: Այդ բանտարկյալների սպասքը և ուտելիքն առանձնացված էր, նրանք ունեին առանձին լվացքի մեքենա, և առանձին պատժախուց:

Մարտի 4-ին է «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ը հրապարակեց «Ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հետազոտությունը: Այնտեղ նշվում է, որ կառավարության ծրագրերում, ռազմավարություններում կամ հաշվետվություններում, այդ թվում՝ «Մարդու իրավունքների պաշտպանության 2020-2022թթ. ազգային ռազմավարության» և «ՀՀ քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի 2019-2023թթ. ռազմավարության» մեջ չի հիշատակվում ԼԳԲՏՔԻ+ անձանց մարդու իրավունքների ու ազատազրկման պայմանների բարելավման անհրաժեշտությունը: Այս զեկույցը մատնանշում է, որ անազատության մեջ պահվող ԼԳԲՏՔԻ+ անձանց նկատմամբ խտրականությունը և նրանց առանձնացումը ՔԿՀ-ներում, առկա քրեական ենթամշակույթի անմիջական հետևանքն է, սակայն այն որպես այդպիսին կառավարության փաստաթղթերում չի ճանաչվում: Քանի որ քրեական ենթամշակույթի վերացման նախաձեռնություններում հաշվի չեն առնված ԼԳԲՏՔԻ+ անձանց հատուկ խոցելիությունները, ուստի զեկույցը եզրակացնում է, որ այդ նախաձեռնությունները կարող են հետագա բացասական հետևանքներ ունենալ ԼԳԲՏՔԻ+ անձանց համար: Ըստ ՀԴԽ-ի ՔԿՀ մուտք գործելիս չեն դիտարկվում անազատության մեջ պահվողների խոցելիությունները, այդ թվում՝ սեռական կողմնորոշումը, հոգեբանական խնդիրները կամ այլ բնութագրերը, որոնց առկայությունը վտանգավոր է դարձնում նրանց ներառումն այլ անազատության մեջ պահվողների հետ:

Դիտորդները նշանակալի դրական տեղաշարժեր էին նկատել տարվա ընթացքում վաղաժամկետ ազատման և պայմանական ազատման հարցերում: Չնայած առաջընթացին՝ որոշ փորձագետներ նշում էին, որ ազատ արձակման համապատասխանությունը որոշելու համար կիրառվող միավորների համակարգի պատճառով որոշ անազատության մեջ պահվողներ անբարենպաստ դիրքում են

հայտնվել, քանի որ այն հաշվի չէր առնում դատապարտյալի հետ առնչություն չունեցող գործոնները, օրինակ՝ դատապարտյալին միավոր է տրվում, եթե նա աշխատում է կամ մասնակցում է ուսումնական ծրագրերի, սակայն նման հնարավորություն միշտ չի լինում կամ էլ լինում է ոչ բոլոր ՔԿՀ-ներում: Մայիսի 25-ի իր զեկույցում ԽԿԿ-ն նույնպես նշեց դատապարտյալների համար աշխատելու հնարավորության բացակայությունը, որն ըստ էության նշանակում է, որ նրանք չեն կարողանա բավարարել վաղաժամկետ ազատման պայմաններին: ԽԿԿ-ը մտահոգություն էր հայտնում, որ ինչպես 2015թ. այցի ժամանակ, այնպես էլ հիմա իրենց այցելած ՔԿՀ-ներից որևէ մեկում չկար որևէ բան, որն ինչ-որ կերպ կնմանվեր կազմակերպված ռեժիմով կառուցողական արտախցային միջոցառման: Բացի այդ, չկար անհատական ռիսկի և կարիքների գնահատում, չկար անհատական ազատազրկման պլան (որը կսահմաներ համապատասխան աշխատանք, կրթություն կամ այլ միջոցառումներ կամ կնշեր անհրաժեշտ բժշկական կամ հոգեբանական օգնության մասին) և գրեթե բացակայում էին դատապարտյալներին արձակմանը նախապատրաստելու քայլերը:

Ըստ Արդարադատության նախարարության՝ սննդի բարելավման ծրագիրը դրական ազդեցություն է ունեցել ՔԿՀ-ներում ընդհանուր կարգի պահպանման հարցում, ինչպես նաև դրական ազդեցություն է ունեցել անազատության մեջ պահվողների ընտանիքի անդամների համար, քանի որ նրանք այլևս ստիպված չեն ուտելիք բերել: Եղել են դիպվածային հաղորդումներ այն մասին, որ տարվա վերջին հատվածում սննդի որակը վատացել է և որոշ անազատության մեջ պահվողներ հրաժարվել են ուտել այն: Սննդի մասին 2020թ. վերջին պատրաստած ՀԴԽ-ի զեկույցում նշված էր, որ առանձնազրույցներում անազատության մեջ պահվողները դրական էին գնահատել սնունդը և իրենց գոհունակությունն էին հայտնել դրա վերաբերյալ:

<u>Վարչարարություն</u>. Բանտարկյալների նկատմամբ վատ վերաբերմունքի վստահելի պնդումների դեպքում համապատասխան մարմինները չեն ապահովել արագ քննություններ:

ՔՈՎԻԴ-19 սահմանափակումների ժամանակահատվածները մի կողմ թողած՝ տեսակցությունների հետ կապված խնդիրներ/հաղորդումներ չեն եղել:

Անկախ մոնիտորինգ. Կառավարությունն ընդհանուր առմամբ թույլատրել է տեղական և միջազգային իրավապաշտպան խմբերին, այդ թվում՝ ԽԿԿ-ին իրականացնել բանտերի և կալանավայրերի պայմանների մոնիտորինգ, և նրանք դա կանոնավոր կերպով իրականացրել են: Իրավասու մարմինները դիտորդներին թույլատրել են առանձնազրույցներ ունենալ բանտարկյալների հետ և թույլատրել են Կարմիր խաչի միջազգային կոմիտեին այցելել բանտեր և նախնական կալանքի կենտրոններ:

Իշխանությունները սակայն սահմանափակել են անկախ մոնիտորինգը՝ տեղական խմբերի կողմից: Արդարադատության նախարարությունը շարունակում էր մերժել ՀԴԽ դիտորդների մուտքը կալանքի տակ գտնվող որոշ անձանց մոտ, որոնց հետ կապված քննություն իրականացնող մարմինը հաղորդակցության սահմանափակման պահանջ էր առաջ քաշել: ՀԴԽ-ը նաև զրկված էր այդ անձանց մեկուսացման պայմանները դիտարկելու հնարավորությունից: ՀԴԽ-ն այս սահմանափակումները համարում էր կամայական և կարծում էր, որ քննություն իրականացնող մարմնի որոշումները չպետք է վերաբերվեն ՀԴԽ-ին: 2020թ. նոյեմբերին ՀԴԽ քննադատեց Արդարադատության նախարարությանը 2020թ. մարտին ընդունված նոր որոշման համար, որով կանոնակարգվում էր ՀԴԽ գործունեությունը, ինչը հակասում էր իշխանությունների հետ նախկին պայմանավորվածություններին: Ըստ ՀԴԽ հայտարարության՝ որոշմամբ լրացուցիչ սահմանափակումներ էին սահմանվել իրենց գործունեության համար, օրինակ՝ ՔԿՀ-ի ղեկավարությունից ոչ-աշխատանքային ժամերին այցելության համար թույլտվություն ստանալը: Որոշմամբ նաև նշանակալիորեն մեծացվել էին առաջադրվող փորձի ու որակավորման պահանջները ՀԴԽ-ի անդամների համար, որոնք բոլորն այդ աշխատանքը կատարում են հասարակական հիմունքներով: ՀԴԽ-ը մտահոգություն հայտնեց, որ նոր պահանջները կարող են հանգեցնել մի իրավիճակի, երբ իրենք չեն կարողանա ներգրավել նոր անդամներ, ինչն էլ կկրճատի ՔԿՀ-ները մշտադիտարկելու իրենց հնարավորությունը:

Օգոստոսի 5-ին իրավապաշտպան Ժաննա Ալեքսանյանը հայտնեց, որ ՔԿՀ-ի ղեկավարությունը խոչընդոտել է նախնական կալանքի տակ գտնվող Կարեն Հովհաննիսյանի հետ իր հանդիպմանը «Արմավիր» ՔԿՀ-ում՝ ստիպելով հանդիպել նրան սանհանգույցին հարող միջանցքում: Հովհաննիսյանը ձերբակալվել է 2018թ. սպանության մեղադրանքով, սակայն նա չի ընդունում մեղադրանքը: ՔԿՀ մուտք գործելիս նա չի ունեցել առողջական խնդիրներ, սակայն նա անվասայլակով էր ու շատ

առողջական խնդիրներ ուներ, որոնք կապում էր ոստիկանությունում ու ՔԿՀ-ում ծեծի ու խոշտանգումների ենթարկվելու ու համարժեք բուժօգնություն չստանալու հետ։ Ըստ Գլխավոր դատախազության՝ հատուկ քննչական ծառայությունը օգոստոսի 20-ին խոշտանգումների մեղադրանքով քրեական գործ էր հարուցել 2019թ. միջադեպի կապակցությամբ, որի ժամանակ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի անվտանգության 6 աշխատակից ծեծի են ենթարկել այնտեղ պահվող Հովհաննիսյանին՝ ստիպելու, որ նա դադարեցնի հացադուլը։ Հոկտեմբերի 10-ին գործը փոխանցել է ԱԱԾ-ին հետագա քննության համար, իսկ տարեվերջի դրությամբ այն դեռ ընթացքի մեջ էր։

<u>Դրական տեղաշարժեր</u>. Դիտորդները որպես տարվա ընթացքում նկատված դրական տեղաշարժ նշում էին ՔԿՀ-ներում անազատության մեջ պահվող անձանց թվի նվազումը և կոռուպցիայի նվազումը։ Դիտորդները նշում էին, որ անազատության մեջ պահվող անձանց թվի կրճատման արդյունքում տեսակցությունների բարելավում է եղել։ Ըստ Արդարադատության նախարարության՝ հաշմանդամություն ունեցող անձանց համար թեքահարթակներ են կառուցվել կենտրոնական հիվանդանոցում և «Արմավիր» և «Հրազդան» ՔԿՀ-ներում, ցնցուղարանների ու սանհանգույցների օգտագործման հարմարություններ են ստեղծվել կենտրոնական հիվանդանոցում։ Հաշմանդամություն ունեցողների համար բոլոր ՔԿՀ-ներում առնվազն մեկ հարմարեցված զուգարանակոնք կա, իսկ «Հրազդան» ՔԿՀ-ում լոգասենյակում տեղադրվել է հատուկ սարք։

դ) Կամայական ձերբակալություն կամ կալանավորում

Սահմանադրությամբ և օրենքներով արգելվում է կամայական ձերբակալումը և կալանավորումը և սահմանվում ձերբակալության կամ կալանքի օրինականությունը դատարանում վիճարկելու իրավունք յուրաքանչյուրի համար։ Տարվա ընթացքում եղել են կամայական կամ ընտրովի ձերբակալությունների մասին մի քանի հաղորդումներ։ Եղել են հաղորդումներ, որ 2020թ. էթնիկ հայկական ուժերի կողմից ապօրինի կերպով մահապատժի են ենթարկվել որոշ ադրբեջանցի գերեվարվածներ (տես՝ Մաս 1. է)։

Ձերբակալության ընթացակարգեր և վերաբերմունքը կալանքի ընթացքում

Օրենքը սահմանում է, որ քննություն իրականացնող մարմինն անձին բերման ենթարկելուց հետո երեք ժամվա ընթացքում պարտավոր է կամ ձերբակալել անձին, կամ ազատ արձակել: Անձին արգելանքի վերցնելուց հետո 72 ժամվա ընթացքում քննություն իրականացնող մարմինը պարտավոր է կամ ազատել ձերբակալված անձին, կամ մեղադրանք առաջադրել և կալանքի տակ պահելու կարգադրագիր ստանալ դատավորից: Օրենքը ոստիկանությունից պահանջում է տեղեկացնել արգելանքի վերցված անձանց իրենց բերման ենթարկելու կամ ձերբակալելու պատճառների, ինչպես նաև լռություն պահպանելու, փաստաբան ունենալու, հեռախոսազանգ կատարելու և ձերբակալության պահից սկսած փաստաբանի կողմից ներկայացված լինելու նրանց իրավունքների մասին: Գործում է գրավով ազատ արձակելու տարբերակ: Ըստ իրավապաշտպան փաստաբանների՝ դեռևս շարունակվում է նախնական կալանքի զգալի կիրառումը որպես խափանման միջոց, երբ փախուստի չդիմելու ու գործի քննությանը չխոչընդոտելու ապացուցողական բեռը թողնվում է կասկածյալին: Բացի այդ, փաստաբանները նշում էին, որ կալանքի մասին դատարանների որոշումներն ավելի ու ավելի անկանխատեսելի էին դարձել և նմանօրինակ հանգամանքների առկայության դեպքում կասկածյալների համար սահմանվել են կալանքի տարբեր պայմաններ:

Օգոստոսի 4-ին «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ը հայտնել է, որ ըստ պաշտոնական վիճակագրության 2020թ. կիրառված ազատազրկման տեսքով պատժամիջոցները 2018 և 2019թթ. համեմատ նվազել են, իսկ ոչ ազատազրկման տեսքով պատժամիջոցները, ազատազրկման պայմանական չկիրառման և տուգանքների կիրառմամբ պատիժները՝ ավելացել:

Մեղադրյալները ձերբակալության պահից սկսած ունեն փաստաբան ունենալու իրավունք, իսկ անվճարունակ լինելու դեպքում արգելանքի վերցված անձն օրենքով իրավասու է ունենալ հանրային պաշտպան: Ըստ իրավապաշտպան դիտորդների կալանավորվածներից քչերն են իմացել փաստաբան ունենալու իրենց իրավունքի մասին: Դիտորդները նշում էին, որ ոստիկանությունը որոշ դեպքերում խուսափում էր ապահովել պատշաճ իրավական գործընթացի ներքո ընձեռվող իրավունքների ապահովումը՝ պաշտոնապես ձերբակալելու փոխարեն քաղաքացիներին կանչելով և պահելով որպես գործով անցնող վկաներ, այլ ոչ կասկածյալներ: Այս կերպ ոստիկանությունը կարողացել է այդ անձանց հարցաքննել՝ շրջանցելով փաստաբան

ունենալու նրանց իրավունքը: Այդ պրակտիկան առավել ակնառու կերպով կիրառվում էր մարզերում:

Մայիսի 25-ի իր զեկույցում ԽԿԿ-Ը նշում էր, որ «ոչ պաշտոնապես զրուցելու» պրակտիկան (երբ մարդուն նախքան կասկածյալ ճանաչելն ու կալանավորելը «հրավիրում են» ոստիկանություն, սովորաբար՝ հեռախոսազանգով), որը նախկինում բազմիցս քննադատվել էր ԽԿԿ-ի կողմից. դեռ ամբողջովին վերացած չէ, հատկապես՝ Երևանից դուրս:

<u>Կամայական ձերբակալություն</u>. Տարվա ընթացքում եղել են կամայական և ընտրովի ձերբակալությունների մասին մի քանի հաղորդումներ: Օրինակ՝ հունիսի 27-ին կառավարության շենքի մոտ ոստիկանության հատուկ ուժերի կողմից բերման է ենթարկվել մի քաղաքացի, որն իբր գոռում էր «Նիկոլ, հեռացի՛ր»՝ նկատի ունենալով վարչապետին:

Ըստ ՀՔԱՎ գրասենյակի՝ ոստիկանությունը Մարց գյուղում կալանավորել է 20-30 հոգու (շատերին գիշերային ժամի)՝ պարզելու, թե օգոստոսի 14-ին ավտովթարից անմիջապես հետո ովքեր են հարձակվել ոստիկանների վրա: Վթարը տեղի էր ունեցել կասկածյալների մեքենայի ոստիկանական հետապնդումից հետո, որի արդյունքում երկու զոհ էր եղել: Ինչպես նշում էին ՀՔԱՎ գրասենյակից, ոստիկանները վթարից հետո խոչընդոտել են բուժօգնություն ցուցաբերմանը շտապ օգնության կողմից: Ըստ հաղորդումների ոստիկաններն ուժով մտել են տները և առանց ներկայանալու բերման են ենթարկել կասկածյալների ազգականներին, որոնք ոստիկանության հետ եղած բախմանը որևէ առնչություն չունեին: Բերման ենթարկելու հիմքերի կամ անձի կարգավիճակի վերաբերյալ որևէ տեղեկություն որևէ մեկին չի ներկայացվել: Ըստ հաղորդումների՝ ոստիկանները հարվածներ են հասցրել բերման ենթարկվածներից ոմանց գլխին, կոկորդին, հարկադրել են ձեռքերը վերև պահած կանգնել՝ երկար ժամանակ չթույլատրելով նստել: Հարևան գյուղի մի բնակչի բերման են ենթարկել, «մինչև մահվան դուռ» ծեծել, ապա հասկացել, որ սխալ մարդու են բռնել: ՀՔԱՎ գրասենյակից նաև հայտնում էին, որ որոշ անձանց մի քանի անգամ էին բերման ենթարկել՝ վախի մթնոլորտ ստեղծելով գյուղի բնակիչների շրջանում, որոնց մի մասը վախենում էր տնից դուրս գալ, մյուսներն էլ վախենում էին գիշերը տանը մնալ:

Հունիսի խորհրդարանական ընտրություններին նախորդած ընտրական քարոզարշավի ընթացքում և վերընտրվելուց հետո վարչապետ Փաշինյանը պնդում էր, որ իր կուսակցությունը գործի կդնի «պողպատյա մանդատը»՝ խստիվ պատասխանատվության ենթարկելու բոլոր նրանց, ովքեր կխախտեն օրենքը։ Ընդդիմությունը և մարդու իրավունքների հարցերով մի քանի անկախ դիտորդներ պնդում էին, որ այդ ջանքերում առավելապես թիրախավորված էին վարչապետի ընդդիմադիրները։ Ընտրությունների ընթացքում և դրանից հետո Սյունիքի մարզի ընդդիմության հետ կապեր ունեցող համայնքի 4 ղեկավար ձերբակալվեց՝ յուրացումների կամ կաշառքի հետ տարբեր ենթադրյալ հանցանքների մեղադրանքով։ Քանի որ համայնքի ղեկավարները հրապարակավ դեմ էին արտահայտվել Փաշինյանին, նրանց ձերբակալությունը հարցերի տեղիք տվեց՝ կապված օրենքի հնարավոր ընտրովի կիրառման և ձերբակալության քաղաքական շարժառիթների, ինչպես նաև համայնքի ղեկավարների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հետ կապված (տես՝ Մաս 3. Քաղաքական կուսակցություններ և քաղաքական մասնակցություն)։

<u>Նախնական կալանք</u>. Երկարատև նախնական կալանքը շարունակում էր մնալ խնդրահարույց։ Որոշ դիտորդներ համարում էին, որ քննիչները չափից շատ են օգտագործում նախնական կալանքը՝ որպես մեղադրյալներին խոստովանության դրդելու ու ինքնախոստովանական ապացույցներ ձեռք բերելու միջոց։

Թեպետ օրենքը պահանջում է, որ դատախազները ներկայացնեն լավ պատճառաբանված հիմնավորվում կալանքի տակ պահելու ժամկետը երկու ամիսը մեկ երկարաձգելու համար, դատավորները, որպես կանոն, երկարաձգել են կալանքն անհասկանալի հիմքերով։ Իրավասու մարմինները հիմնականում հարգել են օրենքի այն դրույթը, որով նախնական կալանքը չպետք է ընդհանուր առմամբ գերազանցի 6 ամիսը՝ սովորական գործերով և 12 ամիսը՝ ծանր գործերի պարագայում։ Գործը դատախազի կողմից դատարան ուղարկելուց հետո օրենքով հետագա կալանքի վերաբերյալ ժամկետային սահմանափակումներ չկան, այլ միայն նշվում է դատաքննության «ողջամիտ տևողության» մասին։ Դատավորները բավարարել են դատախազներից պարբերաբար ստացվող դատական լսումները հետաձգելու առաջարկները։ Դատախազները դատական լսումների ձգձգման պատասխանատվությունը դնում են դատապաշտպանների և նրանց՝

պաշպանությանը նախապատրաստվելու համար լրացուցիչ ժամանակ տրամադրելու միջնորդությունների վրա: Երկարատև դատաքննությունները նաև պայմանավորված են բոլոր օղակի դատարանների խիստ ծանրաբեռնվածությամբ, իսկ դատաքննությունները ողջամիտ ժամկետներում ապահովելու մեխանիզմներ չկային:

2020թ. հունվարին ՄԻՊ գրասենյակն արտահերթ զեկույց հրապարակեց ժամկետների պահանջները չպահպանելու համար դատարանների պատասխանատվության ու ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջի խախտման դեպքում իրավունքի վերականգնման մեխանիզմների բացակայության մասին: Ըստ զեկույցի Բարձրագույն դատական խորհրդի 2019թ. տվյալներով միայն Երևանում 155 քրեական գործ և 1.682 քաղաքացիական գործ արդեն երկու տարուց ավել վարույթում էին գտնվում, իսկ որոշները՝ ավելի քան 10-ը տարի: Այսպիսի 1.123 գործ գտնվում էր ընդամենը յոթ դատավորի վարույթում:

Փետրվարի 13-ին «Հետք. հետաքննող լրագրողներ» ՀԿ-ն ուսումնասիրեց 10-ը քաղաքացիական, 10-ը վարչական և 10-ը քրեական գործ, որոնք արդեն առնվազն 5 տարի գտնվում են դատարանի վարույթում: «Հետքի» ուսումնասիրությունը բացահայտեց, որ գործեր կան, որոնք ընթացքի մեջ են մինչև 18 տարի ու դրանցով դեռևս չի կայացվել վերջնական դատական ակտ: Գործը վերլուծող փորձագետները նաև նկատեցին, որ ձգձգումների հանգեցնող հիմնական գործոնները սուբյեկտիվ գործոններ էին պայմանավորված դատավորների կողմից կամայական որոշումների կայացմամբ, ինչպես օրինակ՝ գործն այլ դատավորի մակագրելը, դատավորի վերապատրաստման դասընթացի մասնակցելը կամ արձակուրդում գտնվելը, դատական նիստերի միջև ընկած երկար ժամանակը (օրինակ՝ 2-6 ամիս) կամ հետաձգումը տեխնիկական պատճառներով, երկարատև փորձաքննությունները և օրենսդրական բացերը: 2020թ. դատական նիստերի ձգձգումներ եղան նաև ՔՈՎԻԴ-19 համավարակի և 2020թ. աշնան ռազմական գործողությունների հետևանքով: Շատ դեպքերում քրեական գործի դատաքննությունն այնքան է ձգձգվում, որ վաղեմության ժամկետի լրանալու կապակցությամբ գործի վարույթը կարճվում է: Երբ ամբաստանյալները համաձայնում են այս հիմքով կարճել գործը, դա նշանակում է, որ փոխհատուցման համար չեն կարող դիմել, ինչը նախատեսված է արդարացման պարագայում. հատուցման հնարավորությունից զրկվում են նաև տուժողները: «Հետքը» դիտարկել էր մի գործ, որով ամբաստանյալը 11.5 տարի գտնվել էր

նախնական կալանքի տակ, մինչ նրա գործն անցնում էր բողոքարկման ու վերանայման վարույթներով։

Թեպետ Բարձրագույն դատական խորհուրդը 2020թ. մարտին որոշում կայացրեց կիրառել առցանց հեռահաղորդակցության գործիքներ, որպեսզի ՔՈՎԻԴ-19 համավարակի պայմաններում դատավարություններ իրականացվեն, սակայն դատերի ձգձգումները շարունակվում էին։ «Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիա» ՀԿ-ի ու «Իրավունքի ուժը» ՀԿ-ի 2020թ. մշտադիտարկման համատեղ զեկույցի համաձայն մի շարք դատարաններում ձգձգումներ եղան պայմանավորված տեխնիկական պատրաստվածություն բացակայությամբ. ձգձգված լսումները ներառում էին նաև հրատապ հարցեր, ինչպիսիք են խափանման միջոցի կիրառումը։ Օրենքը քրեական գործերի պարագայում չի նախատեսում հեռահաղորդակցության միջոցների կիրառում և ըստ դիտորդների՝ գործերի ձգձգումը հիմնականում պայմանավորված էր դատավորների ու դատախազների դատարան չներկայանալու փաստով։

Կալանքի տակ գտնվողի կողմից կալանքի օրինականությունը դատարանում վիճարկելու կարողությունը. Օրենքը կասկածյալներին թույլ է տալիս վիճարկել իրենց ձերբակալության օրինականությունը։ Մարդու իրավունքների հարցերով որոշ փաստաբաններ նկատում էին, որ անգամ երբ դատարանը որոշում է, որ ձերբակալությունը եղել է օրենքի խախտումով, միևնույնն է դատարանները բավարարում են նախնական կալանքի վերաբերյալ քննչական մարմնի միջնորդությունը։

ե) Արդար հրապարակային դատաքննության իրավունքի մերժում

Չնայած օրենքը նախատեսում է անկախ դատական համակարգ, սակայն ընդհանուր առմամբ անկախություն ու անաչառություն դատական համակարգի կողմից ի ցույց չի դրվում։ Հանրային վստահությունը դատական համակարգի անկողմնակալության հանդեպ մնացել է ցածր, իսկ քաղաքացիական հասարակության կազմակերպությունները փաստում էին, որ Արդարադատության համակարգում մնացել են բազմաթիվ պաշտոնյաներ, որոնք ծառայել են նախորդ իշխանություններին և շարունակաբար վճիռներ են կայացնում ի նպաստ նրանց։ Մտահոգիչ էր մնում

դատավորների կոռումպացվածությունը։ Տարվա ընթացքում ՀԿ-ները շարունակում էին հաղորդել, որ բազմաթիվ դատավորներ ունեն նշանակալի քանակությամբ գույք և ակտիվներ, որոնք իրենց աշխատավարձերին համահունչ չեն, և նկատում էին, որ բոլոր գործող դատավորների օբյեկտիվ չափանիշների վրա հիմնված վեթինգի բացակայությունը, հատկապես՝ Բարձրագույն դատական խորհրդի անդամների ու Սահմանադրական դատարանի դատավորների մասով, խաթարում են դատական համակարգի բարեվարքությունը։

Ըստ իրավապաշտպան-փաստաբանների որոշ իրապես անկախ դատավորներ մի շարք դատական որոշումների առնչությամբ բախվել են վերադասի, այդ թվում Բարձրագույն դատական խորհրդի ներքին ճնշումներին։ Ըստ հաղորդումների, այդօրինակ ճնշումները ներառում էին ակնարկներ առ այն, որ նրանց համբավն ու կարիերան հնարավոր է տուժեն, և ընտրովի պատժի սպառնալիքներ կապված աննշան խախտումների հետ։ Փաստաբանները նշում էին, որ նման հանգամանքներ ունեցող գործերի վերաբերյալ դատական որոշումները դարձել էին անկանխատեսելի, իսկ որոշ բարձր հնչեղություն ունեցող կոռուպցիոն գործերում որոշումները կարծես քաղաքական շարժառիթներ ունեին։ Նրանք պնդում էին, որ ընթացիկ դատական բարեփոխումները միայն ժամանակավոր ու մեկանգամյա լուծումներ էին և ոչ համակարգային բարեփոխում։

2020թ. մարտին խորհրդարանը դատական օրենսգրքում ու մի շարք հարակից օրենքներում փոփոխություններ կատարեց, որոնք իրավական հիմքեր են ապահովում դատավորի գույքային ձեռքբերումների օրինականության, պրոֆեսիոնալիզմի և մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի ստուգման ու գնահատման համար։ 2020թ. ապրիլին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների մի խումբ քննադատեց դատավորների թեկնածուների բարեվարքության ստուգման այս մեխանիզմները։ Ըստ այդ խմբի հայտարարության՝ անլուրջ էր բարեվարքության ստուգման խիստ սահմանափակ հնարավորությունը, որովհետև բարեվարքության ստուգում իրականացվելու էր միայն ՀՀ Սահմանադրական դատարանի դատավորների, դատավորների, դատախազների, քննիչների թեկնածուների համար, իսկ գործող դատավորների, ինչպես նաև դատախազների, քննիչների համար բարեվարքության ստուգում չէր նախատեսվում։ Սահմանադրությունն արգելում է

օրենքի հետադարձ կիրառումը, և գործող դատավորների վեթինգը հնարավոր դարձնելու համար պետք է փոփոխություն կատարել սահմանադրության մեջ։

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն իրականացնում է գործող դատավորների և դատավորի, դատախազի, քննիչի հանրային պաշտոնների առաջադրված թեկնածուների հայտարարագրված գույքի ու ակտիվների վերլուծություն։ Հանձնաժողովի կողմից դատավորների ունեցվածքի ուսումնասիրության հիման վրա սեպտեմբերի 3-ի դրությամբ նախաձեռնվել են երեք կարգապահական, երեք վարչական և մեկ քրեական գործ։

Ըստ դիտորդների՝ վարչական դատարաններն համեմատաբար ավելի շատ ներքին անկախություն ունեին, սակայն կադրային պակաս կար, իսկ լսումների համար արդեն իսկ երկար հերթ էր գոյացել։

Իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ ապահովում էին դատական որոշումների կատարումը։

ՀԿ-ների հաղորդումների համաձայն դատավորները, որպես կանոն, անտեսել են մեղադրյալների պնդումներն այն մասին, որ ցուցմունքն իրենցից կորզվել է ֆիզիկական բռնության միջոցով։ Իրավապաշտպանները շարունակում էին մտահոգություն հայտնել այն փաստի վերաբերյալ, որ դատարանները հիմնվել են այնպիսի ապացույցների վրա, որոնք մեղադրյալների պնդմամբ ձեռք են բերվել ճնշման ներքո, հատկապես այն դեպքերում, երբ այդ ապացույցը դատապարտման հիմք է դարձել։

Դատաքննություն

Սահմանադրությամբ և օրենքներով սահմանվում է արդար և հրապարակային դատաքննության իրավունք, սակայն դատական համակարգը չի իրացրել այս իրավունքը։

Օրենքով սահմանվում է անմեղության կանխավարկածը, սակայն կասկածյալների այս իրավունքը սովորաբար չի հարգվել։ Դատավարությունների ժամանակ իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ ամբաստանյալներին մանրամասնորեն ներկայացրել են նրանց առաջադրված մեղադրանքները։ Օրենքով պահանջվում է ապահովել անվճար թարգմանություն ամբաստանյալների համար՝ ըստ

անհրաժեշտության: Օրենքով պահանջվում է, որ հիմնականում դատական լսումները լինեն դռնբաց, սակայն առանձին դեպքերում, մասնավորապես՝ «հանրության բարքերի», պետական անվտանգության կամ «մասնակիցների անձնական կյանքի պաշտպանության» շահերից ելնելով լինում են բացառություններ: Ամբաստանյալներն ունեն իրենց ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք, իսկ պետությունը պարտավոր է ամբաստանյալներին հանրային պաշտպան առաջարկել, եթե նրանք դա պահանջում են: Պաշտպանների թվի սղության պատճառով երբեմն այս պարտավորության իրականացումը Երևանից դուրս չի ապահովվել:

Օրենքի համաձայն ամբաստանյալները կարող են պահանջել առերեսում վկաների հետ, ներկայացնել ապացույցներ, ծանոթանալ գործի նյութերին նախքան դատավարությունը, սակայն ամբաստանյալներն ու նրանց փաստաբանները շատ սահմանափակ հնարավորություն են ունեցել առարկություններ ներկայացնելու պետական մեղադրողի կողմից ներգրավված վկաներին կամ ոստիկաններին, մինչդեռ դատարանները կանոնավոր կերպով հակված են եղել ընդունել մեղադրող կողմի նյութերը: Օրենքն արգելում է ոստիկաններին ի պաշտոնե ցուցմունք տալ, եթե նրանք չեն հանդիսանում գործով վկա կամ տուժող: Դատավորները չէին ցանկանում ընդունել առարկություններ կապված ոստիկանության փորձագետների հետ՝ խոչընդոտելով ամբաստանյալի պատշաճ պաշտպանության հնարավորությանը: Քրեական գործերում դատավորների վերահսկողությունը վկաների ցանկի ու հնարավոր վկաներին հրավիրելու նպատակահարմարության որոշման հարցերում նույնպես խոչընդոտ է եղել պաշտպանության համար: Պաշտպանությունը ներկայացնող փաստաբանները բողոքում էին, որ երբեմն դատավորներն իրենց թույլ չեն տվել խնդրել պաշտպանության վկաների ներկայության ապահովումը: Ըստ փաստաբանների և տեղական ու միջազգային իրավապաշտպան դիտորդների, այդ թվում և Եվրախորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի՝ մեղադրող կողմը քրեական Արդարադատության համակարգում գերիշխող դիրք է զբաղեցրել: Մարդու իրավունքների կազմակերպությունները նշում էին, որ բավարար չէին դատախազների անկողմնակալության ու հաշվետվողականության պահանջները, և չկային օբյեկտիվ չափանիշներ գլխավոր դատախազի թեկնածուների առաջադրման ու ընտրության համար:

Ամբաստանյալները, դատախազները և տուժողները դատավճռի բողոքարկման իրավունք են ունեցել և հաճախ իրացրել են այդ իրավունքը: Տարեվերջի դրությամբ դեռ շարունակվում էր Կարեն Կունգուրցևի դեմ Դավիթ Հովակիմյանի սպանության փաստով 2013թ. հարուցված քրեական գործով դատաքննությունը, որը մեղադրյալի հանդեպ անարդարացի էր համարում անգամ տուժողի ընտանիքը: Հոկտեմբեր 15-ին Վանաձորի ընդհանուր իրավասության դատարանը երկրորդ անգամ արդարացրեց Կունգուրցևին, սակայն նոյեմբերի 4-ին մեղադրող կողմը մեկ անգամ ևս բողոքարկեց՝ ավելի հետաձգելով Հովակիմյանի իրական սպանողին բացահայտելուն ուղղված քննությունը: 2018թ. Վճռաբեկ դատարանի որոշմամբ գործը ետ էր ուղարկվել ընդհանուր իրավասության դատարան, իսկ Կարեն Կունգուրցևը գրավով ազատ էր արձակվել: 2015թ. Կարեն Կունգուրցևն սկզբնապես արդարացվել էր, սակայն 2017թ. քրեական վերաքննիչ դատարանը բեկանել էր որոշումը և վճռել նրան դատապարտել յոթ տարվա ազատազրկման: Տուժողի ընտանիքը և Մարդու իրավունքների հելսինկյան ասոցիացիան շարունակում էին պաշտպանել Կունգուրցևի անմեղության մասին պնդումները՝ համոզված, որ Դավիթ Հովակիմյանի իրական սպանողը եղել է ԱԱԾ ծառայության պաշտոնյայի որդի, և վերջինս օգտագործելով իր դիրքը ներազդել է ոստիկանության ու դատախազության վրա և հանցանքը մեղսագրվել է Կունգուրցևին: 2018թ. դատական վարույթի վերսկսումից հետո գործով հիմնական վկաներից երկուսը ներողություն խնդրեցին Կունգուրցևից և տուժողի հորից՝ վեց տարի առաջ իրավապահների ճնշման ներքո տված կեղծ ցուցմունքի համար, և ցուցմունք տվեցին, որն ըստ էության արդարացնում էր Կունգուրցևին:

Քաղաքական բանտարկյալներ և կալանավորվածներ

Վստահարժան հաղորդումներ երկրում քաղաքական բանտարկյալների կամ կալանավորվածների մասին չեն եղել:

Քաղաքացիական դատավարություն ու դատական պաշտպանության միջոցներ

Թեպետ քաղաքացիները մարդու իրավունքների ենթադրյալ ոտնահարման դեպքում վնասի փոխհատուցման կամ ոտնահարումը դադարացնելու հայցերով իրավասու են դիմել դատարաններ, սակայն դատարանները լայնորեն ընկալվել են որպես կոռումպացված կառույց: Քաղաքացիները նաև հնարավորություն են ունեցել

սահմանադրական դատարանում վիճարկել հիմնարար իրավունքներն ու ազատությունները խախտող օրենքների կամ օրենսդրական ակտերի սահմանադրականությունը: Ըստ որոշ փաստաբանների՝ ստորին ատյանի դատարանները չէին հետևում վճռաբեկ դատարանի, ՄԻԵԴ-ի և սահմանադրական դատարանի նախադեպերին: Արդյունքում, ընդհանուր իրավասության դատարանները շարունակել են գործել միևնույն իրավական սխալները:

Ըստ մի փորձագետի, որը հիշատակված է «Հետքի» փետրվարի 13-ի «Ուշացված արդարադատությունը մերժված արդարադատություն է» ուսումնասիրության մեջ, դատարան դիմելու հետևանքով նույնիսկ դատը շահելու պարագայում երկարատև վարույթի պատճառով քաղաքացին ավելի շատ վնաս է կրում, քան նախնական վնասը:

Տեղում իրավական կարգավորման միջոցները սպառելուց հետո քաղաքացիները պետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների հնարավոր խախտումների վերաբերյալ իրենց գանգատները կարող են ներկայացնել ՄԻԵԴ-ին: Կառավարության կողմից ՄԻԵԴ-ի որոշումների կատարման պատկերը միանշանակ չէ: Պետությունն ընդհանուր առմամբ կատարել է ՄԻԵԴ-ի վճիռները՝ տրամադրելով ՄԻԵԴ-ի սահմանած դրամական փոխհատուցումները և վերաբացելով որոշ գործեր: Երբ վճիռ է կայացվում այնպիսի գործով, որի հանդեպ կիրառելի է ՄԻԵԴ-ի նախկին որոշումներից մեկը, դատարաններն ըստ հաղորդումների հաճախ չեն հետևում կիրառելի ՄԻԵԴ նախադեպերին:

զ) Կամայական կամ ապօրինի միջամտություն անձնական և ընտանեկան կյանքի, բնակարանի անձեռնմխելիության կամ նամակագրության գաղտնիության նկատմամբ

Սահմանադրությամբ արգելվում են չարտոնված խուզարկությունները և ամրագրվում է քաղաքացիների անձնական կյանքի և հաղորդակցության գաղտնիությունը: Իրավապահ կառույցները միշտ չէ, որ հետևել են այս արգելքներին:

Իրավապահ մարմինները չեն կարող օրինականորեն հեռախոսային խոսակցությունները լսել, նամակագրությանը հետևել կամ խուզարկություն կատարել, եթե դատավորից չեն ստացել նման թույլտվություն, որը պետք է հիմնված լինի հանցավոր գործողությունների մասին համոզիչ ապացույցների վրա:

Սահմանադրությամբ սակայն նախատեսվում են բացառություններ, երբ հաղորդակցության գաղտնիությունը կարող է սահմանափակվել առանց դատական կարգադրագրի, երբ անհրաժեշտ է պաշտպանել պետական անվտանգությունը, և պայմանավորված հաղորդակցության մաս կազմողների հատուկ կարգավիճակով: Չնայած իրավապահ մարմիններն ընդհանուր առմամբ հետևել են այս իրավական ընթացակարգին, սակայն դիտորդները պնդում են, որ որոշ դատավորներ հաճախ ԱԱԾ-ի և Ոստիկանության գաղտնալսման կամ հետևելու այլ միջնորդագրերը բավարարելիս չեն պահանջել հանցավոր գործունեության հիմնավոր ապացույցներ, ինչը պահանջվում է օրենքով: Մյուս կողմից, ըստ հաղորդումների այս իրավական պահանջը պահպանվել է ՀՔԾ-ի, Քննչական կոմիտեի կամ Պետական եկամուտների կոմիտեի միջնորդագրերի դեպքում: Իրավապաշտպան-փաստաբանները հայտնում էին, որ եղել են դեպքեր, երբ քրեական քննությունների շրջանակում գաղտնալսել են հաղորդակցությունը փաստաբանի և պաշտպանյալի միջև: Նման գաղտնալսումն օրենքով արգելված է:

է) Հակամարտությանն առնչվող չարաշահումներ

Սպանություններ. Տարեվերջի դրությամբ պատկան մարմիններում քննվում էր 2020թ. աշնանը Հայաստանի, Հայաստանի աջակցությունը վայելող անջատողականների և Ադրբեջանի միջև ընթացող ինտենսիվ ռազմական գործողությունների ընթացքում տեղ գտած ապօրինի սպանության երկու դեպք (տես նաև՝ Մարդու իրավունքների մասին զեկույցի Ադրբեջանին վերաբերող գլուխը):

Հակամարտության կողմերը մեկը մյուսին վայրագությունների մեջ մեղադրող հայցերով բողոքներ են ներկայացրել ՄԻԵԴ-ին: Այդ գործերով դատարանը դեռևս վճիռներ չէր կայացրել:

Համաձայն մայիսին «Միջազգային համագործակցություն հանուն մարդու իրավունքների» (IPHR) և «Truth Hounds» ՀԿ-ների համատեղ զեկույցի, վերնագրված՝ «Երբ մարմրող ածուխները բոցավառվում են. միջազգային մարդասիրական իրավունքի ու մարդու իրավունքների խախտումները Լեռնային Ղարաբաղի 2020թ. պատերազմի ընթացքում», եղել են առաջնային կասկած հիմնավորող ապացույցներ, առ այն որ էթնիկ հայկական զինված ուժերի կողմից ապօրինի կերպով մահապատժի

են ենթարկվել վիրավոր և գերեվարված երկու ադրբեջանական զինյալ։ Ապացույցը երկու տեսանյութ էր իրենից ներկայացնում։ Քանի որ «Միջազգային համագործակցություն հանուն մարդու իրավունքների» և «Truth Hounds» ՀԿ-ները տեսանյութերի իսկությունը հաստատելու հնարավորություն չեն ունեցել, ուստի զեկույցում նշված է. «Եթե հետագա քննությամբ այս սպանությունները հաստատվեն, ապա դրանք ակնհայտորեն [միջազգային մարդասիրական իրավունքի] խախտում կհամարվեն կյանքի ու անձի նկատմամբ բռնության արգելման մասով և կհամարվեն Ժնևյան կոնվենցիաների ծանր խախտում։ Վիրավոր ադրբեջանցի զինծառայողների սպանությունը հավասարապես … քրեորեն պատժելի է Հայաստանի քրեական օրենսգրքով և հանդիսանում է կյանքի իրավունքի ծանր խախտում … ըստ [Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի]»։

Ապրիլի 24-ին Ադրբեջանի գլխավոր դատախազությունն Ադրբեջանի Քելբաջարի շրջանի Բաշլիբել բնակավայրում որոնողական աշխատանքներ նախաձեռնեց՝ բացահայտելու 1993թ. ենթադրաբար հայկական զինված ուժերի կողմից սպանված ադրբեջանցիների գերեզմանները։ Ըստ Ադրբեջանի գլխավոր դատախազության գտնվել է 12 ադրբեջանցի քաղաքացիական անձի աճյուն։ Եվս 3 աճյուն հայտնաբերվել է հունիսին, և մի քանի աճյուններ ամփոփող մի գերեզման էլ հայտնաբերվել է օգոստոսի 30-ին։

Ըստ Ադրբեջանի գլխավոր դատախազության դեկտեմբերի 9-ի տվյալների՝ 2020թ. նոյեմբերի հրադադարից հետո նախկինում Հայաստանի կողմից վերահսկվող ադրբեջանական տարածքներում ականների պայթյուններից զոհվել են ադրբեջանցի 7 զինծառայող և 29 քաղաքացիական անձ, վիրավորվել են ևս 109 զինծառայող և 44 քաղաքացիական անձ։

Ֆիզիկական բռնություն, պատիժ և խոշտանգումներ. «Երբ մարմրող ածուխները բոցավառվում են. միջազգային մարդասիրական իրավունքի ու մարդու իրավունքների խախտումները Լեռնային Ղարաբաղի 2020թ. պատերազմի ընթացքում» զեկույցում «Միջազգային համագործակցություն հանուն մարդու իրավունքների» և «Truth Hounds» ՀԿ-ներն ադրբեջանական նախկին գերիների հետ վարած հարցազրույցների և գերիներից մեկի նկատմամբ բռնություն գործադրելու մեկ տեսանյութի հիման վրա նշում էին, որ «ադրբեջանական առնվազն 7 ռազմագերի հայկական/Լեռնային

Ղարաբաղի զինված ուժերի ձեռքին ենթարկվել են խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի»: Զեկույցում նաև նշված էր, որ վատ վերաբերմունքի երեք այլ դրվագների վերաբերյալ կային տեսանյութեր, սակայն «Միջազգային համագործակցություն հանուն մարդու իրավունքների» և «Truth Hounds» ՀԿ-ները դրանց հետ կապված չեն կատարել իսկության անկախ ստուգում ու հավելյալ քննության կարիք կա: Այս վերջին դրվագներից մեկում վատ վերաբերմունքի հետևանքով տուժողը մահացել է, սակայն սա անկախ կերպով հաստատված չէ: Ըստ զեկույցի «Պարբերական ծեծը, պահման անմարդկային պայմանները, բուժօգնության ու այլ տարրական կարիքների մերժումը, դաժանությունն ու նվաստացումը, որ նկարագրում էին վկաները կամ որը պատկերված էր տեսանյութերում, համարժեք է Ժնևյան կոնվենցիաների ծանր խախտման [հայկական/Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի կողմից] և դեմ է [Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով] սահմանված խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի արգելքին»: Զեկույցում նշված էր, որ նման արարքները պատժելի են նաև երկրի քրեական օրենսգրքով:

Ըստ այդ նույն զեկույցի՝ սոցիալական ցանցերից վերցված 8 տեսանյութերում երևում է «հայկական/Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի կողմից մահացած ադրբեջանցի զինծառայողների հանդեպ դրսևորած ոչ պատշաճ վերաբերմունքն ու դիակապտությունը»: Տեսանյութերի անկախ ստուգում չի կատարվել և տեսանյութերում դրսևորվող վարքագծի հետ կապված հետագա քննության կարիք կա: Այնուամենայնիվ, զեկույցն այդ տեսանյութերը բնութագրում է որպես հայկական/Լեռնային Ղարաբաղի զինված ուժերի կողմից «դիակապտության բազմաթիվ դեպքերի առաջնային կասկած հիմնավորող ապացույց»: Զեկույցը եզրակացնում է. «Ենթադրյալ դիակապտության բոլոր արժանահավատ պնդումները պահանջում են հավելյալ քննություն: Եթե դրանք հաստատվեն ըստ կիրառելի ստանդարտների, ապա այդ վարքագիծը կհամարվի [միջազգային մարդասիրական իրավունքով] սահմանված դիակապտության և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի արգելքի խախտում և կարող է նաև պատժելի լինել …Հայաստանի քրեական օրենսգրքով»

Ըստ կառավարության՝ իրավասու մարմինները 2020թ. աշնան հակամարտության ժամանակ հայ զինծառայողների գործողությունների հետ կապված 2020թ.

դեկտեմբերին 6 քրեական գործ են հարուցել «զինված հակամարտության ընթացքում միջազգային մարդասիրական իրավունքի լուրջ խախտումների» մեղադրանքով: Այս 6 գործերից 4-ում առկա էր ենթադրյալ սպանության, խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի դրվագ, 1-ում՝ ենթադրյալ սպանություն և խոշտանգում, իսկ վերջինում՝ ենթադրյալ սպանություն: Հունիսի 22-ին կառավարությունը բոլոր 6 գործերը միավորեց մեկ գործի մեջ: Քննությունը տարեվերջի դրությամբ դեռ ընթացքի մեջ էր:

Միջազգային մի ֆոտոլրագրող հազարավոր լուսանկարներով փաստագրել էր ադրբեջանական տասնյակ գերեզմանների քանդումը Ֆիզուլիում, Աղդամում, Զանգիլանում, Քելբաջարում և Ջեբրայիլում: Գերեզմանները պղծվել էին, իսկ որոշ դեպքերում գերեզմանը թալանելու ապացույցներ կային, մասնավորապես՝ առանձին գերեզմանների վրա փորված փոսեր. այլ տեղերում կային ծանր շինարարական տեխնիկայի կիրառմամբ քանդելու և արտաշիրմելու ապացույցներ: Աղդամի Նահատակների պուրակ այցելած օտարերկրացիները լուսանկարել էին անցքերը, որտեղ մի ժամանակ թաղված էին դիեր. գերեզմանոցում մնում էր մեկ հատ կոտրված տապանաքար: Տապանաքարերի նկատմամբ բարբարոսության հետևանքով շատ քիչ գերեզմաններ էին մնացել անխաթար: Շատ գերեզմաններում տապանաքարի վրա քանդակված դիմանկարը մուրճով կամ այլ գործիքով ոչնչացվել էր: Բացի այդ, ադրբեջանական գերեզմաններից դիերն արտաշիրմվել էին, ապա հանել էին ոսկյա ատամները, իսկ գանգերն ու ոսկորներն այս ու այն կողմ էին ցրված ադրբեջանական գերեզմանոցում: Ըստ ֆոտոլրագրողի՝ հայկական գերեզմաններին ձեռք տված չէր:

ՄԱՍ 2. ՀԱՐԳԱՆՔ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ

ա) Խոսքի ազատություն, այդ թվում՝ մամուլի և այլ ԶԼՄ-ների անդամների համար

Երկրի սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խոսքի ազատությունը, այդ թվում՝ մամուլի և այլ ԶԼՄ-ների անդամների համար: Թեպետ կառավարությունն

ընդհանուր առմամբ հարգում էր այս իրավունքը, սակայն տարվա ընթացքում խորհրդարանը մի շարք սահմանափակումներ ընդունեց՝ փոփոխություններ կատարելով օրենսդրության մեջ, որով մարտից կտրուկ բարձրացավ վիրավորանքի և զրպարտության համար նախատեսված առավելագույն քաղաքացիական տուգանքների չափը, հուլիսից քրեականացվեց անձին ծանր վիրավորանք հասցնելը՝ հայհոյելը կամ նրա արժանապատվությունն այլ ծայրահեղ անպարկեշտ եղանակով վիրավորելը, իսկ օգոստոսին զգալի սահմանափակումներ եղան Ազգային ժողովի աշխատանքը լուսաբանող հավատարմագրված լրագրողների համար:

Խոսքի ազատություն. Անհատներն ընդհանուր առմամբ ազատ քննադատել են կառավարությանը՝ առանց հաշվեհարդարից վախենալու: Սակայն, հուլիսի 29-ին իրավասու մարմինները մեղադրանք առաջադրեցին մարդու իրավունքների եզդի ակտիվիստ Սաշիկ Սուլթանյանին քրեական օրենսգրքի 226-րդ հոդվածով, որն արգելում է «ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելուն, ռասայական գերազանցությանը կամ ազգային արժանապատվությունը նվաստացնելուն ուղղված գործողությունները», նրա այն կարծիքի համար, թե կառավարությունը բավարար միջոցներ չէր ձեռնարկում երկրի եզդի փոքրամասնությանը խտրականությունից պաշտպանելու համար: Դատապարտվելու դեպքում նրան սպասում է 3-6 տարվա ազատազրկում: Մի խումբ ՀԿ-ներ զգուշացնում էին, որ այս գործը «խափանում է փոքրամասնությունների ներկայացուցիչների կամ այլոց կողմից փոքրամասնություններին վերաբերվող խտրական կամ մարդու իրավունքներին վերաբերվող այլ խնդիրների հրապարակային արծարծումը»: «Հյուման ռայթս վոտչը» քրեական հետապնդումն համարում էր չարամիտ, իսկ քրեական մեղադրաքը՝ շինծու: Օգոստոսի 6-ին ՄԻՊ-ը հայտարարեց, որ իր գրասենյակը կիսում է այս մտահոգությունները՝ նկատելով, որ անգամ եթե Սուլթանյանի հնչեցրած քննադատական խոսքը որոշ մասերով իրականությանը չի համապատասխանում, դա չի նշանակում, որ նա պետք է պատժվի քրեական պատասխանատվությամբ:

Հուլիսի 30-ին խորհրդարանն ընդունեց օրենսդրություն, որով քրեականացվեց «ծանր վիրավորանք հասցնելը» կամ անձի արժանապատվությունը «ծայրահեղ անպարկեշտ եղանակով» վիրավորելը (Մանրամասները տես ստորև՝ «Զրպարտության/սուտ մատնության մասին օրենքներ» ենթավերնագրում):

Խոսքի ազատությունը մամուլի և այլ ԶԼՄ-ների, այդ թվում՝ առցանց մեդիայի անդամների համար. Օգոստոսի 18-ին, անվտանգության նկատառումներին հղում կատարելով, Ազգային ժողովի ղեկավարությունը խորհրդարանում աշխատող հավատարմագրված լրագրողներին վերաբերող ընթացակարգերում փոփոխություններ կատարեց՝ սահմանափակելով նրանց մուտքը խորհրդարանի որոշ տարածքներ և այլևս թույլ չտալով, որ օրենսդիրներից հարցազրույցներ վերցնեն նիստերից դուրս գալու կամ աշխատասենյակ գնալու ճանապարհին։ Նախքան պաշտոնապես այս փոփոխությունները կատարելը խորհրդարանի վարչական անձնակազմն արդեն սկսել էր լրագրողների հանդեպ այդ սահմանափակումները կիրառել։ Օգոստոսի 5-ին Panorama.am-ի ֆոտոլրագրող Լիլիան Գալստյանին թույլ չտրվեց մուտք գործել Ազգային ժողով, իսկ հաջորդիվ նա կորցրեց իր հավատարմագրումը՝ խորհրդարանի անվտանգության անցակետից արված ֆոտոռեպորտաժի համար։ Տեղի մեդիա տիրույթը դիտարկող կառույցները դատապարտեցին նրա մուտքը թույլ չտալու փաստը և խորհրդարանի ղեկավարության գործողությունները՝ նշելով, որ նման նախաձեռնությունները հետադիմական են և չհիմնավորված, և դրանք վտանգում են իշխանությունների ու ԶԼՄ-ների միջև քաղաքակիրթ հարաբերություններ հաստատելու ջանքերը։ Օգոստոսի 17-ին Գալստյանի հավատարմագրումը վերականգնվեց։

Օգոստոսի 11-ին իշխանական կուսակցության և ընդդիմության պատգամավորների միջև սկսված քաշքշուկի ժամանակ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը պահանջեց դադարեցնել նիստի ուղիղ հեռարձակումը։ Անվտանգության աշխատակիցներն արգելեցին հավատարմագրված լրագրողներին և օպերատորներին նկարահանել միջադեպը՝ խորհրդարանում իրենց գտնվելու վայրից։ Տեղի մեդիա տիրույթը դիտարկող կառույցները դատապարտեցին ԱԺ նախագահի քայլը՝ պնդելով, որ նա գերազանցել է իր լիազորությունները և նշելով, որ քաղաքացիներն իրավունք ունեն տեղեկանալ, թե ինչ է կատարվում խորհրդարանում։

Օգոստոսի 24-ին Ազգային ժողովի նիստի ժամանակ պատգամավորների միջև սկսված քաշքշուկի ժամանակ անվտանգության աշխատակիցները լրագրողական հարթակից ուժով հեռացրեցին ԶԼՄ ներկայացուցիչներին՝ թույլ չտալով, որ նրանք շարունակեն նկարահանել։ Անվտանգության աշխատակիցները news.am լրատվական կայքի օպերատոր Հայկ Տոնոյանին սպառնացին զրկել հավատարմագրումից, եթե նա

շարունակի նկարահանումը. նրանք ջնջեցին ծեծկռտուքի տեսանյութը: Նմանատիպ մի միջադեպ էլ եղավ օգոստոսի 25-ին՝ խորհրդարանում տեղի ունեցած մեկ այլ քաշքշուկի ժամանակ: Օգոստոսի 25-ին մեդիա տիրույթը դիտարկող կառույցները հանդես եկան հայտարարությամբ՝ դատապարտելով իրենց բնորոշմամբ ԶԼՄ-ների ներկայացուցիչների նկատմամբ խորհրդարանում տեղի ունեցող շարունակական ոտնձգությունները: Հայտարարությամբ սահմանափակումները որակվեցին որպես անօրինական քայլեր ընդդեմ խոսքի ազատության և հանրության տեղեկացված լինելու իրավունքի:

Լրատվամիջոցները քաղաքականապես բևեռացված էին: Հեռարձակող լրատվամիջոցների և լրագրերի գերակշիռ մասն արտացոլում էին իրենց սեփականատերեր հանդիսացող մասնավոր անձանց կամ խմբերի քաղաքական դիրքորոշումները և ֆինանսական շահերը, և դրանց մեծ մասն ըստ հաղորդումների կապ ունեն նախկին իշխանությունների կամ խորհրդարանական ընդդիմադիր կուսակցությունների հետ: Տարվա ընթացքում կառավարության հետ կապ ունեցող ԶԼՄ-ների թիվն սկսել է ավելանալ, քանի որ պետական պաշտոնյաներն ու նրանց հետ կապ ունեցող անձինք ըստ հաղորդումների սկսել են ձեռք բերել նոր ԶԼՄ-ներ: Այս ԶԼՄ-ները ևս հակված էին արտացոլել իրենց հետ կապ ունեցողների դիրքորոշումները:

Հեռարձակող լրատվամիջոցները, հատկապես հանրային հեռուստատեսությունը շարունակում էին մնալ որպես նորությունների ու տեղեկատվության ստացման առաջնային աղբյուրներից մեկը բնակչության մեծ մասի համար: Ըստ լրատվական որոշ դիտորդ կառույցների՝ հանրային հեռուստաընկերությունը շարունակել է ներկայացնել լրատվություն և քաղաքական բանավեճեր՝ իշխանամետ դիրքերից, չնայած այն շարունակում էր հասանելի մնալ ընդդիմադիր ձայների համար: Հանրային հեռուստատեսության կողմնակալության դրսևորումները հատկապես ակնհայտ են եղել նախընտրական ժամանակահատվածում: Հունիսի 20-ի խորհրդարանական ընտրությունների նախօրեին «Երևանի մամուլի ակումբի» կատարած մեդիա դաշտի մշտադիտարկումը մատնանշում էր, որ հանրային հեռարձակողը հատկացված եթերաժամանակի ծավալի առումով ամենաքիչ ուշադրության է արժանացրել հիմնական ընդդիմադիր ուժին՝ «Հայաստան» դաշինքին: Զեկույցում նաև ընդգծված էր,

որ հանրային հեռուստատեսությունը նախընտրական բանավեճերի մշակույթը ներդնելու ուղղությամբ լուրջ աշխատանք է արել։

Սոցիալական հարթակների օգտատերերն ազատորեն արտահայտել են իրենց կարծիքը նոր և նախկին կառավարությունների վերաբերյալ տարբեր սոցիալական հարթակներում: Սակայն նախընտրական շրջանում շարունակել են ավելանալ, իսկ հետո փոքր-ինչ նվազել են սոցիալական ցանցերում կեղծ էջերի օգտագործումն ու մեդիա տիրույթը մանիպուլյացիաների ենթարկելու փորձերը: Ըստ լրատվական տիրույթի դիտորդ կառույցների կառավարությանը թիրախավորելու համար անհատների կողմից համակարգային կերպով օգտագործում էին մանիպուլյացիոն այնպիսի տեխնոլոգիաներ, ինչպիսիք են՝ հիբրիդ կայքերը, հակասական բլոգերները, տրոլինգը, անանուն թելեգրամյան ալիքները և շինծու ֆեյսբուքյան խմբերն ու կեղծ նորությունները: Եղել են հաղորդումներ կառավարության հետ կապեր ունեցող անհատների կողմից նույնպես կեղծ օգտահաշիվներ կիրառելու մասին, սակայն ոչ համակարգային կերպով: Հատկապես շատ էր ապատեղեկատվությունը կապված նոր կորոնավիրուսին ու պատվաստմանն առնչվող հարցերի շուրջ, որի հետևանքով մեդիա տիրույթը դիտարկող կառույցները սկսեցին փաստերի ստուգման ավելի կուռ միջոցներ ձեռնարկել:

Երկրի սակավաթիվ անկախ լրատվամիջոցները, հիմնականում՝ առցանց լրատվամիջոցներ, ինքնաբավ չեն և գոյատևում են միայն միջազգային դրամաշնորհների ու օժանդակության հաշվին և ունեն սահմանափակ եկամուտներ գովազդից ու բաժանորդագրման վճարներից։

Մեդիա ոլորտի ընկերությունների սեփականատերերի հարցում հիմնականում բացակայել է թափանցիկությունը: Հայաստանի Հանրապետության Բաց կառավարման գործընկերության նախաձեռնության գործողությունների չորրորդ ծրագիրը (2018-20թթ.) ներառում է հանձնառություններ սեփականատերերի մասին տվյալների ապահովման վերաբերյալ: Հունիսի 3-ին Ազգային ժողովն ընդունեց մի շարք օրենքներ իրական սեփականատերերի մասին տվյալների հրապարակման մասին, որոնք գործողության մեջ մտան հունիսի 28-ից։ Սահմանափակ պատասխանատվությամբ բոլոր ընկերություններն ըստ օրենսդրության պետք է

ներկայացնեն իրենց իրական սեփականատերերին մինչև 2022թ. հունվարը, իսկ ԶԼՄ-ներն այդ պահանջը պետք է կատարեն մինչև նոյեմբերի 1-ը։

Բռնություն և ոտնձգություններ. «Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե» տեղական ՀԿ-ի հաղորդմամբ տարվա ընթացքում գրանցվել է լրագրողների նկատմամբ բռնության 18 դեպք, որից 6-ը կատարվել է պետական պաշտոնյաների կողմից։ Կոմիտեն հայտնում էր, որ վնասվածք են ստացել 20 լրագրող և օպերատոր։ Մի դեպքում՝ ցուցարարների մոտ 20 հոգանոց խմբի կողմից փետրվարի 23-ին Երևանում ոտնձգություն ու հարձակում էր եղել «Ազատություն» ռադիոկայանի լրագրող Արտակ Ղուլյանի և օպերատոր Կարեն Չիլինգարյանի նկատմամբ։ Ըստ Ղուլյանի՝ լրագրողներն ուղիղ միացմամբ լուսաբանում էին վարչապետ Փաշինյանի հրաժարականը պահանջող բողոքի ակցիան, երբ ցուցարարների մի խումբ սկսեց վիրավորական ու հայհոյախառն խոսքեր ուղղել նրանց՝ ասելով, որ «Ազատություն» ռադիոկայանը «շուտով կփակվի»։ Երբ Չիլինգարյանը ցուցարարներին խնդրեց չխոչընդոտել իրենց աշխատանքին, ցուցարարները սկսեցին բռունցքով ու ոտքով խփել Ղուլյանին ու Չիլինգարյանին՝ անմիջապես ոստիկանների աչքի առաջ. սա շարունակվեց 5-10 րոպե, որից հետո միայն ոստիկանությունը միջամտեց ու դադարեցրեց ծեծկռտուքը։ Լրագրողները կապտուկներ ունեին, սակայն լուրջ վնասվածքներ չէին ստացել։ Ըստ հաղորդումների՝ ցուցարարները վնասել էին նրանց սարքավորումները, կոտրել տեսախցիկը։ Գլխավոր դատախազությունը միջադեպի քննություն էր անցկացնում։

Դեպքերը, երբ պաշտոնյաներն են լրագրողների նկատմամբ ուժ կիրառել կամ փորձել ուժ կիրառել, ավելացել են տարվա երկրորդ կեսին։ Դեպքերի գերակշիռ մասում իրավապահները քրեական գործեր չեն հարուցել՝ հղում կատարելով իրավական հիմքերի բացակայությանը։ Օրինակ՝ մարտի 18-ին Հակոբ Արշակյանը, որն այդ ժամանակ զբաղեցնում էր բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի պաշտոնը, հայտնվեց տեսանյութում, որտեղ նա բռունցքով հարվածում էր Irakanum.am-ի լրագրող Փայլակ Վահրադյանի դեմքին այն բանից հետո, երբ վերջինս, տեսնելով նրան սրճարանում, հարցրեց, թե ինչ էր նա անում սրճարանում աշխատանքային ժամին։ Միջադեպից հետո Արշակյանը հրաժարական ներկայացրեց, սակայն ավելի ուշ ընտրվեց Ազգային ժողովի փոխխոսնակ։ Հատուկ քննչական

ծառայությունը քրեական գործ չհարուցեց՝ հղում կատարելով հանցակազմի բացակայությանը։

Հատուկ քննչական ծառայությունը որոշեց քրեական հետապնդում չիրականացնել իշխանական պատգամավոր Հայկ Սարգսյանի նկատմամբ, որն ընդդիմադիր «Հրապարակ» օրաթերթի լրագրող Անուշ Դաշտենցի ձեռքից վերցրել էր վերջինիս սմարթ հեռախոսը, երբ նա փորձել էր հարցազրույց վերցնել պատգամավորից։ Սարգսյանը վերցրել էր սմարթ հեռախոսը, փորձել ջնջել տեսանյութը, ապա հեռացել հեռախոսն իր հետ տանելով։ Պատգամավորը պաշտպանեց իր գործողությունները և մեղադրեց Դաշտենցին պատգամավորի մասնավոր կյանքի իրավունքը խախտելու մեջ։ Տեղի առաջադեմ լրատվական ՀԿ-ները Գլխավոր դատախազությունից պահանջեցին վերացնել Հատուկ քննչական ծառայության որոշումը և քրեական գործ հարուցել Սարգսյանի դեմ։ «Մենք պնդում ենք, որ այս միջադեպը մասնագիտական օրինական գործունեության խոչընդոտում է, սակայն եթե նույնիսկ քննիչն այդպես չի որակել [Սարգսյանի գործողությունները], ապա լրագրողի գույքն ապօրինի վերցնելը, անձնական տվյալների գաղտնիությունը խախտելը և տեղեկությունը չտարածելուն հարկադրելը բավարար հիմքեր են Հայկ Սարգսյանին պատասխանատվության ենթարկելու համար», - ասված էր համատեղ հայտարարության մեջ։

Զրպարտության/սուտ մատնության մասին օրենքներ. Մարտին Ազգային ժողովը փոփոխություն կատարեց քաղաքացիական օրենսգրքում՝ կտրուկ մեծացնելով վիրավորանքի ու զրպարտության համար նախատեսվող առավելագույն տուգանքների չափը։ «Ֆրիդոմ հաուսը» և տեղի լրատվական դաշտի դիտորդ կառույցները քննադատեցին օրենքը, նշելով, որ դա կարող է «սահմանափակել խոսքի ազատությունը»։ Փոփոխությունները գործողության մեջ մտան հոկտեմբերի 23-ին, այն բանից հետո, երբ հոկտեմբերի 5-ին Սահմանադրական դատարանն այն համարեց սահմանադրական։

Հուլիսի 30-ին արձակվող խորհրդարանն օրենք ընդունեց, որով քրեականացվեց «ծանր վիրավորանք հասցնելը» կամ անձի արժանապատվությունը «ծայրահեղ անպարկեշտ եղանակով» վիրավորելը։ Ըստ կատարված փոփոխությունների, որոնք գործողության մեջ մտան օգոստոսի 30-ից, սահմանվել են տուգանքներ՝ մինչև 500.000 ՀՀ դրամի (1.000 ԱՄՆ դոլարի) չափով ծանր վիրավորանք հասցնելու մեկ դրվագի համար, մինչև

1 միլիոն ՀՀ դրամի (2.000 ԱՄՆ դոլարի) չափով, թե անձի վերաբերյալ ծանր վիրավորանք պարունակող նյութերը տարածել են հանրայնորեն կամ արարքը կատարվել է անձի հանրային գործունեությամբ պայմանավորված, իսկ եթե այն պարբերաբար է կատարվում, ապա տուգանքներն ավելի բարձր են ու նաև նախատեսված է մինչև 3 ամսվա ազատազրկում: «Իմ քայլը» իշխանական խմբակցությունը նախագծի երկու ընթերցումն ու ընդունումն ավարտեց մեկ օրվա ընթացքում: Դեկտեմբերի 12-ի դրությամբ իրավապահներն այս նոր հոդվածով 166 քննություն են սկսել: Սեպտեմբերի 23-ին ԶԼՄ-ներում հաղորդում եղավ, որ ոստիկանությունն առաջին քրեական գործն է հարուցել Ֆեյսբուքում Փաշինյանի լուսանկարի տակ վիրավորական մեկնաբանություն թողնելու համար: Մեկ այլ օրինակ էլ, գրանցված սկզբնական շրջանում, ընդդիմադիր Նարեկ Սամսոնյանի ձերբակալումն էր դեկտեմբերի 14-ին՝ «Լուսավոր Հայաստանը» ներկայացնող Երևան քաղաքի ավագանու անդամ Դավիթ Խաժակյանի վերաբերյալ սոցիալական հարթակում կատարված գրառման համար:

Ազդեցությունը ոչ պետական շրջանակների կողմից. Ըստ ապրիլի 28-ին ՀՔԱՎ գրասենյակի հրապարակած՝ «Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկանք. Արտակարգ 2020-ը» զեկույցի 2018թ. հեղափոխությունից հետո քաղաքացիական հասարակության ակտիվությանը զուգահեռ ի հայտ եկան մի շարք նոր հակաժողովրդավարական նախաձեռնություններ ու շարժումներ, որոնք անբարենպաստ ազդեցություն էին գործում քաղաքացիական հասարակությանը վրա: Թեպետ դրանք դիրքավորվում էին հանրային դաշտում որպես քաղաքացիական հասարակության ինստիտուտներ, սակայն նրանց օրակարգը ոչ թե մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների պաշտպանությունն ու խթանումն էր, այլ պայքարը դրանց դեմ, որն ուղեկցվում էր ատելության, բռնության և ֆիզիկական սպառնալիքներ հրահրմամբ: Իրավապահների կողմից մի քանի քննություն սկսվեց այս խմբերի և դրանց գործունեության հետ կապված, սակայն անդամներից ոչ մեկի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացվեց:

Ինտերնետի ազատություն

Կառավարությունը չի սահմանափակել կամ ընդհատել ինտերնետի հասանելիությունը կամ գրաքննել առցանց բովանդակությունը և չեն եղել արժանահավատ հաղորդումներ առանց համապատասխան իրավական հիմքերի կառավարության կողմից մասնավոր առցանց նամակագրությանը հետևելու վերաբերյալ:

Ուսումնակրթական ազատություն ու մշակութային միջոցառումներ

Ուսումնակրթական ազատության ու մշակութային միջոցառումների մասով կառավարության կողմից չեն եղել սահմանափակումներ և կառավարությունը բացահայտ աջակցել է ուսումնակրթական ազատությանը:

ՁԼՄ-ներում մի շարք հաղորդումներ եղան, որ տարվա ընթացքում դպրոցների տնօրենների են ստիպել աշխատանքից ազատվելու դիմում գրել, որն ըստ լրատվամիջոցների պայմանավորված էր նրանց քաղաքական հայացքներով: Ըստ դիտորդների՝ նորանշանակ բոլոր տնօրեններն առերևույթ կապեր ունեին կառավարության հետ կամ կառավարության աջակիցներ էին: Օգոստոսի 3-ին Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց բարձրագույն կրթության մասին նոր օրենքի դրույթները, որոնք ըստ փորձագետների բուհերի կառավարումը կփոխանցեին կառավարությանը:

բ) Խաղաղ հավաքներ կազմակերպելու ու միավորումներ կազմելու ազատություն

Սահմանադրությամբ ու օրենքներով ամրագրված է խաղաղ հավաքների և միավորումներ կազմելու ազատության իրավունքը, և կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այս ազատությունները, սակայն կային որոշ սահմանափակումներ:

Խաղաղ հավաքների ազատություն

Թեև նախընտրական քարոզարշավի ընթացքում կառավարությունը հիմնականում հարգել է հավաքների ազատությունը, տեղական դիտորդներն արձանագրել են խաղաղ հավաքների նկատմամբ իշխանությունների մոտեցման անհամապատասխանություններ ողջ տարվա ընթացքում: Օրինակ՝ օգոստոսի 23-ին

ՀԿ-ները համատեղ հայտարարություն տարածեցին՝ քննադատելով ոստիկանությանը բիրտ ուժ կիրառելու համար՝ Երևանի համայնքներից մեկում բարձրահարկ շենքի կառուցման դեմ բողոքի խաղաղ ցույցը ցրելու ժամանակ։ Ըստ հաղորդագրության՝ օգոստոսի 20-21-ը ոստիկանության հատուկ ստորաբաժանումներն անհամաչափ ուժ են կիրառել քաղաքացիների նկատմամբ՝ ծանր վնասվածք հասցնելով մասնակիցներին, այդ թվում՝ անչափահասների և տարեցների, որոնցից երկուսը տեղափոխվել են հիվանդանոց։ Ըստ հաղորդագրության՝ ոստիկանությունը ոտնահարել է բերման ենթարկված քաղաքացիների իրավունքները՝ արժանապատվությունը նվաստացնող կարգով բռնի ուժով տեղափոխելով ոստիկանության բաժին՝ կիրառելով անհամաչափ միջոցներ և ապօրինի ընթացակարգեր։ Հաղորդվում էր, որ բաժնում ծեծի է ենթարկվել 19-ամյա մի երիտասարդ։ Իշխանությունները մի քանի քրեական գործեր են հարուցել ցուցարարների դեմ, սակայն ներգրավված ոստիկանների նկատմամբ որևէ գործողություն չի եղել։

Հավաքներ անցկացնելու ազատությունը սահմանափակվել է 2020թ. մարտին հաստատված արտակարգ դրության ընթացքում՝ ՔՈՎԻԴ-19 համավարակը զսպելու նպատակով։ Սահմանափակումները գործել են մինչև 2020թ. օգոստոսը, երբ կառավարությունը չեղարկեց հավաքների անցկացման սահմանափակումների մեծ մասը՝ թույլատրելով ցույցեր, երթեր և հանրահավաքներ՝ սոցիալական հեռավորության պահպանման ու դիմակներ կրելու պահանջներով։ Հավաքների անցկացման ազատությունը սահմանափակվել է նաև ռազմական դրության ժամանակ, որը սահմանվել էր 2020թ. սեպտեմբերին՝ Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների բռնկումից հետո։ Ռազմական դրությամբ սահմանված արգելքները ներառում էին հանրահավաքների անցկացման արգելք։ Սահմանափակումները պաշտոնապես հանվեցին 2020թ. դեկտեմբերին, իսկ ռազմական դրությունն ավարտվեց մարտի 24-ին։

Ապրիլի 28-ին ՀՔԱՎ գրասենյակը հրապարակեց «Ոստիկանության կողմից մարդու իրավունքների խախտման դեպքերի վերաբերյալ տեղեկանք. Արտակարգ 2020-ը» զեկույցը, որտեղ դիտարկվում էր ՔՈՎԻԴ-19-ի արտակարգ դրության ու ռազմական դրության ռեժիմներով պայմանավորված սահմանափակումների կիրառման ուղղությամբ ոստիկանության կատարած աշխատանքը։ Ըստ զեկույցի՝

քաղաքացիների կազմակերպած բողոքի ցույցերի ժամանակ ոստիկանական պաշտոնյաների արձագանքը չի եղել միատեսակ, կանխատեսելի, իրավական կամ համարժեք: Օրինակ՝ որոշ դեպքերում ոստիկանությունը չի կանխել բազմամարդ ցույցերը, այլ ուղղակի հորդորել է ֆիզիկական հեռավորություն պահպանել, այլ դեպքերում՝ ավելի քիչ մասնակիցների առկայության պարագայում, մասնակիցները կամայականորեն բերման են ենթարկվել, երբեմն անգամ նախքան ցույցի սկսվելը: Թեպետ արգելված էին 20 և ավել մասնակիցներով ցույցերը, ակցիաները և հանրային միջոցառումները, սակայն ոստիկանությունը բերման է ենթարկել անհատների, որոնք միայնակ բողոքի ակցիա էին իրականացնում:

Միավորումների ազատություն

Այս իրավունքն ամրագրված է սահմանադրությամբ ու օրենքներով և կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այն: Օրենքի համաձայն դատարանում իրենց շահառուների օրինական շահը ներկայացնելու ՀԿ-ների իրավասությունը սահմանափակվում է միայն շրջակա միջավայրի պահպանության հարցերով, ինչը հակասում է 2010 թ. Սահմանադրական դատարանի որոշմանը, որը թույլ է տալիս բոլոր հասարակական կազմակերպություններին դատարանում հանդես գալ որպես կողմ:

գ) Կրոնի ազատություն

Տես՝ Պետքարտուղարության Կրոնական ազատությունների մասին միջազգային զեկույցը www.state.gov/religiousfreedomreport/ էջում:

դ) Տեղաշարժվելու ազատություն և երկրից հեռանալու իրավունք

Օրենքը սահմանում է ներքին տեղաշարժի, արտասահմանյան ուղևորությունների, արտագաղթի և հայրենադարձության ազատությունը. կառավարությունն ընդհանուր առմամբ հարգել է այս իրավունքները:

ե) Ներքին տեղահանված անձանց կարգավիճակը և վերաբերմունքը նրանց հանդեպ

2020թ. դեկտեմբերի դրությամբ «Ներքին տեղահանության մոնիտորինգի կենտրոն» միջազգային ՀԿ-ի տվյալների համաձայն կա դեռևս մոտ 2.700 ներքին տեղահանված անձ (ՆՏԱ)՝ 1988-94թթ. տարհանված շուրջ 65.000 տնային տնտեսություններից: Երկրի որոշ ՆՏԱ-ների ու փախստականների համար ապահովված չէին համարժեք բնակարանային պայմաններ ու սահմանափակ էին տնտեսական հնարավորությունները: Կառավարությունը չուներ թիրախային ծրագրեր ու ընթացակարգեր, որոնք կխթանեին ՆՏԱ-ների ապահով, կամավոր, արժանապատիվ վերադարձին, վերաբնակեցմանը կամ ինտեգրմանը տեղում:

Ըստ կառավարության տվյալների 2020թ. աշնան ռազմական գործողությունների պատճառով Լեռնային Ղարաբաղից և հարակից տարածքներից տեղահանվածների թիվը կազմում էր մոտավորապես 100.000 հոգի, սակայն ըստ հաղորդումների նրանց մի մասը ետ է վերադարձել: Օգոստոսի դրությամբ ՄԱԿ-ի Փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի տվյալներով այդ տեղահանվածներից մոտ 37.000-ը մնում էին երկրում:

զ) Փախստականների պաշտպանություն

Իրավասու մարմինները համագործակցել են ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի և այլ մարդասիրական կազմակերպությունների հետ՝ ՆՏԱ-ներին, փախստականներին, վերադարձող փախստականներին, ապաստան հայցողներին, քաղաքացիություն չունեցող անձանց և խնդրո առարկա այլ անձանց աջակցության ու պաշտպանության հարցերում:

Ապաստանի հասանելիություն. Օրենքի համաձայն նախատեսվում է անձանց փախստականի կամ ապաստան հայցողի կարգավիճակի տրամադրում, և կառավարությունը ստեղծել է փախստականներին պաշտպանություն տրամադրելու համակարգ: ՔՈՎԻԴ-ով պայմանավորված արտակարգ դրության ընթացքում՝ 2020թ. մարտից մինչև սեպտեմբեր, ներդրվեց ապաստանի էլեկտրոնային համակարգ: 2020թ. սեպտեմբերին Միգրացիայի ծառայությունը վերադարձավ գործունեության բնականոն ընթացքին:

Ապաստան հայցելու փակված գործերը վերաբացելու դիմումները համարվում էին կրկնական դիմումի ներկայացում, որի դեպքում պահանջվում էր նոր տարրերի

ներառում. այս պրակտիկան խոչընդոտում էր ապաստանի հասանելիությանը։ Թեպետ կալանքի տակ գտնվողների գործերի ընթացքը 2020թ. սկզբներին ՔՈՎԻԴ-ով պայմանավորված արտակարգ դրության արդյունքում ժամանակավորապես կասեցված էր, սակայն մյուս գործերին ընթացք տրվում էր։ Օգոստոսի դրությամբ պահման վայրերում գտնվող որոշ դիմումներ մնում էին կասեցված։

Օրենքը հաշվի է առնում երեխա, մտավոր հաշմանդամություն ունեցող և տրավմա վերապրած ապաստան հայցողների առանձնահատուկ կարիքները և թույլ է տալիս ընդունել ապաստանի դիմումներ պահման վայրերում։ Իրավասու մարմիններն ընդհանուր առմամբ ապահովել են օրենքի կիրարկումը, սակայն այնքանով, որքան թույլ են տվել առկա սուղ ռեսուրսները։ Հատուկ կարիքներ ունեցող ապաստան հայցողներին հիմնականում օժանդակել է ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակը՝ իր գործընկեր ՀԿ-ների միջոցով։ Ծագումով ոչ-հայ փախստականները կարող են քաղաքացիություն ստանալ, որի համար պահանջվում է սահմանադրական գիտելիքների թեստավորում։ Քաղաքացիության շնորհման նման դեպքեր հազվադեպ էին լինում։

Ապաստանի հետ կապված ընթացակարգերի թերություններից էին թարգմանիչների համար պետական ֆինանսավորման սուղ լինելը և համապատասխանելիությունը դիտարկող պաշտոնյաների պատրաստվածության ու կարողությունների հետ կապված բացերը՝ զուգորդված որակի ապահովման կայուն մեխանիզմների ու կադրերի մասնագիտական կատարելագործման բացակայության հետ։ Ապաստան հայցողները մտահոգություն են հայտնել իրավական օգնություն ստանալու հասանելիության վերաբերյալ։ Թեպետ օրենքով Փաստաբանների պալատի Հանրային պաշտպանի գրասենյակի միջոցով անվճար իրավական աջակցություն է նախատեսվում ապաստան հայցողների համար, սակայն ըստ հաղորդումների՝ իրավական, կարողությունների ու գործառնական սահմանափակումները խոչընդոտել են այս իրավունքի իրացմանը։ Ապաստան հայցողի դիմում ներկայացնողի համար իրավական օգնությունը սահմանափակվում էր տեղեկատվության ու խորհրդատվության ապահովմամբ, մինչդեռ իրավական աջակցություն և իրավական ներկայացուցիչ հասանելի էր միայն ապաստան հայցելու մասին դիմումը մերժելու որոշումը բողոքարկելու ժամանակ։ Իրավական ներկայացուցիչ ապաստան հայցելու սկզբնական լսումների ժամանակ ապահովվում

էր միայն սահմանափակ դեպքերով և միայն այն ժամանակ, երբ դա ապահովվում էր ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի գործընկեր ՀԿ-ի կողմից: Լուրջ համակարգային սահմանափակումների, այդ թվում՝ Հանրային պաշտպանի գրասենյակի ոչ բավարար ու ոչ փորձառու անձնակազմի և թարգմանչական ծառայություններ չլինելու պատճառով ապաստան հայցողները, ըստ հաղորդումների, լուրջ դժվարությունների են բախվել ապաստանի մերժումները բողոքարկելու համար որակյալ իրավական աջակցություն ստանալու հարցում:

Դատավորներն ավելի պահպանողական մոտեցումներ են հանդես բերել ապաստանի հայցերի մասով՝ հղում կատարելով ազգային անվտանգության վերացական նկատառումներին և մերժելով հայցերն առանց դրանք մանրակրկիտ քննության առնելու: Արդյունքում՝ ավելի մեծ տարածում են ստացել ապաստանի հայցերի չհիմնավորված մերժումներն արժանահավատության բացակայության հիմքով: Թեպետ փախստականի կարգավիճակի որոշման ընթացակարգերը վերջին տասնամյակում բարելավվել են, սակայն մտահոգություններ կան կապված դատավորների կողմից ապաստանի հիմնական կոնցեպտների կիրառման և կրոնական հիմքով հայցերը դիտարկելիս անձնակազմի կողմից դրսևորվող սուբյեկտիվ մոտեցումների վերաբերյալ: Թեպետ տարվա ընթացքում որոշ դատավորների համար վերապատրաստումներ եղան ապաստանի հարցերով և որոշումների իրականացման վերաբերյալ, սակայն գործերը շարունակվում էին մակագրվել դատավորների, որոնք չունեին խորը գիտելիքներ իրավական այդ հարցի շուրջ: Դատարանի կողմից ուսումնասիրության համար երկար ժամանակ էր պահանջվում, քանի որ դատավորները շարունակում էին գերծանրաբեռնված մնալ:

Մայիսին Ազգային ժողովը փոփոխություններ ու լրացումներ կատարեց Փախստականների ու ապաստան հայցողների մասին օրենքում և վարչական դատավարության օրենսգրքում ՝ արագացնելու գործընթացն այն դիմողների համար, որոնք սահմանն անօրինական կերպով են հատել, կամ որոնց վերաբերյալ արտահանձնման պահանջ է ներկայացված և որոնք ենթակա են քրեական հետապնդման Հայաստանում. փոփոխությունները գործողության մեջ մտան օգոստոսին: Հաշվի առնելով իրավական աջակցություն ստանալու խոչընդոտները, որոնց բախվում էին ապաստան հայցողները, որոշ փորձագետներ մտահոգություն են

հայտնել, որ արագացված ընթացակարգը կարող է դիմողների համար առավել դժվար դարձնել սպառիչ լուծման հասնելը։

Իրավասու մարմինները երկրում գտնվող ազգությամբ հայ սիրիացիներին շարունակել են առաջարկել պաշտպանության զանազան տարբերակներ, մասնավորապես՝ արագացված ընթացակարգով քաղաքացիություն, կացության թույլտվություն կամ փախստականի կարգավիճակ։ Արագացված կարգով քաղաքացիության տրամադրմամբ Սիրիայից տեղահանված անձինք ձեռք բերեցին առողջապահական ու հիմնական սոցիալական ծառայությունների մասով նույն իրավունքները, ինչ երկրի քաղաքացիները։ Երկրում իրականացվող համապետական բարեփոխումներից շատերը, ինչպիսիք են սոցիալական ծառայությունների ավելացումը, կենսաթոշակների բարձրացումը, առողջապահական ծառայությունների հասանելիության մեծացումը կիրառելի են եղել նաև քաղաքացիություն ստացած փախստականների մասով։

Ազգությամբ ոչ-հայ փախստականները կարող են քաղաքացիություն ստանալու դիմում ներկայացնել, որի դեպքում պահանջվում է սահմանադրության մասին գիտելիքների ստուգում։ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակն այս կարգով տրամադրված քաղաքացիության դեպքերի մասին տեղեկություններ չուներ։

Վերադարձ. Եղել է մի քանի դեպք, երբ երկրում ապաստան հայցող ադրբեջանցիներին ենթադրաբար հարկադրվել է վերադառնալ։

Չարաշահումներ կապված միգրանտների, փախստականների ու քաղաքացիություն չունեցող անձանց հետ. Հաղորդումներ են եղել դիմումների ընդունման և ապաստան հայցողների կալանավորման հարցում ոչ համակարգային խտրականության մասին՝ հիմնվելով ապաստան հայցողի ծագման երկրի, ռասայի կամ կրոնի վրա, ինչպես նաև ինտեգրման հետ կապված դժվարությունների մասին։ Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները զեկուցել են աշխատանք փնտրող օտարերկրյա միգրանտների նկատմամբ խտրական վերաբերմունքի և կասկածանքի մասին։

Հունվար-օգոստոս ժամանակահատվածում ապաստան հայցող 7 օտարերկրացի կալանավորվել են օտարերկրյա արտահանձնման պահանջի հիման վրա, իսկ մեկ ապաստան հայցող կալանավորվել է սահմանի անօրինական հատման և

արտահանձնման պահանջի համար։ Հուլիսի դրությամբ՝ 11 ապաստան հայցող գտնվում էր պահման վայրում, որոնցից 5-ը Վրաստանից էի, իսկ մյուսները Թուրքիայից, Հնդկաստանից, Ռուսաստանից և Իրանից։

Օրենքը թույլ է տալիս պահման վայրերում ընդունել ապաստան հայցելու մասին դիմումներ։ Չնայած օրենքն ապաստան հայցողներին ազատում է սահմանի անօրինական հատման համար քրեական պատասխանատվությունից, իրավասու մարմինները պահանջել են, որ նրանք մնան պահման վայրում այնքան ժամանակ մինչև ապաստան ստանալու մասին հայցի վերաբերյալ որոշում կայացնելը կամ այնքան, որ լրանա պատժի չափը։ Մայիսին խորհրդարանի ընդունած նոր քրեական օրենսգրքում արտացոլված է Փախստականների մասին 1951թ. կոնվենցիայի՝ պատժից ազատելու մասին դրույթը, մասնավորապես՝ պետական սահմանի անօրինական հատման և կեղծ փաստաթղթերի օգտագործման համար։ Քրեական նոր օրենսգիրքը գործողության մեջ կմտնի 2022թ. հուլիսից։

Հիմնական ծառայությունների հասանելիություն. Աշխատատեղերի բացակայությամբ, հնարավորությունների դժվար հասանելիությամբ ու լեզվական արգելքներով պայմանավորված՝ շատ ապաստան հայցողներ չունեին աշխատելու կամ կրթություն ստանալու հնարավորություն, քանի դեռ իրենց գործն իրավական վարույթում էր գտնվում, թեպետ առկա էին այս իրավունքները պաշտպանող դրույթներ։ Լեզվական տարբերությունները ստեղծում էին խոչընդոտներ աշխատանքի, կրթության և օրենքով նախատեսվող ծառայությունների հասանելիության հարցերում։ Կառավարության ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում և ինտեգրման տանը (փախստականների համար նախատեսված բնակելի տարածք, որտեղ տեղավորել են ապաստան հայցողներին) հայերենի ու անգլերենի դասընթացներ են կազմակերպվել։

Փախստականներին տրամադրված կացարանները եղել են ոչ բավարար քանակի ու վատ պայմաններով, և այդ հարցը, ինչպես նաև զբաղվածությունը, շարունակում էր մնալ փախստականների ամենամեծ խնդիրը։ ՔՈՎԻԴ-19 համավարակի շրջանում փախստականների կենտրոնի փակ կացարաններում (բնակելի տարածք, որտեղ որոշ ապաստան հայցողների են տեղավորում) մարդիկ վախենում էին վարակի տարածումից, թեպետ տարվա ընթացքում կենտրոնում ՔՈՎԻԴ-19-ի դեպքեր չեն

գրանցվել: Տեղահանված շատ ընտանիքներ օգտվում էին ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի և սփյուռքի կազմակերպությունների կողմից իրականացվող վարձավճարի փոխհատուցման ծրագրից, որը փորձագետները համարում էին ժամանակավոր լուծում: Իշխանությունների կողմից գործարկվել էր փախստականների ինտեգրման տուն՝ նախատեսված 29 հոգու համար և փախստականի կարգավիճակի շնորհումից հետո առաջին մի քանի ամիսների համար այստեղ առաջարկում էին անվճար օթևան: Հանրային կացարաններում պայմանները սովորաբար չէին համապատասխանում ստանդարտներին, ինչի լարվածություն էր ստեղծում փախստականների շրջանում, քանի որ նրանց մի մասը վարձավճարի փոխհատուցում էր ստացել և բնակվում էր մասնավոր տներում:

Ընդհանուր առմամբ, դիտորդները համարժեք էին գնահատում առողջապահական համակարգի հասանելիությունը փախստականների և ապաստան հայցողների համար, սակայն նկատում էին, որ ապաստան հայցողները որոշ դժվարությունների էին բախվում, քանի որ էլեկտրոնային առողջապահության ArMed համակարգն իրենց համար հասանելի չէր՝ կապված առավելապես լեզվական խոչընդոտների հետ: Այս համակարգը թույլ է տալիս բժշկական հետազոտության կամ ծառայությունների համար նախապես գրանցվել և ապահովում է պատվաստման կարգավիճակի մասին տեղեկություններ, ինչը պահանջվում է երկրից դուրս ուղևորությունների պարագայում: Ծառայություն մատուցողներից մեկը նշում էր, որ որոշ հաստատություններ, օրինակ՝ պոլիկլինիկաները, բանկերը, որոշ մասնավոր գործատուներ որպես անձը հաստատող փաստաթուղթ չեն ընդունում Կոնվենցիայի հիման վրա տրված ճամփորդական փաստաթուղթը (տրված Հայաստանի կողմից առ այն, որ ներկայացնողը փախստական է և նրան ապաստան է տրամադրվել):

Կրթության հասանելիությունը փախստականներից շատերի համար խնդրահարույց է՝ պայմանավորված լեզվով: Խոչընդոտ են նաև տրանսպորտային ծախսերը, ուսումնական պարագաները, հագուստը և ծաղրը/բուլինգը մյուս սովորողների կողմից:

Հիմնարար լուծումներ. Կառավարությունն ընդունել է փախստականներ վերաբնակեցման համար և երկրի տարածքում բնակվող փախստականներին

առաջարկել է քաղաքացիություն ստանալու հնարավորություն: Մայիսին կառավարությունն ընդունեց Միգրացիայի պետական կառավարման հայեցակարգը, որը նախատեսում է մշակել 2021-31թթ. ինտեգրման ռազմավարությունը և դրա իրականացման 2021-26թթ. գործողությունների ծրագիրը: Հայեցակարգով ինտեգրման ծրագրեր են առաջարկվում նաև Արևմտյան Եվրոպայի երկրներից ինքնակամ վերադարձած կամ արտաքսված անձանց համար:

է) Քաղաքացիություն չունեցող անձինք

Ըստ պաշտոնական տվյալների երկրում գտնվող քաղաքացիություն չունեցող անձանց թիվը հունիսի 30-ի դրությամբ կազմում էր 892 հոգի: Քաղաքացիություն չունեցող, քաղաքացիություն չունենալու ռիսկի ներքո գտնվող ու փաստաթղթեր չունեցող անձանց թվի, գտնվելու աշխարհագրական վայրերի ու այլ հարցերի շուրջ առկա տեղեկատվությունը սահմանափակ էր: Քաղաքացիության մասին օրենքով նախատեսվում է քաղաքացիության շնորհում երկրի տարածքում ծնված քաղաքացիություն չունեցող երեխաներին: Դեկտեմբերի 8-ին խորհրդարանն ընդունեց քաղաքացիության մասին օրենքի փոփոխությունները, որոնք գործողությանը մեջ կմտնեն 2022թ. հունիսի 25-ից: Փոփոխությունների նպատակը 1990-ականներին Ադրբեջանից տեղահանված անձանց քաղաքացիության շնորհման, ինչպես նաև քաղաքացիությունը կորցնելու հետ կապված դեռևս բաց հարցերի կարգավորումն էր:

ՄԱՍ 3. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Սահմանադրությամբ և օրենքներով քաղաքացիներին տրված է գաղտնի քվեարկության միջոցով իրացվող համընդհանուր ու հավասար ընտրական իրավունքի հիման վրա ազատ ու արդարացի պարբերական ընտրությունների միջոցով իշխանությունը փոխելու հնարավորություն:

Ընտրություններ և քաղաքական մասնակցություն

Կայացած վերջին ընտրությունները. Հունիսի 20-ին տեղի ունեցան արտահերթ խորհրդարանական ընտրություններ, որի ընթացքում ընդհանուր առմամբ հարգվեցին հիմնարար իրավունքներն ու ազատությունները և ընտրապայքարի դուրս եկածները կարողացան ազատ քարոզչություն իրականացնել: Ընտրություններին նախորդեց կարճ ու եռուն քարոզարշավը, որն առանձնացավ կոշտ ու սադրիչ հռետորաբանությամբ: Ընտրությունները տեղի ունեցան 2020թ. աշնանը Լեռնային Ղարաբաղի հակամարտության ինտենսիվ ռազմական գործողություններին ու 2020թ. նոյեմբերի հրադադարի հակասական հայտարարությանը հաջորդած բարձր լարվածության և բևեռայնացման պայմաններում: Հունիսի ընտրություններում Նիկոլ Փաշինյանի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը ստացավ քվեների 54 տոկոսը և գերակշիռ մեծամասնություն Ազգային ժողովում, իսկ սահմանադրական մեծամասնություն ունենալու համար չբավարարեց մեկ տեղ:

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) հովանու ներքո իրականացված միջազգային ընտրական դիտորդական առաքելությունը զեկույցը նշեց. «Հիմնարար իրավունքներն ու ազատություններն ընդհանուր առմամբ հարգվել են և ընտրապայքարի դուրս եկածները կարողացել են ազատ քարոզչություն իրականացնել»: Հոկտեմբերի 27-ի վերջնական զեկույցում նշված էր, որ ապրիլ-մայիս ամիսներին ընտրական օրենսգրքում կատարված փոփոխությունները «հանրայնորեն քննարկվել են … և աջակցության են արժանացել կուսակցությունների և քաղաքացիական հասարակության խմբերի մեծ մասի կողմից. առաջարկվող ընտրական բարեփոխումներին վերաբերյալ հանրային իրազեկումը հիմնականում ընկալվել է որպես ներառական: Այդուհանդերձ, Ազգային ժողովի կողմից փոփոխությունների ուշ ընդունումը և հետագա ուժի մեջ մտնելը քիչ ժամանակ են թողել կարգավորումները կիրառելու և ընտրողներին նոր ընթացակարգերի մասին իրազեկելու համար»: ԺՀՄԻԳ-ը հայտնում էր, որ չնայած իրենց դիտորդները տարածքային ընտրական հանձնաժողովների աշխատանքը գնահատել են որպես ընդհանուր առմամբ արհեստավարժ և թափանցիկ, հանձնաժողովի որոշումները՝ հակառակ օրենքի պահանջի, չեն հրապարակվել առցանց և միատեսակ եղանակով չեն ցուցադրվել՝ հանրությանը տեղեկացնելու համար: ԺՀՄԻԳ-ը նաև նշում էր, որ կենտրոնական և ընտրատարածքային հանձնաժողովների անդամները

մտահոգություն են հայտնել առ այն, որ կուսակցությունների կողմից առաջադրված տեղամասային հանձնաժողովների անդամներից շատերը, հատկապես՝ նախագահներն ու քարտուղարները «բավարար կրթություն և փորձառություն չեն ունեցել՝ իրենց պարտականությունները պատշաճ կերպով կատարելու համար»:

ԺՀՄԻԳ վերջնական զեկույցում նշված էր նաև, որ «Բանավեճային միջավայրը ստվերվել է ընդհուպ մինչև ընտրությունների օրը շարունակվող ծայրաստիճան կոշտ, անհանդուրժող, սադրիչ և խտրական հռետորաբանությամբ»: ԺՀՄԻԳ-ի կողմից առանձնացված այլ թերությունները ներառում էին. քաղաքական գործիչների և գործատուների կողմից մասնավոր հատվածի և հանրային ծառայողների նկատմամբ գործադրվող ճնշումների դեպքեր՝ քարոզարշավային միջոցառումներին հաճախելու համար, ընտրակաշառքի դեպքերի մասին պնդումներ, իշխող կուսակցության և պետության միջև սահմանագծերը հստակ չպահպանելը, վարչական ռեսուրսի չարաշահման մասին պնդումներ, քարոզարշավի ֆինանսավորման հետ կապված շարունակվող թերություններ, մասնավորապես կազմակերպչական ծախսերի ներառված չլինելը քարոզարշավային ծախսի իրավական սահմանման մեջ, ընտրական բողոքների հետ կապված իրավունակության նեղ շրջանակը:

Քարոզարշավի ընթացքում պնդումներ եղան ընտրակաշառքների մասին և դրանց հետ կապված իրավապահ մարմինների կողմից հարուցվեց 67 քրեական գործ: Հոկտեմբերի 15-ի դրությամբ ընտրակաշառքների հետ կապված քրեական գործերով մեղադրանք էր ներկայացված 35 հոգու:

Կուսակցություններ և քաղաքական մասնակցություն. Օրենքը չի սահմանափակում կուսակցությունների գրանցումը կամ գործունեությունը:

Իր վերջնական զեկույցում ԺՀՄԻԳ-ը նշել էր. «Ամբողջ քարոզարշավի ընթացքում պարբերաբար հնչել են նաև վարչական ռեսուրսի չարաշահման մասին պնդումներ, սակայն դրանք բավարար ու միատեսակ կերպով չեն քննվել»: ԵԱՀԿ դիտորդները նման բողոքներ ստացել են երկրի 10-ը մարզերից 4-ից և մայրաքաղաք Երևանից: Այլ դիտորդներ նշում էին, որ «վարչական ռեսուրսը» կիրառվել է թե՛ իշխող, թե՛ ընդդիմադիր ուժերի կողմից:

Տեղի են ունեցել բռնությամբ զուգորդված միջադեպեր քաղաքական գործիչների մասնակցությամբ: Օրինակ՝ հունիսի արտահերթ ընտրություններից հետո Լոռու

մարզպետ Արամ Խաչատրյանն ընդդիմությանն աջակցած համայնքների ղեկավարներին հրապարակային կոչ արեց հրաժարական ներկայացնել՝ պնդելով, որ «Քաղաքացիական պայմանագրի» հաղթանակը հավասարազոր է ընդդիմության հետ կապեր ունեցող համայնքի ղեկավարներին անվստահության քվե հայտնելուն: Լոռու մարզի Օձուն համայնքի ղեկավար Արսեն Տիտանյանը, որն աջակցել էր ընդդիմությանը, հրաժարական տալու կոչերի կապակցությամբ Խաչատրյանին մեղադրեց իր վրա հարձակվելու մեջ: Խաչատրյանը ժխտում էր դա: Քաղաքացիական հասարակության տեղի դիտորդներից մեկը նշում էր, որ հակամարտությունը համայնքի ղեկավարի ու մարզպետի միջև կապված էր Օձունում ընտրակաշառքով ձայներ գնելու հետ: Հարձակման հնչեցված մեղադրանքի հիման վրա քրեական գործ հարուցվեց, բայց սեպտեմբերի 22-ին ԶԼՄ-ներում հաղորդում եղավ, որ Հատուկ քննչական ծառայությունը գործը կարճել է:

Բռնություն տեղի ունեցավ նաև Ազգային ժողովի պատգամավորների միջև: Օրինակ՝ օգոստոսի 24-ին խորհրդարանականների միջև քաշքշուկ սկսվեց այն բանից հետո, երբ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը պահանջեց դահլիճից հեռացնել պատգամավոր Աննա Մկրտչյանին, որը վարչապետ Փաշինյանին «կապիտուլյանտ» անվանեց՝ ակնարկելով Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետ կապված 2020թ. նոյեմբերին ստորագրված հրադադարի պայմանավորվածությունը: Մեկ այլ քաշքշուկ էլ խորհրդարանում տեղի ունեցավ օգոստոսի 25-ին, երբ «Հայաստան» խմբակցության ղեկավար և պաշտպանության նախկին նախարար Մեյրան Օհանյանը ջրի շիշը շպրտեց «Քաղաքացիական պայմանագրի» պատգամավոր Հայկ Սարգսյանի վրա: Վերջինս «դավաճան» էր անվանել բոլոր նախկին պաշտպանության նախարարներին, որոնք հեռախոսազանգով մարդկանց էին ազատել զինվորական ծառայությունից: Այս քաշքշուկին հաջորդեց ծեծկռտուքը, որը սկսվեց այն բանից հետո, երբ «Քաղաքացիական պայմանագրի» պատգամավորները խորհրդարանում հարվածեցին «Հայաստան» խմբակցության մի քանի անդամների: Իրավապաշտպան ակտիվիստներից մեկը պնդում էր, որ անվտանգության աշխատակիցները միտումնավոր ուշ են արձագանքել այս միջադեպին:

Քարոզարշավի ընթացքում և հունիսի խորհրդարանական ընտրություններից հետո Փաշինյանը պնդում էր, որ իր կուսակցությունը գործի է դնելու «պողպատյա մանդատը»՝ խստիվ պատասխանատվության ենթարկելու օրենքը խախտող բոլոր

անձանց։ Ընդդիմությունը և մի շարք իրավապաշտպան դիտորդներ պնդում էին, որ այդ պատասխանատվությանն ուղղված քայլերում առավելապես թիրախավորվում էին վարչապետի ընդդիմադիրները։ Խորհրդարանական ընտրություններից հետո ընդդիմության հետ կապեր ունեցող Սյունիքի մարզի ներկա և նախկին համայնքի ղեկավարներ ձերբակալվեցին տարբեր մեղադրանքներով՝ լիազորությունների չարաշահում, պաշտոնեական կեղծիք, կաշառք։ Քանի որ այս համայնքների ղեկավարները հրապարակավ ընդդիմություն էին հայտնել Փաշինյանին, նրանց ձերբակալությունը հարցերի տեղիք տվեց՝ կապված օրենքի հնարավոր ընտրովի կիրառման և ձերբակալության քաղաքական շարժառիթների, ինչպես նաև համայնքի ղեկավարների նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտության հետ կապված։ Մեղրի և Սիսիան համայնքների նախկին ղեկավարներ Մխիթար Զաքարյանը և Արթուր Սարգսյանն ընտրվել էին պատգամավոր, սակայն կալանքից ազատ չէին արձակվել, ինչն ընդդիմադիրների պնդմամբ հակասում էր պատգամավորի անձեռնմխելիության պահանջին։ Նրանք ազատ արձակվեցին, երբ դեկտեմբերի 7-ին Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց, որ քաղաքացին Ազգային ժողովի պատգամավոր ընտրվելուն պես ձեռք է բերում անձեռնմխելիություն և կարող է ձերբակալվել կամ կալանավորվել միայն Ազգային ժողովի թույլտվությամբ։ Քաջարան համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանը, որը նույնպես հունիսի խորհրդարանական ընտրություններին նախընթաց ձերբակալվել էր, գրավով ազատ արձակվեց, իսկ Գորիս համայնքի վերընտրված ղեկավար Առուշ Առուշանյանը տարվերջի դրությամբ դեռևս մնում էր կալանքի տակ։

Տեղական պաշտոնյաների նկատմամբ քաղաքական ճնշումների մասին հաղորդումները շարունակվում էին մինչև տարեվերջ։ Օրինակ՝ դեկտեմբերին, ըստ հաղորդումների, Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագրի» մի քանի անդամների պետական պաշտոնները կամ մանդատները կորցնելու սպառնալիքով պարտադրվել էր քվեարկել քաղաքապետ Հայկ Մարությանին անվստահություն հայտնելու օգտին։ Դեկտեմբերի 22-ին քվեարկությամբ վարչապետ Փաշինյանի նախկին դաշնակից Մարությանը հեռացվեց պաշտոնից։

Հաղորդումներ են եղել մի շարք բնակավայրերում հոկտեմբեր-դեկտեմբերի ամիսներին տեղի ունեցած տեղական ընտրություններում ընդդիմադիր

թեկնածուների հանդեպ ճնշումների վերաբերյալ, մասնավորապես՝ Գորիսում, Ջերմուկում, Մեղրիում, Տաթևում, Թալինում, Տեղում, Վանաձորում և Վարդենիսում։ Օրինակ՝ դեկտեմբերի 15-ին Վանաձոր համայնքի նախկին ղեկավար և համայնքի ղեկավարի ընդդիմադիր թեկնածու Մամիկոն Ասլանյանը ձերբակալվեց լիազորությունները չարաշահելու ու պաշտոնական կեղծիքի համար՝ սեպտեմբերին հարուցված քրեական գործի շրջանակում։ Ձերբակալությունը տեղի ունեցավ Վանաձորի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններից անմիջապես հետո, որտեղ Ասլանյանի դաշինքը ստացել էր առավել մեծ թվով ձայներ և սկսել էր քննարկումների գործընթաց ավագանու միջոցով իշխանություն ձևավորելու ուղղությամբ։ Ձերբակալության պահը հաշվի առնելով՝ շատ մեկնաբաններ հակված էին կարծել, որ ձերբակալությունն ուներ քաղաքական շարժառիթներ և հանդիսանում էր օրենքի ընտրովի կիրառման դեպք ընդդեմ իշխող կուսակցության քաղաքական ընդդիմադրի անգամ այն պարագայում, եթե մեղադրանքն ըստ էության էր առաջադրված։ Նաև հարցականի տակ էր դրվում այս գործով նախնական կալանքը որպես խափանման միջոց կիրառելու անհրաժեշտությունը։ Օրինակ՝ ՀՔԱՎ գրասենյակի ղեկավար, հայտնի իրավապաշտպան Արթուր Սաքունցն այս քայլը որակեց այսպես. «Սա նոր երևույթ է, ԿԳԲ-ական ոճի, երբ մարդու նկատմամբ հավաքում են դոսյե [հեղինակազրկող տեղեկություններով] և այն կիրառում [նրա դեմ] ըստ անհրաժեշտության, երբ պետք է ինչ-որ քաղաքական խնդիրներ լուծել»։

Կանանց և փոքրամասնությունների մասնակցությունը. Որևէ օրենք չի սահմանափակում կանանց կամ փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցությունը քաղաքական գործընթացներին և նրանք իրապես մասնակցում են։ Ընտրական օրենսգրքի փոփոխություններով, որը գործողության մեջ մտավ տարվա ընթացքում, Ազգային ժողովի ընտրություններում թեկնածուների 30 տոկոսը պետք է լինեն կանանք, ընդ որում նախկինում սահմանված էր 25 տոկոս քվոտա։ ԺՀՄԻԳ դիտորդները նշում էին, որ հունիսի 20-ի ընտրություններում բոլոր ուժերի ցուցակները գենդերային պահանջին համապատասխանում էին, և կանայք կազմում էին առաջադրված 2623 թեկնածուների 37 տոկոսը։ Հասարակության նահապետական բնույթը սակայն խոչընդոտել է կանանց լայնամասշտաբ մասնակցությանը երկրի քաղաքական և տնտեսական կյանքում, ինչպես նաև հանրային հատվածի որոշումներ կայացնող պաշտոններում։ Կանայք զբաղեցնում էին 1 նախարարական պաշտոն՝ 15-

ից, համայնքային ավագանիների կազմում կանայք կազմում էին 10 տոկոս և ներկայումս զբաղեցնում են Ազգային ժողովի տեղերի շուրջ 37 տոկոսը, մինչդեռ նախորդ խորհրդարանում կանայք կազմում էին 23 տոկոս: Չնայած նախորդ խորհրդարանն ուներ մեկ կին փոխխոսնակ և մեկ կին խմբակցության ղեկավար, հունիսին ընտրված խորհրդարանում այդ պաշտոններում կանայք չեն ընդգրկվել: Կին է երկրի 10-ը մարզերից մեկի մարզպետը:

Քարոզչության միջոցառումներին կուսակցությունները հազվադեպ էին ներկայանում կին-թեկնածուներով (թեպետ ընտրություններին մասնակցում էր կուսակցություն, որի ղեկավարը կին էր). կանայք միայն երբեմն էին ինքնուրույն քարոզչություն իրականացնում, իսկ հանրահավաքների ժամանակ հազվադեպ էին հանդես գալիս որպես բանախոս: Կին խորհրդարանականները և կին պաշտոնյաները հաճախ բախվել են գենդերային վիրավորանքների: Հունիսին կայացած ընտրությունների վերաբերյալ իր վերջնական զեկույցում ԺՀՄԻԳ-ը նշել էր. «Կանայք ակնհայտորեն դուրս էին թողնված քարոզարշավային միջոցառումներից՝ շատ հազվադեպ հանդես գալով որպես բանախոս»: Զեկույցում նշված էր, որ 153 դիտարկված հավաքներից միայն 24-ի դեպքում էին կանայք հանդես եկել որպես բանախոս, իսկ դիտարկված քարոզարշավային 73 միջոցառումներից 51-ի դեպքում որևէ կին բանախոս առկա չէր: Քարոզչության ընթացքում նկատելիորեն բացակայում էին կանանց և ազգային փոքրամասնություններին վերաբերող ուղերձները:

Օրենքի համաձայն խորհրդարանում մեկական հավելյալ տեղ է նախատեսվում ամենամեծ բնակչություն ունեցող չորս ազգային փոքրամասնություններից յուրաքանչյուրի համար՝ եզդիներ, քրդեր, ասորիներ և ռուսներ: Խորհրդարանում չորս տեղ զբաղեցնում էին այս խմբերի ներկայացուցիչները, որոնք ընտրվում են հիմնական քաղաքական ուժերի կողմից՝ առանց ուղղակի ընտրության:

ՄԱՍ 4. ՊԱՇՏՈՆԵԱԿԱՆ ԿՈՌՈՒՊՑԻԱ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Օրենքով կոռուպցիայի համար սահմանված են քրեական պատժամիջոցներ: 2018թ. մայիսի «թավշյա հեղափոխությունից» հետո կառավարությունը հետաքննություններ

սկսեց, որոնք բացահայտեցին համակարգային կոռուպցիայի դրսևորումներ հանրային և մասնավոր կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Կառավարությունը հարուցեց բազմաթիվ քրեական գործեր նախկին բարձրաստիճան պետական պաշտոնյաների և նրանց ազգականների, պատգամավորների, նախկին նախագահների, ու մի քանի դեպքերում էլ դատական համակարգի անդամների ու նրանց ազգականների կողմից թույլ տրված ենթադրյալ կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, որտեղ խոսք էր գնում մի քանի հազարից մինչև միլիոնավոր դոլարների մասին: Այս գործերից շատերը դեռ ընթացքի մեջ էին, և պարբերաբար հաղորդումներ էին լինում նոր գործերի մասին: Կառավարությունը նաև կոռուպցիայի հետ կապված գործեր հարուցեց ընթացիկ կառավարության մի շարք պաշտոնյաների և դատական համակարգի անդամների նկատմամբ:

Բացի թեկնածուների բարեվարքության ստուգումներից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը նաև իրականացրել է իր լիազորությունները գործող դատավորների գույքի և ակտիվների հայտարարագրերի ուսումնասիրման մասով՝ հանցավորության տարրեր բացահայտելու դեպքում այդ տեղեկությունները փոխանցելով իրավապահներին: Արդյունքում 3 կարգապահական, 3 վարչական և 1 քրեական գործ է հարուցվել:

Իրավասու մարմինները միջոցներ են ձեռնարկել կոռուպցիայի դեմ պայքարի ինստիտուցիոնալ շրջանակն ամրապնդելու ուղղությամբ՝ մասնավորապես՝ ձևավորվել է Հակակառուպցիոն կոմիտեն, որը կոռուպցիոն հանցանքների քննությամբ զբաղվող հիմնական իրավապահ կառույցն է: Հակակոռուպցիոն կոմիտեն իր գործունեությունը սկսել է հոկտեմբերին և հարուցել է մի քանի գործեր, օրինակ՝ մեղադրանք է ներկայացվել նախկին ոստիկանապետ Վլադիմիր Գասպարյանին՝ մոտ երկու միլիարդ ՀՀ դրամ (4,1 միլիոն ԱՄՆ դոլար) արժողությամբ ապօրինի ճանապարհով ձեռք բերած գույքի օրինականացման և այլ քրեական հանցանքների հարցով:

Կոռուպցիա. Երկիրը ժառանգել է համակարգային կոռուպցիա բազմաթիվ ոլորտներում, այդ թվում՝ շինարարություն, հանքարդյունաբերություն, հանրային կառավարում, խորհրդարան, դատական համակարգ, գնումների գործընթաց, պետության կողմից տրվող աջակցություն: Կային պնդումներ պետական միջոցների

յուրացման և կասկածելի գործարքներում պետական պաշտոնյաների ներգրավվածության մասին:

Սեպտեմբերի 7-ին Հատուկ քննչական ծառայությունը ձերբակալեց նախկին գլխավոր դատախազ և Քննչական կոմիտեի նախկին ղեկավար Աղվան Հովսեփյանին: Ըստ Հատուկ քննչական ծառայության Հովսեփյանը հանրային պաշտոն զբաղեցնելու ընթացքում զբաղվել է փողերի լվացման, ձեռնարկատիրական ապօրինի գործունեությամբ, կատարել է շուրջ 1,3 միլիարդ դրամի (2,6 միլիոն ԱՄՆ դոլարի) փողերի լվացում, ստացել է առանձնապես խոշոր չափի՝ 190 միլիոն դրամ կաշառք և խարդախությամբ հափշտակել է 800 միլիոն դրամի (1,6 միլիոն ԱՄՆ դոլարի) գույք: Տարեվերջի դրությամբ քննությունը դեռ ընթացքի մեջ էր, իսկ Աղվան Հովսեփյանը գտնվում էր նախնական կալանքի տակ:

ՄԱՍ 5. ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՅՏԱՐԱՐՎՈՂ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարդու իրավունքների ոլորտի տեղական և միջազգային խմբերի մեծ մասն ընդհանուր առմամբ գործել են առանց կառավարության սահմանափակումների՝ ազատ քննելով և հրապարակելով մարդու իրավունքների դեպքերի վերաբերյալ իրենց եզրակացությունները: Սակայն նշանակալի բացառություն էր կառավարության կողմից եզդի իրավապաշտպանի քրեական հետապնդումը (տես՝ Մաս 2.ա): Թեպետ պետական պաշտոնյաներն ինչ-որ չափով համագործակցում ու արձագանքում էին քաղաքացիական հասարակության կազմակերպությունների դիրքորոշումներին, սակայն վերջիններս նշում էին, որ կառավարության պաշտոնյաների հետ հանդիպումները (առցանց և առերես) սակավաթիվ էին և մի շարք կարևոր ուղղություններում, ինչպիսիք են օրինակ՝ խոսքի ու մամուլի ազատությունը կառավարությունն անտեսել էր կամ չէր փորձել ստանալ փորձագիտական կարծիք ՀԿ-ներից: Այլ ուղղություններում, ինչպիսիք են՝ անկողմնակալ, անկախ դատական համակարգին ուղղված բարեփոխումները, կառավարությունը հավաքել է

քաղաքացիական հասարակության զեկույցներն ու առաջարկները, բայց պարզ չէր, թե առաջարկներն ինչքանով էին քննության առնվել։ Կառավարությունը քայլ չի ձեռնարկել ապահովելու պաշտպանություն քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ապատեղեկատվությունից կամ սպառնալիքներից, այդ թվում առանձին ակտիվիստներին վնասելու սպառնալիքներից։

Հունիսի 20-ի խորհրդարանական ընտրություններին նախորդած շրջանում քաղաքական գործիչների կողմից հնչում էին հայտարարություններ իրավապաշտպան ՀԿ-ների գործունեությանը սահմանափակելու վերաբերյալ։ Օրինակ՝ նախկին նախագահ Ռոբերտ Քոչարյանը, որը գլխավորում էր ընտրություններից հետո Ազգային ժողովում հայտնված ամենամեծ ընդդիմադիր խմբի՝ «Հայաստան» դաշինքի ցուցակը, նշել էր, որ կառավարության վերահսկողությունը «Հայաստան» դաշինքին անցնելու դեպքում «կամ խիստ սահմանափակումներ, կամ ուղղակի արգելք է դրվելու նման [«սորոսական»] կազմակերպության գործունեության առջև»։ Առանձին իրավապաշտպան ակտիվիստներ թեկնածուների կողմից նման հայտարարությունները համարում էին իրենց անձի դեմ ուղղված սպառնալիք։ Տարվա ընթացքում պահպանվում էր իրավապաշտպան ու այլ քաղաքացիական կազմակերպությունների, ինչպես նաև ընտրությունների դիտարկում իրականացնող առանձին իրավապաշտպանների հեղինակազրկման ու նրանց հանդեպ ընդհուպ մինչև մահվան սպառնալիքներ հնչեցնելու միտումը։ Ըստ հաղորդումների կառավարությունը նրանց այս սպառնալիքներից չէր պաշտպանում։ Սպառնալիքներ էին ստացել նաև ժողովրդավարական բարեփոխումները խթանող որոշ լրագրողներ։

2020թ. նոյեմբերին «Ազատություն» ռադիոկայանի երևանյան գրասենյակի և «Բաց հասարակության հիմնադրամների» հայաստանյան գրասենյակի վրա կատարած հարձակումների քննությունը տարեվերջի դրությամբ դեռ շարունակվում էր. ՀՔԱՎ գրասենյակի վրա 2020թ. նոյեմբերին կատարած հարձակման գործը կարճվեց այն բանից հետո, երբ պարզ դարձավ, որ պատճառած վնասի չափը օրենքով սահմանված նվազագույն շեմը չի գերազանցել։ Իրավապահները հրաժարվեցին «Բաց հասարակության հիմնադրամների» և ՀՔԱՎ գրասենյակի վրա կատարված հարձակումների փաստով քննությունը միավորել մեկ գործի մեջ, ինչպես առաջարկում էր ՀՔԱՎ գրասենյակը նվազագույն շեմն անցնելու համար։

ՀԿ-ների անդամները նաև շարունակում էին հաղորդումներ ներկայացնել իրենց անձին ուղղված սպառնալիքների վերաբերյալ։ Մի կին իրավապաշտպան ակտիվիստ հայտնել էր, որ իր ապրած բազմաբնակարան շենքի մուտքում փակցրել էին իր լուսանկարը՝ նշանառության թիրախի մեջ տեղադրված։ Ահաբեկումը նաև իրականացվում է առցանց տրոլինգով զբաղվողների, լրատվամիջոցների, հերյուրանքներ տարածող նորահայտ հարթակների, ազգայնական խմբերի կողմից, որոնցից շատերը կապեր ունեն նախորդ իշխանությունների հետ և ըստ որոշ տեղացի փորձագետների՝ ռուսական դերակատարների հետ։ Հատկապես թիրախավորվում էին մարդու իրավունքների խթանմամբ, կանանց ու երեխաների հիմնահարցերով զբաղվողները և ավելի խոր իրավապահ ու դատական բարեփոխումներ պահանջողները և հատկապես՝ «Բաց հասարակության հիմնադրամները»։

Հուլիսի 29-ին «ատելություն հարուցելու» համար իրավասու մարմինները մեղադրանք առաջադրեցին իրավապաշտպան ակտիվիստ Սաշիկ Սուլթանյանին այն բանից հետո, երբ նա հարցազրույցի ժամանակ խոսեց Հայաստանում եզդիական համայնքի առաջ ծառացած մարտահրավերների մասին։ Միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները գտնում էին, որ Սուլթանյանի արտահայտած կարծիքները լիովին տեղավորվում էին միջազգային իրավունքով պաշտպանվող իրավաչափ խոսքի սահմաններում, իսկ նրա նկատմամբ քրեական հետապնդումը որակում էին որպես նենգամիտ քայլ ու սպառնալիք ժողովրդավարությանը. այս մտահոգությունները կիսում էր նաև ՄԻՊ-ը։ Գործի հետ կապված կային նաև ընթացակարգային խախտումներ, մասնավորապես՝ քննիչները հրաժարվել էին Սուլթանյանին տեղեկություն տալ քննության և գործի բացման հիմքերի վերաբերյալ։ Գործով որպես վկա հարցաքննված մի անձ հայտնել էր, որ քննիչն իրեն ասել է, թե «բոլոր արևմտյան ՀԿ-ները պետք է փակվեն»։

2020թ.-ից սկիզբ առած ատելության արշավների հետևանքով ավելի ու ավելի շատ մտավորականներ ու հասարակական կարծիք ձևավորողներ, նաև՝ մարդու իրավունքների պաշտպանության դիրքերից հանդես եկող, առավել դժկամությամբ են հրապարակավ, հատկապես՝ առցանց տիրույթում բարձրաձայնում իրենց կարծիքն ու դիրքորոշումը։ Արդյունքում ընդհանուր առմամբ նվազել է կառուցողական դիսկուրսը մարդու իրավունքների ու այլ կարևոր հարցերի շուրջ։ Կառավարությունը քաղաքացիական հասարակության դերակատարներին վնասելու կոչ անողների

նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով չի կիրառել բռնության հրապարակային կոչերը քրեականացնելու մասին 2020թ. ընդունված օրենքը:

Մարդու իրավունքների պաշտպանության պետական կառույցները. Մարդու իրավունքների պաշտպանի (ՄԻՊ) գրասենյակը պատասխանատու է մարդու իրավունքներն ու հիմնարար ազատությունները բոլոր մակարդակի պետական մարմինների չարաշահումներից պաշտպանելու համար: ՄԻՊ գրասենյակը գործել է անկախ և արդյունավետ պաշտպանություն է ապահովել առանձին գործերով: Գրասենյակը սակայն հրաժարվել է զբաղվել որոշ գործերով՝ կապված ԼԳԲՏՔԻ+ անձանց հետ :

2019թ. կառավարությունը հավանություն տվեց Դատաիրավական բարեփոխումների ռազմավարությանը և դրանից բխող 2019-23թթ. գործողությունների ծրագրին, որով նախատեսվում էր ստեղծել մարդու իրավունքների հետ կապված խնդիրներն ուսումնասիրող փաստահավաք հանձնաժողով: Թեպետ հանձնաժողովի ստեղծման մասին օրենսդրության նախագիծը մշակվել է, սակայն խորհրդարանն այն դեռ չի ընդունել: Մարդու իրավունքներով զբաղվող խմբերը մեղադրում էին իշխող կուսակցությանը հանձնաժողովի ձևավորման համար քաղաքական կամք չդրսևորելու մեջ:

ՄԱՍ 6. ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳ

Կանայք

Բռնաբարություն և ընտանեկան բռնություն. Բռնաբարությունը քրեական հանցագործություն է, որի համար դատապարտվելիս սահմանված առավելագույն պատժաչափը 15 տարվա ազատազրկումն է. ամուսնական բռնաբարության պարագայում գործում են բռնաբարության ընդհանուր հոդվածները: Ընտանեկան բռնության քրեական հետապնդումն իրականացվում է բռնության ընդհանուր հոդվածներով, իսկ պատիժը կախված է մեղադրանքից (սպանություն, մարմնական

վնասվածքներ պատճառել, թեթև մարմնական վնասվածքներ հասցնել, բռնաբարություն և այլն)։ Ընդհանուր առմամբ, իրավասու մարմիններն ընտանեկան բռնության մասին պնդումների դեպքում արդյունավետ քննություն կամ քրեական հետապնդում չեն իրականացրել։ Կանանց դեմ ուղղված ընտանեկան բռնությունը լայն տարածում ուներ։ Օրինակ՝ օգոստոսի 11-ին Երևանի 33-ամյա բնակիչը, ըստ հաղորդումների, գնացել է իր նախկին կնոջ տուն և դանակահարել-սպանել նրան։ Ըստ ԶԼՄ-ների հաղորդումների՝ դրանից հետո նա ինքնախոստովանականով ներկայացել է Ոստիկանության Շենգավիթի բաժին։ Նա ձերբակալվել է սպանության կասկածանքով։ Ըստ որոշ պաշտոնյաների քրեական օրենսգրքում ընտանեկան բռնության սահմանման բացակայությունը խոչընդոտել է դրա դեմ պայքարելու նրանց կարողություններին։

2020թ. մարտին Արդարադատության նախարարությունը մեկնարկեց երկամյա մի արշավ՝ ընտանեկան բռնության հարցերի շուրջ և խրախուսելու հանրությանն ընտանեկան բռնության նշաններ նկատելու դեպքում զանգել ոստիկանություն։ Արշավը ներառում էր սոցիալական գովազդ, երկու սոցիալական փորձարարություն (տեսնելու թե մարդիկ ինչպես կարձագանքեն ընտանեկան բռնության նշաններ տեսնելիս կամ օգնության կանչեր լսելիս), պաստառներ և սոցիալական հարթակներում արշավ, որի դիտումներն ավելի քան 4,2 միլիոն կազմեցին։

Ընտանեկան բռնության մասին օրենքի նեղ սահմանումները թույլ չէին տալիս պաշտպանություն ու օրենքով սահմանված օժանդակություն ապահովել բռնություն վերապրած այն անձանց, որոնք պաշտոնապես ամուսնացած չէին կամ քաղաքացիական ամուսնության մեջ էին գտնվում։ Մայիսի 5-ին ընդունված նոր քրեական օրենսգիրքը, որը գործողության մեջ է մտնելու 2022թ. հուլիսից, ներդնում է զուգընկերոջ կողմից բռնություն կիրառելու հասկացությունը, սակայն այն չի սահմանում ընտանեկան բռնությունը։ Ըստ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ-ի՝ օրենքն ընտանեկան բռնության կանխարգելման ու զոհերի պաշտպանության հարցերը փակում է, սակայն չկան դրույթներ բռնարարաներին պատժելու վերաբերյալ։ Տարվա ընթացքում կառավարությունը շարունակել է աջակցել ընտանեկան բռնություն վերապրածներին ընդունող երկու կացարանին, որոնցից կարող են օգտվել կանայք երկրի բոլոր մասերից։

Ըստ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիա» ՀԿ-ի՝ քանի որ օրենքում սեռական բռնության սահմանումներում համաձայնության բացակայությունը ներառված չէ, անպատիժ են մնում սեռական հարկադրանքի բազմաթիվ դեպքեր : Եղել են հաղորդումներ, որ սեռական ու ընտանեկան բռնության դեպքերում ոստիկանությունը, հատկապես Երևանից դուրս, դժկամությամբ է միջոցներ ձեռնարկել ու չի խրախուսել կանանց կողմից բողոքների ներկայացումը: Ըստ «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոն» ՀԿ-ի՝ սեռական բռնության գործերի քննությունը՝ գաղտնիության, քննիչների կողմից նրբանկատության կամ հարցաքննությունների քանակով, ոչնչով չէր տարբերվում մյուս գործերով վարույթներից և տուժածները ստիպված էին բազմիցս ցուցմունք տալ կամ այլ կերպ մասնակցել հարցաքննությանը, այդ թվում և մեղավորի հետ առերեսմանը: Բռնաբարության մասին հաղորդումների հիման վրա անցկացվող ստանդարտ դատաբժշկական փորձաքննության մեջ փորձագետն ըստ հաղորդումների նաև արձանագրում էր՝ արդյոք փորձաքննվողը կույս էր: Գործող օրենսդրության համաձայն ընտանեկան բռնության դեպքերի մեծ մասը որակվել են որպես թեթև կամ միջին ծանրության գործեր, իսկ կառավարության կողմից չի ձևավորվել այս հանցանքներով զբաղվող բավարար քանակությամբ կին ոստիկանների և քննիչների կադրային բազա՝ հանցագործությունները պատշաճ հասցեագրելու համար:

Ըստ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիայի»՝ օրենսդրության բացերը և օրենքի կիրառման հետ կապված հարցերը բռնություն վերապրածների համար դժվարացնում են ծառայությունների հասանելիությունը: Ոստիկանությունը կարող է պաշտպանական միջոցներ սահմանել մինչև 20 օր տևողությամբ, երբ բռնություն է եղել ընտանիքի մի անդամի կողմից ընտանիքի մյուս անդամի նկատմամբ և առկա է կրկնվելու ողջամիտ ռիսկ. ավելի երկար ժամանակով պաշտպանական միջոց կիրառելու համար անձը պետք է դիմի դատարան: Անհետաձգելի դեպքում սահմանված պաշտպանական միջոցների և դատարանի կողմից սահմանված միջոցների խախտումների դեպքում պատիժ չի նախատեսվում: Թեպետ օրենքը սահմանում է, որ անհետաձգելի միջամտություն կարող է սահմանվել մինչև քսան օր, սակայն եղել են դեպքեր, երբ նման միջոց սահմանվել է սոսկ մեկ օրվա համար: Նույն կերպ, օրենքը սահմանում է, որ պաշտպանական որոշումը պետք է կայացվի 10-ն

աշխատանքային օրվա ընթացքում, բայց դատարաններն այդ որոշումները կայացրել են մեկից երկու ամսում։

2020թ. դեկտեմբերին երեք տարվա դատավարությունից հետո դատարանը 19 տարվա ազատազրկման դատապարտեց Վլադիկ Մարտիրոսյանին, որը 2016թ. կացնով հարձակվել էր նախկին կնոջ՝ Թագուհի Մանսուրյանի և նրա ծնողների վրա։ Մանսուրյանի մայրը մահացել էր հարձակման հետևանքով, իսկ Մանսուրյանն ու հայրը ստացել էին ծանր վնասվածքներ։ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կոալիցիան» հույս հայտնեց, որ ընտանեկան բռնություն կատարողների հանդեպ տարիներ շարունակ մեղմ պատիժներ նշանակելուց հետո այսպիսի պատիժ նշանակելը կարող է շրջադարձային կետ դառնալ զոհերի համար արդարադատություն ապահովելու հարցում։

2020թ. աշնան Լեռնային Ղարաբաղի հակամարտության ինտենսիվ ռազմական գործողությունների հետևանքով մոտ 100.000 մարդ է տեղահանվել Հայաստան և 25-35 հազարը մտադիր էին մշտապես հաստատվել երկրում. նրանց մեծամասնությունը կանայք էին և աղջիկներ։ Կանայք ու աղջիկները, որոնց վրա ուղղակիորեն անդրադարձել էին ռազմական գործողությունները, այդ թվում Լեռնային Ղարաբաղից տեղահանված կանայք ու աղջիկները, զոհվածների, վիրավորների և անհայտ կորածների ընտանիքի անդամ կանայք ու աղջիկները գտնվում էին ամենախոցելի խմբում, որոնց հետ կապված առկա է մարգինալացման, շահագործման և գենդերային բռնության ենթարկվելու անմիջական ռիսկ։

Գենդերային հավասարության դիրքերից հանդես եկող կամ ընտանեկան բռնության զոհերին աջակցող ակտիվիստներն ու ՀԿ-ները հաճախ ատելության խոսքի թիրախում են հայտնվել և քննադատության են ենթարկվել «ավանդական հայկական ընտանիքը» ենթադրաբար խարխլելու և «արևմտյան արժեքներ» տարածելու համար։

Սեռական ոտնձգություններ. Չնայած օրենքն անդրադառնում է անառակաբարո գործողություններին և անվայելուչ պահվածքին, սակայն չի ներառում սեռական ոտնձգության բոլոր տարրերը։ Օրենքը համարում է «սեռական ոտնձգությունը» գենդերային խտրականության ձև, որը ներառում է խոսքային կամ ֆիզիկական դրսևորում ունեցող սեռական բնույթի արարքներ կամ ցանկացած իրավիճակ, որն ուղղված է արժանապատվությունը նվաստացնելուն, ահաբեկմանը, թշնամանքին կամ

նվաստացմանը: Այն չի ներառում հղումներ «վարձահատույց լինելու» տարրերին, ինչպիսիք են պահանջներն առ այն, որ անհատն աշխատանքային կամ այլ համատեքստում համաձայնի սեռական պահանջների՝ դրանց դիմաց որևէ առավելություն/արտոնություն ստանալու համար: Աշխատանքային օրենսգրքում որևէ հղում չկա սեռական ոտնձգություններին, և չկա հատուկ օրենք, որն արգելում է աշխատավայրում սեռական ոտնձգությունը կամ նախատեսում է քրեական պատիժներ կամ քաղաքացիական պաշտպանության միջոցներ աշխատավայրում սեռական ոտնձգությունների համար:

Դիտորդները կարծում էին, որ աշխատավայրում և քաղաքական ասպարեզում կանանց նկատմամբ սեռական ոտնձգությունները համատարած էին և կառավարության կողմից չէին ձեռնարկվում համարժեք միջոցներ: Չկար աշխատավայրում սեռական ոտնձգության մասին բողոքներ ներկայացնելու կոնֆիդենցիալ և ապահով համակարգ. մի թեմա, որի մասին խոսելը տաբու է և որին անդրադարձ չի կատարված կառավարության իրազեկման արշավներում կամ Գենդերային քաղաքականության իրականացման ռազմավարության ու դրանից բխող 2019-23թթ. գործողությունների ծրագրի մեջ:

Վերարտադրողական իրավունքներ. Չեն եղել հաղորդումներ կառավարության իրավասու մարմինների կողմից հարկադրաբար հղիությունն ընդհատելու կամ ոչ կամավոր բեղմնականխման կիրառման մասին:

Հունիսին ՄԱԿ-ի «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի» (CEDAW) հետ կապված հաշվետվությունում երկու ՀԿ-ներ՝ «Կանանց ռեսուրսային կենտրոնը» և «Սեռական բռնության ճգնաժամային կենտրոնը» նշում էին, որ մարգինալացված խմբերի կանանց համար հասանելի չէին համարժեք ու ապահով վերարտադրողական ու սեռական առողջության ծառայություններ: Պետությունը չի ապահովել առողջապահական ծառայությունների հասանելիությունը հեռավոր գյուղական բնակավայրում, այդ թվում՝ անհետաձգելի գինեկոլոգիական ծառայությունները և չի ապահովել բուժաշխատողների համարժեք ու շարունակական վերապատրաստումը վերարտադրողական ու սեռական առողջության հարցերի շուրջ՝ հատուկ ուշադրություն դարձնելով մարգինալացված խմբերի կանանց, այդ թվում՝ լեսբի, բիսեքսուալ, տրանսգենդեր կանանց, ՄԻԱՎ վարակակիր կանանց, եզդի

կանանց։ «Կանանց ռեսուրսային կենտրոնի» մեկ այլ զեկույցի համաձայն՝ ՔՈՎԻԴ-19 համավարակի և 2020թ. աշնան ռազմական գործողությունների ընթացքում վերարտադրողական ու սեռական առողջության ծառայությունների հասանելիությունը կանանց համար ավելի է վատացել, հատկապես՝ խոցելի խմբերի կանանց ու հաշմանդամություն ունեցող կանանց համար։

Ֆիզիկական խոչընդոտները, հասանելի տեղեկատվության ու հաղորդակցության բացակայությունը, ուսումնական ու բուժման սարքավորումների անհասանելիությունը և համապատասխան գիտելիքներ չունեցող բուժանձնակազմը սահմանափակել են առողջապահական ծառայությունների, այդ թվում՝ վերարտադրողական և սեռական առողջության ծառայությունների հասանելիությունը հաշմանդամություն ունեցող կանանց համար, հատկապես՝ գյուղական բնակավայրերում։ Բուժհաստատություններում չկային նշանների լեզվի թարգմանիչներ և կանայք իրենք պետք է գտնեին համապատասխան մասնագետի, որը թանկարժեք ծառայություն է։ Լսողության ու տեսողության կամ մտավոր խնդիրներ ունեցողների համար առկա չէին առողջապահական տեղեկություններ այլընտրանքային ձևաչափերով։ Վերարտադրողական և սեռական առողջության ծառայությունների հասանելիության վրա շարունակել են ազդել մշակութային արգելքները։ Չկային անհատի իրազեկ լինելու ու վերարտադրողական և սեռական առողջության ծառայություններից օգտվելու հնարավորությունները սահմանափակող կառավարության կարգավորումներ։

Անհետաձգելի բուժօգնությունն առկա էր հղիության արհեստական ընդհատման բարդությունների պարագայում։ Կառավարությունը չուներ ծրագրեր սեռական բռնություն վերապրածներին վերարտադրողական և սեռական առողջության ծառայությունների հասանելիություն ապահովելու համար։

Խտրականություն. Տղամարդիկ և կանայք ունեն հավասար իրավական կարգավիճակ բոլոր ասպարեզներում, սակայն գենդերային խտրականությունը խնդրահարույց էր և՛ պետական, և՛ մասնավոր հատվածներում։ Եղել են կանանց հանդեպ խտրականության վերաբերյալ հաղորդումներ մասնագիտության, զբաղվածության և վարձատրության հարցերի հետ կապված։ Օրենքը չի արգելում սեռով պայմանավորված խտրականությունը վարկերի հասանելիության մասով։

Գենդերով պայմանավորված պտղի սեռի խտրական ընտրություն. Չնայած օրենսդրական փոփոխություններին, որոնք արգելում էին նման պրակտիկան ու դրան առնչվող հանրային իրազեկման արշավները, նորածինների մասին տվյալները շարունակում էին մատնացույց անել աղճատված հարաբերակցություն: Ըստ Հայաստանի ազգային վիճակագրական կոմիտեի ծնվելու պահին տղա-աղջիկ հարաբերակցությունը 2020թ. կազմում էր 110-100: Կանանց իրավունքների հարցերով զբաղվող խմբերը կարծում էին, որ պտղի սեռի ընտրության պրակտիկան երկրում առկա գենդերային անհավասարության առավել ընդգրկուն խնդրի հետ է կապված:

Համակարգային ռասայական և էթնիկ բռնություն ու խտրականություն

Սահմանադրությամբ արգելվում է խտրականությունը՝ կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Քրեական օրենսգիրքն արգելում է անհավասար վերաբերմունքը վերոհիշյալ հիմքերով, այդ թվում էթնիկ ծագման հիման վրա, եթե այդ վերաբերմունքը վնասում է մարդու իրավունքներին և անձի օրինական շահերին, իսկ պաշտոնատար անձի կողմից նման արարքի կատարումը դիտարկվում է որպես ծանրացուցիչ հանգամանք:

Կառավարության կողմից օրենքի կիրառումը հավասարաչափ չի եղել: Օրինակ՝ թեպետ իրավասու մարմինների կողմից քննվել է 100-ից ավել քրեական գործ ադրբեջանցիների կողմից հայերի դեմ թույլ տված բռնությունների ու ոտնձգությունների ենթադրյալ դեպքերի հետ կապված, սակայն կառավարությունը քննություններ չի անցկացրել եզդիների նկատմամբ մարդու իրավունքների խախտումների ենթադրյալ դեպքերով: Փոխարենը, եզդի ակտիվիստ Սաշիկ Սուլթանյանին մեղադրանք է ներկայացվել ատելություն հրահրելու համար՝ այն բանից հետո, երբ նա եզդիական համայնքի հանդեպ վերաբերմունքի ու մարդու իրավունքների հետ կապված մտահոգություններ է հնչեցրել (տես՝ Մաս 5): Եզդիների կողմից պարբերաբար անհատապես խտրականության բախվելու մասին հաղորդումներ են եղել, այդ թվում՝ գույքին առնչվող վեճերի շրջանակում: Եղել են նաև առանձին հաղորդումներ հասարակության կողմից մաշկի այլ գույն ունեցողների

հանդեպ խտրականության վերաբերյալ և գրաֆիտիներ, որտեղ նրանց հիշատակել են նսեմացնող բառերով։

1991թ. Հայաստանի և Ադրբեջանի միջև սահմանների փակումից հետո հետզհետե համատարած է դարձել բորբոքիչ հռետորաբանությունն ու ատելության խոսքը, հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ մի ամբողջ սերունդ հասակ է առել մյուս կողմի հետ առանց որևէ շփում ունենալու։ Ադրբեջանի կողմից հակահայկական ատելության խոսքի մասին հաղորդումները սնել են ադրբեջանցիների նկատմամբ անհանդուրժողականությունն ու ատելությունը Հայաստանում։

Դեկտեմբերի 7-ին Արդարադատության միջազգային դատարանը հրապարակեց «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի խախտումների վերաբերյալ Հայաստանի և Ադրբեջանի ներկայացրած հայցերի ու հակընդդեմ հայցերի հետ կապված միջանկյալ միջոցների կիրառման որոշումը։ Դատարանը որոշել էր, որ Հայաստանը «պետք է … ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները կանխելու ազգությամբ և էթնիկ ադրբեջանցիներին թիրախավորող ռասայական ատելության և խտրականության հրահրումը և խթանումն իր տարածքում. այդ թվում կազմակերպությունների և անհատների կողմից»։ Դատարանը նաև որոշեց, որ երկու երկիրն էլ պետք է «ձեռնպահ մնան ցանկացած գործողությունից, որը կարող է սրել կամ երկարացնել դատարանի կողմից քննվող խնդիրները կամ ավելի դժվարացնել դրանց լուծումը»։ Երկու երկրից էլ Դատարանը պահանջում էր «ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ կանխելու ռասայական ատելության և խտրականության հրահրումը և խթանումը» մեկը մյուսի հանդեպ (տես նաև՝ Մարդու իրավունքների մասին զեկույցի Ադրբեջանին վերաբերող գլուխը)։

Երեխաներ

Ծննդի գրանցում. Քաղաքացիությունը երեխաներին անցնում է ծնողներից մեկից կամ երկուսից։ Կա կենտրոնացված համակարգ, որի միջոցով գեներացվում է ծննդյան մասին բժշկական տեղեկանք՝ գրեթե անհնար դարձնելով ծննդյան գրանցումից խուսափելը։ Ծնունդների չգրանցման դեպքեր հիմնականում տեղ են գտել եզդիական և քրդական համայնքներում, որտեղ ընդունված են տնային ծնունդները։

Կրթություն. Թեպետ կրթությունն անվճար է և պարտադիր մինչև 12-րդ դասարան, սակայն գործնականում այն համընդհանուր բնույթ չէր կրում. մասնակցությունը, դպրոցն ավարտելը և դպրոցից դուրս մնացող աշակերտների ցուցանիշները տարբերվում էին ըստ սոցիալ-տնտեսական դիրքի և բնակության վայրի: Այս անհավասարությունները սրվեցին ՔՈՎԻԴ-19 համավարակի և Լեռնային Ղարաբաղից տեղահանված անձանց ներհոսքի հետևանքով: Տեղահանվածներ ընդունած համայնքներում դպրոցները փորձում էին տեղավորել Լեռնային Ղարաբաղից տեղահանված երեխաներին, որոնցից շատերը տարվա ընթացքում մի քանի դպրոց էին փոխել:

Էթնիկ փոքրամասնական խմբերի, մասնավորապես՝ եզդիների, քրդերի ու մոլոկանների երեխաների շրջանում շատ ավելի ցածր է դպրոցի և դասերի հաճախելիության ցուցանիշը և բարձր է իններորդ դասարանից հետո ուսումը կիսատ թողնելու ցուցանիշը: Ողջ երկրում ընդամենը մի քանի դպրոց կա, որտեղ կրթության հիմնական ու միջնակարգ օղակներում դասավանդվում է եզդիերենը, ասորերենը, քրդերենն ու հունարենը: Այս առարկաները պաշտոնական ուսումնական պլանում ներառված չեն և որևէ կերպ չեն կարգավորվում: Եզդի ծնողները շարունակում էին բողոքել, որ դասերը որևէ ստանդարտի չէին համապատասխանում ու մեծապես անարդյունավետ էին:

2019թ. ՀԿ-ի կողմից ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոմիտեին ներկայացված զեկույցի համաձայն՝ եզդի երեխաները մանուկ հասակում խոսում են իրենց մայրենի լեզվով և դպրոց գնալու պահին հայերեն չեն իմանում կամ վատ են խոսում հայերեն: Եզդիական գյուղերի գերակշիռ մասում չկան նախակրթարաններ, ինչը խնդիրներ է ստեղծում եզդի երեխաների համար, որոնք դպրոցում ետ են մնում իրենց հայախոս դասընկերներից:

Մայիսի 31-ի դրությամբ ՄԱԿ-ի փախստականների հարցերով գլխավոր հանձնակատարի գրասենյակի տվյալներով երկրում փախստականին նմանվող իրավիճակում բնակվում էին վերջին շրջանում Լեռնային Ղարաբաղից տեղահանված 34.168 անձ: Հուլիսին տեղական «Հանրային քաղաքականության ինստիտուտը» զեկույց ներկայացրեց, որտեղ գնահատված էին տեղահանված երեխաների, որոնք կազմում են տեղահանվածների շուրջ 40 տոկոսը, կրթության ու պաշտպանության

կարիքները։ Ըստ զեկույցի տեղահանված երեխաների ժամանմամբ պայմանավորված տարբեր խնդիրներ են ծագել, մասնավորապես՝ կրթական կարիքների ոչ համարժեք գնահատումը, դպրոց չհաճախող երեխաների թվի վերաբերյալ ոչ հստակ տվյալները, ինչպես նաև կրթությունը զգալի ժամանակով ընդմիջելը։ Ըստ զեկույցի՝ կացության վայրի հաճախակի փոփոխությունը, որը զուգորդվում էր նաև դպրոցը փոխելով, բարձրացրել է տեղահանված երեխաների սթրեսայնությունը և տագնապայնությունը և խոչընդոտել կրթական համակարգում նրանց արդյունավետ ներառմանը։

Զեկույցում նշվում է, որ ուսուցիչների, տեղաբնակ երեխաների և նրանց ծնողների վերաբերմունքը, ներառելով և՛ բացասական, և՛ ծայրաստիճան դրական կարծրատիպեր, առանձնացրել է տեղահանված երեխաներին և խոչընդոտել նրանց ինտեգրմանը դպրոցական միջավայրում։ Հյուրընկալող համայնքը և դպրոցը տեղահանված երեխաների հարմարմանն ուղղված արդյունավետ և համակարգված աշխատանքներ չեն տարել։ Կրթության առանձնահատուկ պահանջներ ունեցող երեխաները հարմարման հարցում ավելի լուրջ դժվարությունների են բախվել։ Ըստ զեկույցի՝ հուլիսի դրությամբ նոր միջավայրին հարմարվելու հարցը լիովին թողնված էր տեղահանվածների համայնքի անդամներին և չկար համակարգված մասնագիտական աջակցություն կրթության ու հոգեբանական աջակցության հարցերով իրավասու կառույցների կողմից։

Երեխաների նկատմամբ բռնություն. Երեխայի իրավունքների մասին օրենքը սահմանում է բռնությունից երեխայի պաշտպանության իրավունքը, իսկ քրեական օրենսդրությամբ պատժամիջոցներ են սահմանվում երեխայի նկատմամբ բռնության համար։

2020թ. ռազմական գործողությունների ու ՔՈՎԻԴ-19 համավարակի պատճառած սթրեսայնությունը մեծացրել է երեխաների նկատմամբ բռնության ռիսկերը, հատկապես՝ էմոցիոնալ բռնության և անտեսման, ինչպես նաև սեռական շահագործման և բռնության ռիսկերը։ Պետության կողմից մատուցվող ծառայությունների շրջանակում երեխաների և նրանց խնամակալների հոգեկան առողջության ու հոգե-սոցիալական վիճակի բարելավման ու պաշտպանության համար առկա հնարավորություններն ու ռեսուրսները սահմանափակ են։

Ըստ դիտորդների՝ երեխաների հանդեպ բռնությունների դեմ պայքարը համարվել է առաջնահերթ կառավարության կողմից և քայլեր են ձեռնարկվել դրա դեմ, չնայած շարունակվել են հաղորդումները երեխաների դեմ բռնության վերաբերյալ ու շարունակում էին բացեր մնալ օրենսդրության մեջ և պրակտիկայում: Օրինակ՝ փետրվարին լրատվամիջոցներում հաղորդում եղավ, որ խորթ հոր, մոր և տատի կողմից շարունակաբար ծեծի ենթարկվելու հետևանքով ստացված վնասվածքներից մահացել է 18 ամսական երեխա:

Կառավարության Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարությունը և դրանից բխող 2020-22թթ. գործողությունների ծրագիրը ներառում էին ընտանիքում երեխայի նկատմամբ բռնության կանխարգելման քայլեր, այդ թվում ընտանիքում տեղի ունեցած բռնության համար պատիժների սահմանում, ընտանեկան բռնությունից տուժած անձանց համար աջակցման կենտրոնների հիմնում, երեխայի նկատմամբ մարմնական պատիժների արգելում: Տարվա ընթացքում իրականացված աշխատանքները ներառել են. մարդու իրավունքների հարցերի շուրջ վերապատրաստում 125 զինծառայողի համար, ընտանեկան բռնության և կանանց դեմ բռնության հարցերի շուրջ վերապատրաստում 149 ոստիկանի համար: Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարը հրաման է ստորագրել սոցիալ-հոգեբանական օգնության մասին՝ կապված տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ բռնության հետ: Իրազեկման աշխատանքներ են իրականացվել մի շարք ուղղություններով, ինչպիսիք են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց իրավունքների մասին իրազեկումը՝ երկրի բոլոր հոգեբուժական կառույցներում նոր իրազեկման պաստառների ապահովմամբ: Ստեղծվել է հանձնաժողով խոցելի ընտանիքներին ինտեգրված սոցիալական ծառայություններ մատուցելու նպատակով 2020թ. ձևավորված Միասնական սոցիալական ծառայությունների կենտրոնի խնդիրները վերհանելու ու հետագա զարգացմանն օգնելու նպատակով: Ըստ գործողությունների ծրագրի՝ տարվա ընթացքում մշակվել են օրենսդրական փոփոխությունների տարբեր փաթեթներ՝ սկսած երեխաների իրավունքներից մինչև աշխատանքային իրավունքներ:

Ըստ դիտորդների հոգեբանական ու ֆիզիկական բռնությունը որպես դաստիարակչական միջոց լայնորեն կիրառվում է թե՛ տղաների, ու թե՛ աղջիկների նկատմամբ, ու երկրում չկային պետական աջակցությամբ իրականացվող ծնողական

խնամքի դրական փորձի ուսուցման ծրագրեր։ Անուղղակի տվյալները ցույց են տալիս, որ դպրոցներում բավականին տարածված է բռնությունը հասակակիցների միջև և չկան մեխանիզմներ դրան հակազդելու համար։ Գենդերային անհավասարությունն ու կարծրատիպերը նպաստել են և՛ աղջիկների, և՛ տղաների նկատմամբ բռնությանն ու խոչընդոտներ են ստեղծել տուժողների համար՝ արդարության հասնելու հարցում։ Երեխաների պաշտպանության համակարգում ուղղորդումների ու հաղորդումներ տալու հետ կապված բարդ կարգավորումների, ինչպես նաև համակարգի ներսում պարտականությունների և պատասխանատվությունների անհասկանալի բաշխվածության հետևանքով երեխաների նկատմամբ բռնությունների հանդեպ արձագանքն անարդյունավետ է։ Տարեվերջի դրությամբ դեռ ընդունված չէին Ընտանեկան բռնության մասին 2017թ. ընդունված օրենքի իրականացման համար անհրաժեշտ իրավական ու նորմատիվային ակտերը։

Ըստ դիտորդների՝ սեռական բնույթի հանցագործությունների երկու երրորդը կատարվել են անչափահասների հանդեպ։ 2020թ. Քննչական կոմիտեի վարույթում քննվել է երեխաների դեմ ուղղված հանցանքների 328 դեպք, որից մեկ քառորդի պարագայում առկա էին սեռական բռնության հատկանիշներ։ Դիտորդների հակված էին կարծել, որ սեռական բռնության մասով թվերն իրականում ավելի շատ են, քանի որ ամոթալի համարվելու պատճառով բռնության նման դեպքերի մասին տուժողներն ու նրանց հարազատները հաղորդումներ չեն ներկայացնում։

Երեխաների, վաղ և պարտադրված ամուսնություն. Օրենքով սահմանված ամուսնական նվազագույն տարիքը 18-ն է, սակայն անձը կարող է ամուսնանալ 17 տարեկանում՝ օրինական խնամակալի թույլտվությամբ կամ 16 տարեկանում՝ կրկին օրինական խնամակալի համաձայնությամբ, սակայն պայմանով, որ ամուսնացող մյուս անձը լինի առնվազն 18 տարեկան։ Աղջիկների շրջանում վաղ ամուսնությունները լայնորեն տարածված են եզդիական համայնքներում։ Հաղորդումները մատնանշում էին, որ որոշ աղջիկներ վաղ թողնում էին դպրոցը կամ վաղ ամուսնության պատճառով, կամ էլ «փախցնելուց» ու պարտադրված ամուսնությունից խուսափելու համար։ Կառավարությունը չի հաշվառել վաղ ամուսնությունների դեպքերը։ «Եվրասիա համագործակցության հիմնադրամի» 2020թ. հրապարակած «Հայաստանում բնակվող ազգությամբ եզդի աղջիկների իրավունքներին և հնարավորություններին առնչվող խնդիրները» զեկույցում նշվում է,

որ կառավարությունը չուներ պարտադրված ամուսնությունները բացահայտելու ընթացակարգեր կամ իրազեկման/կանխարգելման ծրագրեր կապված վաղ ամուսնությունների հետ: Ըստ կառավարության՝ սկսվել են իրազեկման ծրագրեր:

Երեխաների սեռական շահագործում. Օրենքն արգելում է երեխաների սեռական շահագործումը և սահմանում է 7-15 տարվա ազատազրկում այդ խախտումների համար դատապարտվելու դեպքում: Մանկական պոռնկագրության համար դատապարտվելիս նախատեսվում է մինչև յոթ տարվա ազատազրկում: Սեռական համաձայնության նվազագույն տարիք է համարվում 16 տարին: 2020թ. հունիսին կառավարության կողմից սահմանվեց մարդկանց թրաֆիքինգի ու շահագործման զոհ դարձած երեխաների ուղղորդման մեխանիզմ:

Թեպետ պաշտոնական վիճակագրությամբ հիշատակվում են երեխաների շահագործման ու վաճառքի սակավաթիվ դեպքեր, սակայն ըստ ՀԿ-ների կան բազմաթիվ չբացահայտված և չհաղորդված դեպքեր, ինչը պայմանավորված է օրենսդրության, ուսուցման, իրազեկման բարձրացման, բացահայտման և հաշվետվությունների ներկայացման հետ կապված բացերով:

Հաստատություններում գտնվող երեխաներ. Օգոստոսի 4-ին ՄԻՊ գրասենյակը հաղորդեց հաշմանդամություն ունեցող երեխաների համար նախատեսված «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» իրենց կատարած այցի ընթացքում նկատված խնդիրների մասին: Ըստ ՄԻՊ գրասենյակի՝ սաների խնամքի, հանգստի ու կենցաղի պայմանները խախտում էին երեխաների արժանապատվությունը: Ի թիվս այլ խնդիրների նշվում էր, որ գերբնակեցվածությունը խանգարում է երեխաների սնվելու, քնի, հանգստի ապահովմանը և այս իրավիճակը երեխաների միջև վեճեր կամ լարվածություն է առաջացնում: Նախ խնդիրներ էին նկատվել կրթության կազմակերպման հարցերում: Այցի պահին հաստատության 47 սաների կրթությունը կազմակերպվում էր հանրակրթական և հատուկ ուսումնական հաստատություններում, իսկ 38-ինը՝ տնային ուսուցմամբ մանկատանը: Առանձնազրույցների ընթացքում պարզվել էր նաև, որ որոշ սաներ, որոնք գրանցված էին հանրակրթական ուսումնական հաստատություններում խուսափում են դպրոց հաճախելուց՝ վախենալով խարանից և խտրականությունից, իսկ տնային ուսուցումը

որոշ դեպքերում ձևական բնույթ ուներ: Չկային բավարար թվով դայակներ ու այլ անձնակազմ սաների հետ աշխատելու համար:

2020թ. իր տարեկան զեկույցում ՄԻՊ գրասենյակը նաև առաջ քաշեց 18 տարին լրանալուց հետո մանկատներում մնացող հաշմանդամություն ունեցող երեխաների հարցը, քանի որ նրանք չունեին անկախ կյանք վարելու հմտություններ: Այս խնդրի կարգավորմանն ուղղված ծրագրերը, օրինակ՝ մանկատների շրջանավարտներին բնակարանով ապահովելը մասնակի միջոց էր և չէր ապահովում խնդրի համակարգային լուծում:

Կառավարությունը շարունակում էր առաջնահերթ համարել հաստատությունների բեռնաթափումը և երեխաների համար ընտանեկան խնամքի ապահովումը: 2020թ. կառավարությունն ընդունեց «Երեխայի՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացմանն ու ներդաշնակ զարգացմանն ուղղված համալիր ծրագիրը» և դրանից բխող 2019-2023թթ. գործողությունների ծրագիրը. ՔՈՎԻԴ-19 համավարակը և 2020թ. Լեռնային Ղարաբաղի հակամարտության ռազմական գործողությունները խոչընդոտեցին այս ծրագրի իրականացմանը: Լեռնային Ղարաբաղից տեղահանված որոշ մարդիկ բնակեցվեցին խնամքի պետական հաստատություններում:

Խնամքի և կրթական հաստատություններում հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը շարունակում էր մնալ բարձր, իսկ հաշմանդամություն ունեցող երեխաները շարունակում էին ավելի քիչ հնարավորություն ունենալ օգտվելու համայնքային և ընտանեկան խնամքի տարբերակներից: Հաշմանդամություն ունեցող երեխաների համար հաստատությունից դուրս ծառայությունները և երեխաների և ընտանիքների համար մատչելիության ընդլայնումը ևս մնում էին կառավարության առաջնահերթությունը:

Անհետաձգելի իրավիճակներում խնամատարության ապահովման շուրջ իրազեկման և կարողությունների մեծացման աշխատանքներ են իրականացվել Գեղարքունիքի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում: Իրավասու մարմինների կողմից առանձնացվել են ֆինանսական միջոցներ տարվա ընթացքում խնամատար ընտանիքներում մոտ 100 երեխա տեղավորելու համար:

Երեխաների միջազգային առևանգում._Երկիրը միացել է «Երեխաների միջազգային առևանգման քաղաքացիական ասպեկտների մասին» 1980 թ. Հաագայի կոնվենցիային:

Տես Ծնողների կողմից երեխաների միջազգային առևանգումների վերաբերյալ ԱՄՆ պետքարտուղարության ամենամյա զեկույցը՝ https://travel.state.gov/content/travel/en/International-Parental-Child-Abduction/for-providers/legal-reports-and-data/reported-cases.html:

Հակասեմականություն

Երկրի հրեա ազգաբնակչությունը կազմում է 500-1000 հոգի: Նախքան 2020թ. Լեռնային Ղարաբաղի հակամարտության ռազմական գործողությունները հակասեմական դրսևորումների մասին հաղորդումներ չէին եղել, չնայած կային որոշ հակասեմական մեկնաբանություններ սոցիալական հարթակներում՝ ուղղված կառավարության ներկայացուցիչներին ու ակտիվիստներին: Կառավարությունը չի դատապարտել այս հակասեմական մեկնաբանությունները:

Ըստ հրեական համայնքի և այլ դիտորդների՝ 2020թ. աշնան ռազմական գործողությունները հանգեցրին հակասեմական տրամադրությունների, այդ թվում՝ սոցիալական հարթակներում հակասեմական գրառումների ավելացման և այս միտումը մեծապես վերագրվում էր Ադրբեջանի կողմից ռազմական գործողություններում իսրայելական արտադրության զենքերի օգտագործմանը: Սեպտեմբերի դրությամբ հրեական համայնքի որոշ անդամներ շարունակում էին հայտնել իրենց ուղղված հակասեմական մեկնաբանությունների մասին, որոնք հաճախ հնչում էին հանրային տրանսպորտում:

Փետրվարի 12-ին պղծվել էին Երևանում Հոլոքոստին և Ցեղասպանությանը նվիրված հուշարձանի հայկական և հրեական կողմերը, ընդ որում դա վերջին 5 ամսվա ընթացքում գրանցված արդեն 3-րդ դեպքն էր: Պետական պաշտոնյաներն արագ քննադատեցին այս արարքը՝ ի տարբերություն 2020թ. նմանատիպ միջադեպերի՝ արագ վերականգնելով հուշարձանը և ձերբակալելով հուշարձանը պղծելու մեջ կասկածվողին: Ըստ դատախազության՝ մարտի 31-ին գործը կարճվեց, քանի որ մեղսագործն առաջին անգամ էր զանցառել, ապա ինքնակամ ներկայացել էր ոստիկանություն, համագործակցել էր քննության հետ և զղջում էր իր արարքի համար:

Մարդկանց թրաֆիքինգ

Տես Պետքարտուղարության Մարդկանց թրաֆիքինգի մասին զեկույցը https://www.state.gov/trafficking-in-persons-report/ էջում:

Հաշմանդամություն ունեցող անձինք

Հաշմանդամություն ունեցող անձանց համար չի ապահովվում կրթության, առողջապահական ծառայությունների, հանրային շենքերի և տրանսպորտի հասանելիությունն ու մատչելիությունը մյուսների հետ հավասար հիմունքներով: Մայիսի 5-ին խորհրդարանն ընդունեց նոր օրենք հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին, որն ընդլայնում էր հաշմանդամության մասին սահմանումը՝ առաջնորդվելով իրավունքների վրա հիմնված մոտեցմամբ: Ըստ «Հյուման ռայթս վոտչի»՝ օրենքը նախատեսում է «մատչելիություն, անկախ կյանք, արդարադատության հասանելիություն, խելամիտ հարմարեցումներ և … արգելում է հաշմանդամության հիմքով խտրականության դրսևորումը և խելամիտ հարմարեցումներ ապահովելուց հրաժարումը համարում է խտրականություն: Օրենքը նաև ՀԿ-ներին թույլ է տալիս վարչական հայց ներկայացնել հաշմանդամություն ունեցող անձանց անունից, որոնք առողջության կամ այլ հանգամանքների պատճառով չեն կարող անձամբ դատարան ներկայանալ»: Հաշմանդամություն ունեցող անձանց հանդեպ խտրականությունը շարունակում էր տարածված խնդիր մնալ:

Օրենքով և կառավարության հատուկ որոշմամբ պահանջվում է, որ նոր և վերակառուցվող շենքերը, այդ թվում՝ դպրոցները ֆիզիկապես մատչելի լինեն հաշմանդամություն ունեցող անձանց համար: Գործնականում շատ քիչ շենքեր ու հաստատություններ են եղել մատչելի, անգամ եթե դրանք նորակառույց են կամ նորոգված: Բազմաթիվ հասարակական շինություններ, այդ թվում՝ դպրոցներ, մանկապարտեզներ եղել են անմատչելի: Հիվանդանոցներում, խնամքի հաստատություններում և առավել նշանակալի հաշմանդամություն ունեցող անձանց համար նախատեսված այլ կառույցներում պայմանները շարունակում էին մնալ ստանդարտներին չհամապատասխանող:

«Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիայի» անդամները մտահոգություն էին հայտնում հաշմանդամություն ունեցող անձանց հաստատությունների բեռնաթափման ուղղությամբ կառավարության կողմից

ձեռնարկվող ջանքերի դանդաղ ընթացքի վերաբերյալ և այն փաստի վերաբերյալ, որ կառավարությունը տարեց ու հաշմանդամություն ունեցող անձանց համար իրենց իսկ համայնքներում անկախ կյանք վարելու հնարավորություններ ապահովելու փոխարեն միջոցներ է հատկացնում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող երեխաների ու անձանց համար նախատեսված հաստատությունների վերանորոգման համար։

Հուլիսի 26-ին ՄԻՊ-ը հայտարարություն տարածեց, որտեղ խիստ մտահոգություն էր հայտնում հոգեբուժարաններում մարդկանց ոչ հոժարակամ բուժման վերաբերյալ։ Ըստ հայտարարության՝ ՄԻՊ գրասենյակի կողմից մշտադիտարկված բոլոր դեպքերում բուժառուների հիվանդության պատմագրերում բացակայել են ոչ հոժարակամ բուժում սկսելու իրավական հիմքերը։ Ստացիոնար բուժման կամ բուժման համար առհասարակ պատշաճ կերպով իրազեկ համաձայնություն ձեռք բերելու փոխարեն հիվանդանոցը դատարան է ներկայացրել տիպային դիմումներ՝ առանց կոնկրետ բուժառուի հոսպիտալացումը հիմնավորող բավարար փաստարկների։ Հատկապես մտահոգիչ էր, որ վաղուց ի վեր «հոժարակամ» բուժվող մի խումբ բուժառուներ անհասկանալի հանգամանքներում դարձել էին «խիստ վտանգավոր իրենց և շրջապատի համար», ինչը սակայն որևէ կերպ չէր հիմնավորվում վերջիններիս հիվանդության պատմագրերում։ Ըստ ՄԻՊ-ի՝ դատավորների մոտ տարակուսանքի տեղիք չեն տվել ոչ հոժարակամ բուժում սկսելու վերաբերյալ միջնորդությունները և դրանք առանց հիմնավորող փաստարկների հիմք են ծառայել դատական ակտ ընդունելու համար։ Դատավորներին ընդունած դատական ակտերը գրեթե նույնական են եղել, տարբերվել են միայն բուժառուների տվյալները, ինչից կարելի է ենթադրել, որ դրանք տիպային բնույթ են կրում։

Օգոստոսի 5-ին մեկ այլ հայտարարությամբ ՄԻՊ-ը դատապարտեց հոգեբուժական հաստատությունների բուժառուների ոչ հոժարակամ բուժումը դադարեցնելու վերաբերյալ դատական ակտերի ընդունման ձգձգումները և այդ ուշացումները համարեց արհեստածին։ Նա նկատեց, որ այդ ձգձգումների հետևանքով մարդիկ օրեր շարունակ մնում են հիվանդանոցում՝ ազատությունից զրկված վիճակում։

Չնայած հանրակրթության մասին օրենքը սահմանում է, որ մինչև 2025թ. հաշմանդամություն ունեցող երեխաների համար ընդհանուր կրթությունից անցում է կատարվելու դեպի ներառական կրթություն, իրավասու մարմինները շարունակում

էին ցուցաբերել մասնատված ու խտրական գործելակերպեր, որը չէր հանգեցնում կրթական համակարգի կամ սոցիալական նորմերի լայնամասշտաբ և կայուն փոփոխությունների: Շատ ՀԿ-ներ շարունակում էին հայտնել, որ ներառական դպրոցներն անմատչելի էին հաշմանդամություն ունեցող երեխաների համար, հասանելի չէին ուսումնական նյութերը և քիչ ջանքեր էին գործադրվում խելամիտ հարմարեցումներ ապահովելու ուղղությամբ: Տեսալսողական խնդիրներով երեխաները շարունակում էին կրթություն ստանալ առանձին հաստատություններում, իսկ հանրային դպրոցներում չկային բրայլյան լեզվով դասագրքեր, այլ տեխնիկական սարքավորումներ և համապատասխան մասնագետներ: Հաշմանդամություն ունեցող ուսանողների համար անհասանելի էր մնում բարձրագույն հետբուհական ու մասնագիտական կրթությունը:

Բոլոր տեսակի հաշմանդամություն ունեցող անձիք խտրականության են բախվել կյանքի բոլոր ոլորտներում՝ այդ թվում՝ բուժօգնության, սոցիալ-հոգեբանական վերականգնողական, կրթության, տրանսպորտի, հաղորդակցության, զբաղվածության, սոցիալական պաշտպանվածության և մշակութային միջոցառումների ու համացանցի օգտագործման հասանելիության հարցերում: Տեղեկատվության ու հաղորդակցության հասանելիության խնդիրն առավել մեծ էր տեսալսողական խնդիրներ ունեցողների համար: Առավել մեծ է եղել խտրականությունը հաշմանդամություն ունեցող կանանց նկատմամբ, մասնավորապես սոցիալական ներառման, բուժօգնության ու վերարտադրողական ծառայությունների, զբաղվածության և կրթության հասանելիության մասով:

«Ներառական իրավական բարեփոխումների կոալիցիան» փաստագրել է դեպքեր, երբ խախտվել են հաշմանդամություն ունեցող անձանց անձնական տվյալների գաղտնիության պահանջները: Որոշ դեպքերում հաշմանդամություն ունեցող անձանց առողջական տվյալների արտահոսք է եղել, որն այնուհետ օգտագործվել է նրանց հրապարակավ ծաղրելու համար: Ըստ Կոալիցիայի՝ հասարակական գործիչների առողջության մասին տեղեկությունները պարբերաբար օգտագործվել են տարբեր հասարակական խմբերի կողմից՝ նրանց արժանապատվությունը նսեմացնելու և նրանց գործարար վարկանիշն արատավորելու նպատակով: Կոալիցիայի դիտարկմամբ՝ այս մթնոլորտը հաշմանդամություն ունեցող անձանց ետ էր պահում հասարակական կյանքին ակտիվ մասնակցելուց:

Անմատչելի հասարակական շինությունները հաճախ ընտրությունների ժամանակ կիրառվել են որպես ընտրատեղամաս, ինչը խոչընդոտել է հաշմանդամություն ունեցող անձանց քվեարկությանը: Ըստ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելության՝ հունիսի 20-ի խորհրդարանական ընտրությունների ժամանակ ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձանց համար անմատչելի են եղել տեղամասերի 67 տոկոսը, իսկ տեղամասերի 32 տոկոսում տեղամասը հարմար ձևով կազմակերպված չի եղել հաշմանդամություն ունեցող ընտրողների համար:

Ըստ սահմանադրության՝ դատարանի կողմից անգործունակ ճանաչված անձինք իրավունք չունեն ընտրել կամ ընտրվել: 2020թ. դեկտեմբերին խորհրդարանը փոփոխություն կատարեց կուսակցությունների մասին օրենքում՝ սահմանելով, որ 18 տարին լրացած ցանկացած անձ կարող է կուսակցության անդամ լինել վերացնելով ընտրվելու տարիքային սահմանափակումը:

ՄԻԱՎ-ը և ՁԻԱՀ-ը սոցիալական խարան համարելը

Ըստ իրավապաշտպան խմբերի ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի առումով խոցելի համարվող անձանց, մասնավորապես մարմնավաճառների (այդ թվում՝ տրանսգենդեր սեռական աշխատողներ) և թմրամոլների նկատմամբ կա խտրականության ու բռնության դրսևորում հասարակության կողմից, ինչպես նաև ոչ իրավաչափ վերաբերմունք ոստիկանության կողմից: Այսօրինակ խտրականությունն առավելապես նկատվում է, երբ ՄԻԱՎ-դրական անձինք փորձում են բուժօգնություն ստանալ: ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունեցող կանայք հայտնում էին բուժանձնակազմի խտրական վերաբերմունքի մասին:

Սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված բռնության դրսևորումներ, քրեականացում և այլ չարաշահումներ

Եղել են առանձին հաղորդումներ կառավարության գործակալների կողմից ԼԳԲՏՔԻ+ անձանց հանդեպ բռնություն թույլ տալու մասին: Մարտի 13-ին զորակոչիկ Հ.Ա.-ն օգնության համար դիմել էր «Նոր սերունդ» ՀԿ-ին՝ հայտնելով, որ ծառայակիցները, իմանալով նրա սեռական կողմնորոշման մասին, սկսել էին ոտնձգությունների ենթարկել նրան: Հետո նա տեղափոխվեց այլ զորամաս, որտեղ մեկ այլ կոնֆլիկտ գրանցվեց նրա կողմնորոշման պատճառով: Նա պնդում էր, որ իր կողմնորոշման

մասին իմանալուց հետո այդ շրջանի ռազմական ոստիկանության պետի պաշտոնակատար Գ.Լ.-ն վիրավորել է իրեն, ապա լիցքավորել իր մոտ գտնվող ատրճանակը և երկու անգամ կրակել Հ.Ա.-ի ոտքերի աջ և ձախ կողմերը։ Դրանից հետո լիցքավորված ատրճանակը պահել է Հ.Ա-ի ճակատի ուղղությամբ ու սպառնացել սպանել, ապա ատրճանակի բռնակով հարվածել է Հ.Ա.-ին՝ կոտրելով քիթն ու ատամները։ Նույն օրը Հ.Ա.-ն տեղափոխվել է Ստեփանակերտի ռազմական ոստիկանության բաժին, որտեղ Գ.Լ.-ն և մի քանի այլ անձինք փայտյա մահակներով ծեծի են ենթարկել Հ.Ա.-ին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ։ Հ.Ա.-ին մի քանի օր թողել են խցում։ Նա միայն այլ զորամաս տեղափոխվելուց հետո է հանցագործության մասին հաղորդում ներկայացրել։ Իրավասու մարմինները քրեական գործ են հարուցել, որով քննությունը տարեվերջի դրությամբ ընթացքի մեջ էր։

Իրավապաշտպան կազմակերպությունների հաղորդումների համաձայն տարվա ընթացքում ավելացել են հասարակության կողմից հարձակումները՝ պայմանավորված անձի սեռական կողմնորոշմամբ և գենդերային ինքնությամբ։ Դեպքերի գերակշիռ մասում մեղավորներին բացահայտելու ու պատժելու ուղղությամբ պաշտոնապես քայլեր չեն ձեռնարկվել։ «Փինք Արմենիա» ՀԿ-ն փաստագրել է մարդու իրավունքների խախտման 28 դեպք 2020թ. հունվարից օգոստոս ընկած ժամանակահատվածում, որից 12-ը եղել են ընտանեկան բռնության դեպք։ Այս դեպքերից միայն 7-ի տուժողներն են ոստիկանություն հաղորդում են ներկայացրել, ընդ որում՝ դրանցից 3-ը կարճվել են։ ԼԳԲՏՔԻ+ անձինք դժկամությամբ են դեպքերի մասին հաղորդում ներկայացնում ոստիկանությանը, քանի որ վստահ չեն, որ դրանք պատշաճ կուսումնասիրվեն ու քննության կենթարկվեն և մեղավորները կպատժվեն։ Օրինակ՝ հուլիսին «Նոր սերունդ» ՀԿ-ից հաղորդում եղավ, որ քոլեջի ուսանող ԼԳԲՏՔԻ+ անձը ծեծի էր ենթարկվել համակուրսեցիների կողմից։ Ֆիզիկական բռնությանը նախորդել էին պարբերական վիրավորանքները կապված նրա սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հետ։ Տուժողը բռնության մասին հաղորդում ներկայացրեց ոստիկանություն, սակայն իրավասու մարմինները քրեական գործ չհարուցեցին։

Տարվա ընթացքում շարունակվել են գրանցվել բռնության դեպքեր տրանսգենդեր կանանց դեմ։ Հունիսի 15-ին «Նոր Սերունդը» հայտնեց, որ իր ընկերների հետ

Երևանում զբոսնող տրանսգենդեր կնոջը մի խումբ անձինք վիրավորական խոսքեր են ասել՝ ելնելով նրա սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վերաբերյալ իրենց ընկալումներից: Խոսքերին հաջորդել է ֆիզիկական բռնությունը և հարձակվողները ոտքերով հարվածել ու քարշ են տվել տուժողներին: Տուժողները հրաժարվել են հաղորդում ներկայացնել ոստիկանությանը: «Իրավունքի կողմ» ՀԿ-ի հաղորդմամբ Երևանում քաղաքապետարանի մոտակայքում ժամը մոտավորապես 03:30-ին անհայտ անձը մոտեցել է տրանսգենդեր Գ.Կ.-ին և նրա ընկերոջը, որը նույնպես տրանսգենդեր կին էր, և սպառնացել, որ եթե Գ.Կ.-ն իր հետ սեռական հարաբերություն չունենա, ապա կծեծի ու կդանակահարի նրան: Գ.Կ. նրան խնդրել է հանգիստ թողնել իրեն, բայց անծանոթը նրան ստիպելով իր հետ տարել է: Տեսնելով, որ այլ ճանապարհ չի մնում, Գ.Կ. իր ընկերոջը խնդրել է իրավապահների աջակցությանը դիմել, որից հետո անծանոթը նրան դանակահարել է ոտքի և ուսի հատվածում: Գ.Կ. կարողացել է փախչել նրանից և գնացել է Արաբկիրի ոստիկանություն հարձակման մասին հաղորդում տալու: Ըստ Գ.Կ-ի ոստիկանությունում իրեն ծաղրել են, ու որևէ բան չեն արել հանցագործին գտնելու համար:

Փետրվարի 3-ին ընդհանուր իրավասության դատարանը վճիռ կայացրեց 2018թ. մի գործով, որով մեղադրյալը հրդեհել էր տանսգենդեր սեքս աշխատողի բնակարանը՝ իմանալով նրա ինքնության մասին: Դատարանն արագացված ընթացակարգով (չնայած տուժողի առարկություններին, քանի որ արագացված վարույթը ենթադրում է սակավ խիստ պատիժ) մեղադրյալին դատապարտեց 3.5 տարվա ազատազրկման՝ ծանր մարմնական վնասվածք հասցնելու մեղադրանքով: Տուժողը կարծում էր, որ պատիժը հանցանքին չէր համապատասխանում: Հաջորդիվ կիրառվեցին 2018թ. համաներման դրույթները և մեղադրյալն ազատ արձակվեց:

Ըստ «Փինք Արմենիայի»՝ փետրվարին Սյունիքի մարզի քննչական մարմինը՝ վաղեմության ժամկետն անցնելու հիմնավորմամբ փակեց 2018թ. Շուռնուխի բնակիչների կողմից ԼԳԲՏՔԻ+ ակտիվիստների վրա հարձակվելու գործն ու հանեց բնակիչներին ներկայացված մեղադրանքները: 2020թ. օգոստոսին վերաքննիչ քրեական դատարանը որոշեց, որ քննիչները չեն կատարել գործի պատշաճ քննություն և հաշվի չեն առել տուժողներին հոգեկան ուժեղ տառապանք պատճառելու և

խտրականությամբ զուգորդված հանցագործություն կատարելու հանգամանքները և հանձնարարեց վերաբացել գործը։

Իրավապահները մերժել են քրեական հետապնդում իրականացնել մի շարք դեպքերում, երբ հնչել են բռնության կոչեր ու փորձեր են արվել սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով «հիմնավորել» ԼԳԲՏՔԻ+ անձանց դեմ ուղղված բռնությունը։

Հակախտրական օրենսդրական դրույթները՝ ԼԳԲՏՔԻ+ անձանց համար պաշտպանություն չէին ապահովում սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքերով։ Չկային ատելության հողի վրա կատարված հանցագործությունների դեմ պայքարի մասին օրենքներ կամ այլ քրեադատական մեխանիզմներ, որոնք կօգնեին ԼԳԲՏՔԻ+ համայնքի անդամների դեմ գործած հանցանքներով քրեական հետապնդում իրականացնելիս։ Հասարակության կողմից սեռական կողմնորոշման ու գենդերային ինքնության վրա հիմնված խտրականության դրսևորումը բացասաբար է անդրադարձել կյանքի բոլոր բնագավառներում՝ աշխատանքի անցնելու հեռանկարներ, բնակապահովում, ընտանեկան հարաբերություններ, կրթություն ու առողջապահական ծառայությունների հասանելիություն։ ԼԳԲՏՔԻ+ անձանց դեպ ուղղված բռնության կոչերը սրվել են 2020թ. աշնան ռազմական գործողություններից հետո և հունիսի 20-ի խորհրդարանական ընտրություններին ընդառաջ։ Տրանսգենդեր անձինք հատկապես խոցելի էին ֆիզիկական ու հոգեբանական բռնությունների ու հալածանքների տեսանկյունից։

Ակնհայտ նույնասեռական տղամարդիկ ազատվում են զինվորական ծառայությունից։ Ազատումը սակայն հիմնավորվում է հոգենյարդաբանական հետազոտման բժշկական եզրակացությամբ առ այն, որ անձի մոտ կա հոգեկան խանգարում, և այս մասին նշում էր կատարվում անձը հաստատող փաստաթղթերում, որը խոչընդոտ է աշխատանքի տեղավորման և վարորդական վկայական ձեռք բերելու հարցում։ Զինված ուժերում ծառայող նույնասեռական տղամարդկանց հանդեպ եղել են ֆիզիկական ու հոգեբանական ոտնձգություններ, ինչպես նաև շանտաժ ծառայակիցների և հրամանատարության կողմից։

ՄԱՍ 7. ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ա) Միավորումներ կազմելու ազատությունը և կոլեկտիվ պայմանագիր կնքելու իրավունքը

Օրենքը պաշտպանում է անկախ միավորումներ կազմելու և դրանց անդամակցելու բոլոր աշխատողների իրավունքը՝ բացառությամբ բանակում ոչ քաղաքացիական ծառայողների և իրավապահ մարմինների աշխատակիցների: Օրենքը նաև սահմանում է գործադուլների իրավունք՝ նույն բացառություններով, և թույլատրում է կոլեկտիվ պայմանագրերի կնքում: Օրենքը սահմանում է, որ գործադուլ սկսելուց առնվազն 7 օր առաջ պետք է այդ մասին ծանուցել գործատուին և մինչ այդ պետք է պարտադիր հաշտեցման գործընթաց լինի, ինչպես նաև աշխատողների 2/3-ի համաձայնությունը՝ արտահայտված գաղտնի քվեարկության միջոցով: Օրենքը նախատեսում է, որ միություններին անդամակցելու պատճառով աշխատողի իրավունքները չեն կարող սահմանափակվել: Աշխատանքային օրենսգրքում ներկայացվում են այն հիմնավոր պատճառները, որոնց հիման վրա աշխատողին կարող են հեռացնել աշխատանքից, և այդ շարքում միութենական գործունեությունն ընդգրկված չէ:

Հուլիսի 1-ին գործողության մեջ մտան աշխատանքային օրենսգրքի դրույթները, որոնցով վերականգնվում էր Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի (ԱԱՏՄ) պետական վերահսկողության գործառույթն աշխատանքային օրենսդրության ողջ ծավալով: Այս փոփոխությունները, ինչպես նաև ԱԱՏՄ-ի կանոնադրության փոփոխությունները հնարավորություն տվեցին ԱԱՏՄ-ին քայլեր ձեռնարկել աշխատանքային օրենսդրության խախտումների ուղղությամբ՝ հիմք ընդունելով գրավոր բողոքները: ՍԱՏՄ-ը պարտավոր է գործատուներին նախապես ծանուցել տեսչական ստուգումների մասին: Իր նոր գործառույթներն իրականացնելու համար ՍԱՏՄ-ի հաստիքացուցակում ավելացվեց տեսուչի 60 հաստիք, որից հետո աշխատանքային տեսուչների թիվն ըստ հաստիքացուցակի կազմեց 92, իսկ տարեվերջի դրությամբ համալրված էին այդ տեղերից 50-ը:

Կառավարությունն արդյունավետ կերպով չի պաշտպանել միավորումներ կազմելու ազատությունը և համապատասխան օրենքները բավարար չեն եղել, թեպետ

խախտումների համար նախատեսված տուգանքները համարժեք էին քաղաքացիական իրավունքների մերժման համար նախատեսված այլ տուգանքներին։ Երկրում գործատուների դիմադրության, գործազրկության բարձր մակարդակի և վատ տնտեսական պայմանների պատճառով աշխատավորական կազմակերպությունները մնացել են թույլ։ Փորձագետները նշում էին, որ թեպետ սահմանադրությամբ ամրագրված է գործադուլների իրավունքը, սակայն այն դժվար է իրացնել առկա հաշտեցման ու քվեարկելու պահանջներով։

Օգոստոսի 20-ին կառավարությունը նոր կարգավորումներ ընդունեց, որոնց համաձայն աշխատողները պետք է կա՛մ ներկայացնեին ՔՈՎԻԴ-19-ի պատվաստումը հաստատող փաստաթուղթ կա՛մ ՊՇՌ թեսթի արդյունք։ Կարգավորումները վերաբերում էին պետական համակարգի բոլոր աշխատողներին և մասնավոր հատվածի մի ստվար քանակի ընկերությունների։ Հղի կանայք և պատվաստման բժշկական հակացուցումներ ունեցող անձինք ազատված էին այս պահանջները կատարելուց։ Գործատուները, որոնց համար կիրառելի էր պահանջը, պարտավոր էին հավաքել ու հաշվառել աշխատակիցների պատվաստումների ու թեստերի տվյալները։ Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան և Հայաստանի գործատուների հանրապետական միությունը նշում էին, որ երկշաբաթյա կտրվածքով ՔՈՎԻԴ-19-ի ՊՇՌ թեստ հանձնելն աշխատողի համար ամսական ենթադրում էր մոտ 15.000 ՀՀ դրամ (30 ԱՄՆ դոլար) ծախս, որը լուրջ բեռ էր աշխատողների համար։ Նաև նոր կարգավորումները չեն քննարկվել Եռակողմ հանձնաժողովի հետ, թեպետ դա պահանջվում էր 2020թ. հոկտեմբերին ստորագրված Եռակողմ համաձայնագրով։ Ըստ այլ դիտորդների նոր կարգավորումը, որը պարտադրում էր գործատուներին վճարել աշխատանքի հետ կապված պարտադիր բժշկական ստուգումների համար, աշխատանքային օրենսգրքի խախտում էր։ Դեկտեմբերի 10-ին խորհրդարանը հաստատեց օրենսդրական փոփոխությունները, որոնք գործատուներին թույլ էին տալիս աշխատանքից արձակել աշխատողներին, որոնք հրաժարվում էին պատվաստվել ՔՈՎԻԴ-19 դեմ կամ յոթ օրը մեկ հանձնել թեստ։ Դեկտեմբերի 23-ին Սահմանադրական դատարանը որոշում կայացրեց, որ կառավարության որոշումներում տեղ գտած ձևակերպումներն այն մասին, թե աշխատողները պետք է վճարեն թեստի համար, հակասում էր սահմանադրությանը, բայց թեստավորման պահանջը չմերժեց։ Ըստ կառավարության՝ դատարանի որոշումը պետության կամ

գործատուի համար պարտավորություն չէր ստեղծում վճարել աշխատողների ՔՈՎԻԴ-19 թեստի համար, և չպատվաստված աշխատողները պետք է շարունակեին շաբաթը մեկ ներկայացնել թեստի արդյունքը:

բ) Հարկադիր կամ ստրկական աշխատանքի արգելում

Օրենքով արգելվում են և քրեորեն պատժելի են համարվում հարկադիր կամ ստրկական աշխատանքի բոլոր տեսակները, սակայն օրենքում «հարկադիր աշխատանքի» սահմանում չի տրվում: ՍԱՏՄ-ը կարող է բացահայտել հարկադիր աշխատանքի դեպքերն ու տուգանքներ նշանակել, սակայն հարկադիր աշխատանքի մասին օրենսդրության կիրառումն ապահովում են իրավապահ մարմինները: Կառավարությունն արդյունավետ կերպով չի ապահովել օրենքի կիրառումը: Քրեական հետապնդումներում նախաձեռնողականություն հանդես չի բերվել և մեծ է եղել զոհերի ինքնաբացահայտմանն ապավինելու աշխատառճը: Դեկտեմբերին արձանագրվեց 2014թ. ի վեր աշխատանքային թրաֆիքինգի գործով առաջին դատապարտումը: Չկային համարժեք ռեսուրսներ, ստուգումներ ու լուծումներ, որպեսզի բացահայտվեր հարկադիր աշխատանքի դեպքերի ողջ շրջանակը: Աշխատանքային թրաֆիքինգի համար նախատեսված պատիժները համարժեք են այլ լուրջ հանցանքների համար նախատեսվող պատիժներին, սակայն հազվադեպ են կիրառվել:

Դեկտեմբերին 63-ամյա մի կին աշխատանքային թրաֆիքինգի համար (անչափահասին մուրացկանության դրդելու համար) դատապարտվեց յոթ տարվա ազատազրկման: Պատիժը փոխվեց երկու տարվա պայմանական ազատազրկման՝ հաշվի առնելով հանցագործի լուրջ առողջական խնդիրները, իրեն մեղավոր ճանաչելու և իրավապահների հետ համագործակցելու հանգամանքները: Տարեվերջի դրությամբ մի քանի այլ աշխատանքային թրաֆիքինգի գործերով քննություն էր ընթանում: Առավել աղմկահարույց գործերից մեկը Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատում գրանցված աշխատանքային շահագործման դեպքն էր: Ըստ Քննչական կոմիտեի տուն-ինտերնատի աշխատակիցը շահագործել էր տուն-ինտերնատի մտավոր-ճանաչողական խնդիրներ ունեցող 70-ամյա բնակչին, որն աշխատել է որպես վաճառողուհի տուն ինտերնատի տարածքում աշխատակցի կողմից բացված հրուշակեղենի խանութում: Տուժողը 16 տարի շարունակ աշխատել է

շաբաթական 5 օր, օրական 7.5 ժամ առանց անընդմեջ: Տարեվերջի դրությամբ Մարտունիում շարունակվում էր գործով դատաքննությունը:

Տես նաև Մարդկանց թրաֆիքինգի մասին Պետքարտուղարության զեկույցը՝ https://www.state.gov/trafficking-in-persons-report/:

գ) Երեխայի աշխատանքի արգելում և աշխատելու նվազագույն տարիք

Օրենքն արգելում է երեխայի վատթարագույն աշխատանքի բոլոր ձևերը: Աշխատանքի անցնելու նվազագույն տարիքը 16-ն է, սակայն ծնողի կամ խնամակալի թույլտվությամբ երեխաները կարող են աշխատել 14 տարեկանից: 14 տարին չլրացած երեխաներին օրենքը թույլատրում է ընդգրկվել ստեղծագործական աշխատանքում՝ կինեմատոգրաֆիայի, մարզական, թատերական և համերգային կազմակերպություններում, կրկեսում, հեռուստատեսությունում և ռադիոյում: 14-16 տարեկան երեխաների համար սահմանված է 24-ժամյա առավելագույն շաբաթական աշխատաժամանակ, իսկ 16-18 տարեկանների համար՝ 36 ժամ: 18 տարին չլրացած անձանց համար արգելվում է արտաժամյա աշխատանքը, աշխատանքը վնասակար, դժվարին ու վտանգավոր պայմաններում, աշխատանքը տոն օրերին և գիշերային ժամերին: Համապատասխան մարմինների կողմից օրենքների արդյունավետ կիրառումը չի ապահովվել: Չնայած ՍԱՏՄ-ը 2020թ. երեխայի աշխատանքի մասին կարգավորումների վերաբերյալ իրազեկման աշխատանքներ տարավ սուպերմարկետների ցանցերի համար, սակայն դեկտեմբերի 25-ին «Հետքը» ներկայացրեց երևանյան «Էվրկա», «Երևան սիթի», «Նոր Զովք» և «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցերում կատարած իր հետաքննությունը, որով բացահայտվել էին խանութներ, որտեղ անչափահասների հետ կապված աշխատանքային օրենսգրքի պահանջները չէին ապահովվում, մասնավորապես 14-17 տարեկան անչափահասներն աշխատում էին շաբաթական 40 ժամից ավել: Նախատեսված տուգանքները համարժեք են այլ լուրջ հանցանքների համար նախատեսվող տուգանքներին, բայց չէին պարտադրում համապատասխանության պահանջների կատարման: Ոչ պլանային կամ անսպասելի տեսչական այցերի բացակայությունը խոչընդոտել է երեխայի աշխատանքի վերաբերյալ օրենսդրական պահանջների կիրառմանը, չնայած տարվա ընթացքում ՍԱՏՄ-ն անցկացրել է պլանային տեսչական ստուգումներ կապված անչափահասների աշխատանքային իրավունքների պաշտպանության հետ:

14 տարին չլրացած երեխաները զբաղված են եղել տարբեր ոլորտներում, այդ թվում՝ գյուղատնտեսություն, շինարարություն և զբաղվել են մուրացկանությամբ: Գյուղական բնակավայրերում ապրող երեխաներն առավել խոցելի էին գյուղատնտեսության ոլորտում հարկադիր աշխատանքի տեսանկյունից: Բացի այդ, կառավարության կողմից միջոցներ են ձեռնարկվել հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը շուրջօրյա խնամքի հաստատություններում նվազեցնելու ուղղությամբ, որտեղ նրանք առավել խոցելի էին աշխատանքի շահագործման առումով:

Տես նաև ԱՄՆ աշխատանքի դեպարտամենտի Մանկական աշխատանքի վատթարագույն ձևերի մասին բացահայտումները՝ https://www.dol.gov/agencies/ilab/resources/reports/child-labor/findings էջում:

դ) Աշխատանքային և մասնագիտական խտրականություն

Սահմանադրությամբ ու աշխատանքային օրենսգրքով արգելվում է խտրականությունը կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծննդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից: Այլ օրենքներով ու կանոնակարգերով արգելվում է կոնկրետ աշխատանքային և մասնագիտական խտրականությունն ըստ սեռի: Կառավարությունն արդյունավետորեն չի ապահովել համապատասխան օրենքների կիրառումը և չեն եղել արդյունավետ իրավական մեխանիզմներ ապահովելու համապատասխան կանոնակարգերի կիրառումը: Աշխատանքային ու մասնագիտական խտրականության դրսևորումները պայմանավորված են սեռով, տարիքով, հաշմանդամության առկայությամբ, սեռական կողմնորոշմամբ, ՄԻԱՎ/ՁԻԱՀ ունենալու հանգամանքով և կրոնական պատկանելությամբ, թեև վիճակագրություն այսօրինակ խտրականության ծավալների վերաբերյալ չի եղել: Խախտումների համար սահմանված տուգանքները քաղաքացիական իրավունքի մերժման հետ կապված այլ նմանատիպ օրենքներով սահմանված տույժերին համահունչ չեն եղել:

Ընդհանուր առմամբ կանայք չեն ունեցել մասնագիտական կամ աշխատավարձային նույն հնարավորությունները, ինչ տղամարդիկ, և հաճախ կատարել են որակավորում չպահանջող կամ ավելի ցածր վարձատրվող աշխատանքներ: Չնայած աշխատանքային օրենսգրքով աշխատանքային հարաբերությունների բոլոր կողմերի համար սահմանվում է «իրավահավասարություն», սակայն այն հավասար աշխատանքի համար հավասար վարձատրություն ապահովելու հստակ պահանջ չի դնում: Արժույթի միջազգային հիմնադրամը նշում էր, որ աշխատավարձերի գենդերային խզվածքը երկրում շեշտակի մեծ էր: «ՄԱԿ Կանայք» կազմակերպության կողմից 2020թ. հրապարակած Մարյան Պետրեսկու և Հայաստանի ազգային վիճակագրական ծառայության հետազոտությունը մատնանշում էր, որ վարձատրության գենդերային ճշգրտված խզվածքը (անհատական, աշխատանքային բնութագրերի հիման վրա ճշգրտումներից հետո) գնահատվում է մոտ 10 տոկոս, ցուցանիշ որը կարող է վերագրվել աշխատանքի շուկայում խտրականությանը և չդիտարկելի գործոնների ազդեցությանը: Բացի այդ, աշխատավարձ ստացողների ամենաբարձր 1 տոկոսը բախվում էր Հայաստանի աշխատաշուկայում վարձատրության գենդերային խզվածքի որը գնահատվում է մոտ 19 տոկոս: Ըստ Ասիական զարգացման բանկի 2019թ. զեկույցի տղամարդկանց համեմատ կանանց մասնակցությունն աշխատուժում ավելի քիչ է, և կանայք առավել հաճախ են զբաղեցնում ոչ լրիվ դրույքով հաստիքներ: Զեկույցը նաև նշում էր, որ մասնագիտությունների շուրջ ձևավորված կարծրատիպերը սահմանափակում էին կանանց ընտրության շրջանակը, և կանանց ավելի քան 60 տոկոսը ներգրավված է միայն երեք ոլորտում՝ գյուղատնտեսություն, կրթություն և առողջապահություն: Կանայք քիչ թիվ են կազմում ղեկավար պաշտոններում, և փոքր ու միջին ձեռնարկություններում կին ղեկավարներ հանդիպում են 5-ից մեկում:

Շատ գործատուներ, ըստ հաղորդումների, խտրականություն են դրսևորում ըստ տարիքի և սեռի՝ հաճախակի թափուր տեղերի համար առաջադրելով պահանջներ սեռի, տարիքի ու արտաքին տվյալների վերաբերյալ: Չնայած որ խտրականության այս դրսևորումը բավական լայն տարածում ուներ, սակայն չկային հուսալի հետազոտություններ և իշխանությունները քայլեր չէին ձեռնարկում խնդիրը մեղմելու համար: Աշխատավայրում սեռական ոտնձգությունների վերաբերյալ իրազեկության ցածր մակարդակը և դրա մասշտաբները մատնացույց անող համակողմանի

հաղորդումներ չկային, սակայն լրատվական հրապարակումները փաստում էին, որ այդ ոտնձգությունները սովորական երևույթ էին: Լայն տարածում ունեին թափուր տեղերի մասին հայտարարությունները, որտեղ պահանջվում էին երիտասարդ, բարետես կանայք: Գործազուրկ դարձած աշխատողները, հատկապես՝ կանայք, 40 տարեկանից հետո շատ քիչ հնարավորություն ունեն իրենց կրթությանն ու հմտություններին համարժեք աշխատանք գտնել: ԼԳԲՏՔԻ+ անձինք, հաշմանդամություն ունեցող անձինք և հոի կանայք զբաղվածության հարցերում նույնպես հանդիպել են խտրականության: Կրոնական փոքրամասնությունների նկատմամբ ըստ հաղորդումների խտրականություն է եղել պետական հիմնարկներում աշխատելու հարցում:

ե) Աշխատանքի ընդունելի պայմաններ

Աշխատավարձի և աշխատաժամերի մասին օրենքներ. Ամսական նվազագույն աշխատավարձն աղքատության շեմից բարձր է: Օրենքով աշխատանքային շաբաթվա տևողությունը 40 ժամ է, և սահմանված է տարեկան 20 օր պարտադիր վճարովի արձակուրդ, ինչպես նաև փոխհատուցում արտաժամյա և գիշերային աշխատանքի դիմաց: Օրենքով նաև սահմանվում է, որ պարտադիր արտաժամյա աշխատանքը երկու հաջորդական օրվա ընթացքում չի կարող գերազանցել 4 ժամը, իսկ տարվա ընթացքում՝ 180 ժամը:

ՍԱՏՄ-ը պատասխանատու է աշխատավարձի և աշխատաժամերի մասին օրենքների կիրառման համար: Տեսուչների քանակը բավարար էր Աշխատանքի միջազգային կազմակերպության հանձնարարականների համաձայն այդ պահանջների հետ համապատասխանությունն ապահովելու համար: Տեսուչները կարող էին պատժամիջոցներ նշանակել, սակայն չէին կարող չհայտարարված տեսչական ստուգումներ անցկացնել: Իրավասու մարմինների կողմից աշխատանքային ստանդարտների կիրառումն արդյունավետորեն չի ապահովվել ստվերային ու ոչ ստվերային ոլորտներում: Աշխատավարձերի և աշխատաժամերի խախտումների համար տուգանքները համահունչ են եղել նմանօրինակ այլ արարքների համար սահմանված տուգանքներին, սակայն որոշ դեպքերում գործատուների համար այդպես ավելի քիչ էին ծախսերը, քան օրենքի պահանջների կատարման պարագայում: Տեսչական ստուգումները նոր սկսելու ու անկախ արհմիությունների բացակայությամբ

պայմանավորված աշխատողների իրավունքները շարունակում էին մնալ առավելապես չպաշտպանված։ Այնուհանդերձ, ըստ ԱԱՏՄ-ի այն փաստը, որ բազմաթիվ աշխատանքային բողոքներ լուծում են ստացել գործատուների կողմից՝ առանց ԱԱՏՄ-ի որոշմանը սպասելու, փաստում են այստեղ դրական տեղաշարժերի մասին, և մատնանշում, որ ԱԱՏՄ-ի գոյությունն արդեն իսկ կանխարգելիչ նշանակություն ունի խախտումների մասով։ Աշխատանքային հարցերին առնչվող գործերով վարչական դատարանները պարտավոր են որոշումները կայացնել եռամսյա ժամկետում, սակայն իրենց իրավունքների վերականգնման համար սակավաթիվ աշխատողներ են ընտրում դատական ճանապարհը՝ պայմանավորված իրավական ծախսերով, հայց ներկայացնելու գործընթացի խրթինությամբ և դատական համակարգի նկատմամբ անվստահությամբ։ Պարզ չէր արդյոք գերծանրաբեռնված դատարանները կարողանում էին ապահովել վեճի լուծման եռամսյա ժամկետն այդպիսի հայցերի ներկայացման դեպքում։

ՍԱՏՄ պետի հուլիսին հեռարձակված հարցազրույցի համաձայն բողոքների գերակշիռ մասը, որը փոխանցվել է իրենց, առնչվել են աշխատավարձերի չվճարմանը կամ աշխատավարձը օրենքով սահմանված ժամկետներում չվճարմանը։

Մասնավոր ոլորտի շատ աշխատողներ, հատկապես սպասարկման և մանրածախ ծառայությունների ոլորտում չեն կարողացել օգտվել վճարովի արձակուրդից ու նրանցից պահանջվել է աշխատել օրական 8 ժամից շատ ավել՝ առանց հավելյալ վարձատրության։

Հունիսի 22-ին «Հետք մեդիա գործարանը» հրապարակեց ներկա ու նախկին 30 մատուցողների շրջանում կատարած հարցման հիման վրա պատրաստված մի հոդված մատուցողների անտեսված իրավունքների մասին։ Հոդվածում վերհանված էին աշխատանքային իրավունքների կրկնվող խախտումներ, մասնավորապես՝ երկար աշխատաժամեր՝ առանց արտաժամյա աշխատանքի փոխհատուցման կամ պատշաճ ընդմիջումների, ֆինանսական տույժերի կիրառում կանոնների փաստացի կամ թվացյալ խախտումների դեպքում, ստորագրված աշխատանքային պայմանագրերի կամ պայմանագրի օրինակի բացակայություն, արձակուրդի կամ վճարովի արձակուրդի մասին դրույթների բացակայություն, նվազագույն աշխատավարձ կամ աշխատավարձի բացակայություն և թեյավճարների անարդարացի բաշխում

հաստատության մատուցողների միջև։ Դեկտեմբերի 25-ին «Հետքը» հրապարակեց Մեդիա գործարանի՝ երևանյան սուպերմարկետների ցանցերում կատարած իր հետաքննությունը, որի ընթացքում «Էվրկա», «Երևան սիթի», «Նոր Զովք» և «ՍԱՍ» խանութներում աշխատելու փորձառություն էին ունեցել հենց լրագրողները։ Աշխատանքային իրավունքների մասով արձանագրվել էին բազմաթիվ խախտումներ, ինչպիսիք են՝ գրավոր աշխատանքային պայմանագրի բացակայությունը կամ աշխատողների պայմանագրի օրինակը չտրամադրելը կամ կարդալու հնարավորություն չտալը. ընդմիջման և հանգստի սահմանված ժամանակահատվածը չապահովելը. տույժ-տուգանքները փաստացի կամ ենթադրյալ թերացումների համար՝ ուշացումներ, շպարված չլինել, նստել կամ ժամկետանց ապրանքների բացահայտում հաճախորդների կողմից. արտաժամյա աշխատանքի և տոնական օրերի աշխատանքի համար չվարձատրելը։

Հունիսի խորհրդարանական ընտրությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ դիտորդական առաքելությունը, ինչպես նաև տեղական դիտորդներն արձանագրել էին քաղաքական դերակատարների ու գործատուների կողմից քարոզարշավային միջոցառումներին մասնակցելուն ուղղված ճնշումներ աշխատողների նկատմամբ թե՛ մասնավոր, թե՛ հանրային հատվածում։ Մատնացույց էին արվում երկրի խոշորագույն գործատուները, ինչպիսիք են՝ Գազպրոմ Արմենիան, Հայաստանի էլեկտրական ցանցերը, Զանգեզուրի պղնձա-մոլիբդենային կոմբինատը, ինչպես նաև մի շարք համայնքային կառավարման մարմիններ և ենթակա կառույցներ։ Ըստ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների՝ որոշ գործատուներ աշխատողներին սպառնում էին չկատարելու դեպքում ազատել աշխատանքից։ Հունիսի 18-ին ընտրողների ազատ կամաարտահայտմանը խոչընդոտելու մեղադրանքով Հատուկ քննչական ծառայությունը ձերբակալեց «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի տնօրեն և ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի թեկնածու Արմեն Չարչյանին. դա տեղի ունեցավ այն բանից հետո, երբ սկսեց շրջանառվել մի ձայնագրություն, որտեղ Չարչյանն աշխատողներին պարտադրում էր մասնակցել քվեարկությանը՝ ենթադրաբար «Հայաստան» դաշինքի օգտին քվեարկելու համար։

Աշխատողների առողջություն և անվտանգություն. Աշխատողների առողջության ու անվտանգության ստանդարտները սահմանված են կառավարության որոշմամբ, սակայն շատ հարցերում առողջության ու անվտանգության նորմերը չեն

համապատասխանում ստանդարտներին։ Օրինակ՝ գյուղատնտեսության ոլորտում բարձր ջերմաստիճանի կամ պեստիցիդների հետ կապված հարցերը որևէ կերպ արծարծված չեն։ 2020թ. կառավարության տվյալներով աշխատավայրերում արձանագրվել է 24 պատահար, որոնց ժամանակ աշխատողները ստացել են մարմնական վնասվածքներ և 3 պատահար՝ մահվան ելքով։ Հոկտեմբերի դրությամբ ՍԱՏՄ տվյալներով հանքարդյունահանման ու արդյունաբերական ոլորտներում, ինչպես նաև էներգետիկ արդյունաբերության ոլորտում գրանցվել է մահվան 6 դեպք։ Քննչական կոմիտեի հաղորդմամբ հոկտեմբերի դրությամբ հարուցված է 18 քրեական գործ շինարարական, էներգետիկ, հանքարդյունահանման և ծառայությունների մատուցման ոլորտում. գործերից 2-ը կարճվել են հանցակազմի բացակայության հիմքով, իսկ 7-ն այն հիմքով, որ մեղավորը չէր կարող իմանալ իր արարքների վտանգավորության մասին։ Հաշվի առնելով գործազրկության բարձր մակարդակը երկրում՝ աշխատողները սովորաբար դուրս չէին գալիս իրենց առողջությունը կամ անվտանգությունը վտանգող իրավիճակներից և հազիվ թե բողոքեին իրենց իրավունքների խախտումների մասին։

Տարվա ընթացքում ՍԱՏՄ-ը, որը լիազորված կառույց է աշխատողների առողջության և անվտանգության հարցերում, շարունակել է նախապես պլանավորված տեսչական ստուգումներ անցկացնել սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, բժշկական օգնության և սպասարկման, դեղերի շրջանառության, ինչպես նաև աշխատողների առողջության պահպանման և անվտանգության ապահովման հարցերի շուրջ։ ՍԱՏՄ-ը ստուգումներ է անցկացրել նաև հանքարդյունաբերության ոլորտում, որը համարվում է խախտումների տեսանկյունից ռիսկային ոլորտ։

Կառավարությունն արդյունավետ կերպով չի ապահովել աշխատողների առողջության պահպանման ու անվտանգության ապահովման օրենքների կիրառումը, սակայն սահմանված տուգանքները համարժեք են նմանատիպ հանցանքների համար նախատեսվող տուգանքներին։

2020թ. հունիսի ՄԻՊ-ը ներկայացրեց տեղեկանք 2019թ. ընթացքում գրանցված աշխատանքային իրավունքների խախտումների բնույթի վերաբերյալ։ Ներկայացված խնդիրները ներառում էին՝ գործատուներն աշխատանքից ազատվող աշխատողների

հետ վերջնահաշվարկ չեն կատարում, աշխատողներն անհիմն ազատվում են աշխատանքից, գործատուները չեն պահպանում աշխատողներին կարգապահական տույժերի ենթարկելու կարգը, գործատուներն աշխատողների աշխատավարձերից անհիմն պահումներ են անում և առանց աշխատողների համաձայնության գործատուները նրանց այլ աշխատանքի են փոխադրում։ ՄԻՊ գրասենյակը բացահայտել էր նաև մի շարք տարածված խախտումներ ու համակարգային խնդիրներ, ինչպիսիք են՝ աշխատանքի ընդունվելիս աշխատողների հետ աշխատանքային պայմանագրեր չկնքելը, աշխատողին աշխատանքից ազատման դիմում գրելուն հարկադրելը, կատարած արտաժամյա աշխատանքի համար աշխատողին չվարձատրելը։ ՀՔԱՎ գրասենյակը 2020թ. հունիսին հրապարակված իր զեկույցում ևս արձանագրել էր նմանօրինակ խնդիրներ՝ հիմնվելով աշխատանքային իրավունքների վերաբերյալ 2019թ. մշտադիտարկման տվյալների վրա։

Ստվերային ոլորտ. Որոշ աշխարհագրորեն աղքատ բնակավայրերում հիմնական գործատու հանդիսացող ձեռնարկությունների կառավարիչները, հաճախ օգտվելով այլ աշխատանք չլինելու հանգամանքից, չեն ապահովել համարժեք վարձատրության, աշխատանքի անվտանգ պայմաններ և քայլեր չեն ձեռնարկել բնապահպանական մտահոգությունների հետ կապված։ Համաշխարհային բանկի 2019թ. մի զեկույցում նշվում էր, որ երկրի վարձու աշխատողների մոտ 13 տոկոսը չունեին գրավոր պայմանագրեր և չէին օգտվում այնպիսի արտոնություններից, ինչպիսիք են՝ վճարովի արձակուրդը, երեխայի խնամքի և անաշխատունակության արձակուրդը։ Ստվերային ոլորտի աշխատողների վրա տարածվում են աշխատավարձի, աշխատաժամերի և աշխատողների առողջության և անվտանգության մասին օրենքները, սակայն տեսչական ստուգումները նրանց վրա չեն տարածվել։ Երկրի տնտեսության գյուղատնտեսական ուղղվածությամբ պայմանավորված ստվերային զբաղվածության միտումներ կային։

Ըստ պաշտոնական վիճակագրության՝ կառավարության հակակոռուպցիոն քայլերն ու հարկային մարմինների ակտիվ ջանքերը հանգեցրել են պաշտոնապես գրանցված աշխատողների թվի նկատելի ավելացման երկրում։ ՔՈՎԻԴ-19 համավարակով պայմանավորված ստվերային զբաղվածության խնդիրը հայտնվեց ուշադրության կենտրոնում։ Կառավարության կողմից նպաստներ հատկացվեցին այն գրանցված աշխատողներին, որոնք համավարակի պատճառով կորցրել էին իրենց աշխատանքը.

չգրանցված աշխատողներին ու ինքնազբաղ անձանց հատկացվող նպաստն անհամեմատ ավելի քիչ էր։ Կառավարությունն ընդունում էր, որ ստվերային աշխատողների ու ինքնազբաղ անձանց նույնականացման հետ կապված խնդիրն առկա է, քանի որ երկրում չկա եկամուտների համընդհանուր հայտարարագրման համակարգ և, ի վերջո, որոշեց աջակցությունն ուղղել ընտանիքներին՝ մի շարք ցուցիչների դիտարկմամբ, օրինակ՝ անչափահաս երեխայի առկայություն, կամ երբ երեխայի երկու ծնողն էլ համավարակից առաջ չեն ունեցել գրանցված աշխատանք։